

11-12(614-615)

18.05.2021

Հրատարակվում է  
1999թ. սեպտեմբերից

Ճանաչել զիմաստությունն և զխրատը, իմանալ զբանս հանճարոյ

# ԼՍՐԱՐԱՐ

Лусарар

ԿՐԹԱԳԻՏԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԹԵՐԹ

Lusarar

## ԿԱՆԽՈՐՈՔ ՀԱՂԹԱՆԱԿ ՏՈՆՈՂՆ Ի ՎԵՐՅՈՒ ՊԱՐՏՎՈՒՄ Է

Մենք միշտ էլ մայիս ամիսն անվաճել ենք հաղթանակների ամիս, և դրա տրամաբանական առանցքը Ավարայրը, Սարդարապատն ու Շուշին են եղել: Հիմա, երբ Շուշիում ժամանակավոր տիրություն են անում թուրքերը, արդյո՞ք մայիսը դադարել է հաղթանակների ամիս լինելուց:

Հարցը բավականին զգայուն է անցյալ տարվա ցավալի պարտության համապատկերին, սակայն մենք պետք է հարցին մոտենանք ոչ թե էնոցիոնալ մեկնակետից, այլ պատմական և աշխարհաքաղաքական գնահատականներից: Այս իմաստով Շուշին վերջին առնվազն երկու հարյուրամյակում տարբեր պատկանելություններ է ունեցել. այստեղ ժամանակին տիրություն են արել պարսիկները, թուրքերը, հայերը... Անշուշտ, անցյալ դարավերջից հնարավորություն էր ընձեռված հայոց հիմնավոր քեղաքաղաքը վերջնականապես իրական տերերիս ամրագրելու համար, սակայն իրադարձություններն անսպասելի ընթացք ստացան:

Ինչո՞ւ և ինչպե՞ս հանձնվեց Շուշին: Ստույգ պատասխանը թերևս կտա ժամանակը, որովհետև այն, ինչ տեղի է ունեցել անցյալ տարվա սեպտեմբերի 27-ից մինչև նոյեմբերի 9-ը, դուրս է ռազմաքաղաքական մեզ հասանելի չափումներից: Խոստովանենք, մենք հաղթանակի և այն պահպանելու մասին այլ չափումներով էինք դատում՝ մնալով ինքնավստահ ու ինքներս մեզանից գոհ: Մեղավորներ փնտրելը գուցե հեշտ է, հատկապես՝ պարտվածի հոգեբանական անկումների պարագայում, մինչդեռ մեզ պետք է մեր իսկ սխալներից անհրաժեշտ դասեր քաղելով՝ գործուն լավատեսությամբ նայել առաջ, ոչ թե անպտուղ դատափետել մեր կան: Իսկ «քարերը հավաքելու» ժամանակը դեռ կգա:

Շուշիում օրերս ազերաթուրքերը հրավառություն են կազմակերպել, այսպես կոչված, միջազգային երաժշտական փառատոնի բացման առիթով, ինչը ցավագին են ընդունել Ստեփանակերտում (և ոչ միայն): Փաստով տխրելը բնական է, բայց չմոռանանք, որ ավելի քան երկու տասնամյակ այնտեղ հայկական եռագույնի ներքո բազմաթիվ փառատոներ ու միջազգային նշանակության միջոցառումներ են կազմակերպվել՝ շարժելով Բաքվի հուսահատ զայրույթը: Ամեն սերունդ էլ ունենում է իր աստղային ժամը, և խնդիրը ճիշտ պահը որսալն ու օգտագործելն է: Հավատանք, որ եթե ոչ ներկա, ապա գալիք սերունդների համար այդ ժամանակը կգա, և Շուշիում կրկին կհնչի «Յարխուշտա»-ն:

Մայիսը եղել ու մնալու է հաղթանակների ամիս, քանզի դա գոյության ու պայքարի անտրոհելի պատգամ է: Ավարայրն էլ հիմա մերը չէ, սակայն այն չի դադարում հաղթանակի խորհրդանիշ լինելուց: Չմոռանանք՝ պատերազմը չի վերջացել, ընդամենը հրադադար է հայտարարվել:

Իսկ հին իմաստությունը հուշում է՝ կանխորոք հաղթանակ տոնողն ի վերջո պարտվում է:

«ԼՈՒՍԱՐԱՐ»

## ՀԱՂԹԵԼ ԵԻՔ, ՈՐՈՎՆԵՏԵՎ ԱԶԳ-ԲԱՆԱԿ ԵԻՔ ԴԱՐՉԵԼ



Չխախտելով ավանդույթը՝ մայիսյան հաղթանակների առթիվ հանրապետության ուսումնական հաստատություններում անցկացվեցին արհուրյան դասեր «Հարատև պայքար հանուն ապագայի» թեմայով: Արցախի մայր բուհում արհուրյան դասը վարել են ԱՅ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարար Լուսինե Ղարախանյանը և ՊԲ հրամանատարի ԱՅՍԱ գծով փոխնախարար Նորայր Մկրտչյանը:

- Եթե համեմատենք մեկ դար առաջ տեղի ունեցած իրադարձու-

թյունները այսօրվա հետ, ապա գրեթե ոչինչ չի փոխվել: Փոխվել են պայքարի միջոցները:

Կրթամշակութային համակարգը բացառիկ դեր է ունեցել հայ մտքի լուսավոր ընթացքի վրա, ու այսօր իմ խորին հանգստամբ՝ կրթության, գիտության, մշակույթի համակարգը ամենամեծ անելիքներն ունի: Մենք այսօր ապրում ենք պատմական ժամը ու դժվար ժամանակներ, բայց բոլոր կորուստներով ու տառապանքներով հանդերձ մենք պարտավոր ենք դիմակայել, պայքարել ու հեռահար ծրագրերով գնալ դեպի վերածնունդ:

Մեր հոգում ամրագրված է հարատևելու կամքը: Մենք վստահաբար վերածնվելու ենք: Սա է մեզ պատգամում մեր փառավոր մայիսը: Ես չեմ հրաժարվում մայիսի 9-ից և չեմ ուզում որևէ մեկը հրաժարվի, որովհետև փառքի մայիսը մեզ պատգամում է, դրդում է շարունակել և հասնել այն հանգրվանին, որին պատգամում են հասնել մեր ընկած տղաները: Մենք ունեցանք մայիսի 9-ը, քանի որ ունեցանք հայ ժողովրդի ուժերի լա-

րում, որն այս անգամ չկար: Հայրենիքի փրկության միահամուռ գիտակցված կամքը կար, կյանքի ու կռվի պատերազմում էլ կար: Մայիսի 9-ին հաղթել ենք, որովհետև ազգովի բանակ էինք դարձել. այն ժամանակ էլ անդառնալի կորուստներ ենք ունեցել, բայց մեզ սփոփել ենք, որովհետև կարողացել ենք պահպանել մեր ինքնությունը և պատմական հայրենիքը: Հիմա էլ կան մարդկային և տարածքային մեծ կորուստներ, բայց մենք պետք է զսպենք այդ կորստի ցավը մեր մեջ և առաջ գնանք: Հայ միտքն ու ոգին կորստի ու պարտության ցավը զսպած՝ պիտի գնան ամենակամ և ազգային ինքնահաղթահարման: Պետք է դուրս գանք «ես»-ի՝ մասնավորի նկրտումների սահմաններից և գնանք «մենք»-ի, որը կլինի մեր փրկության միակ ճանապարհը: Մենք դատապարտված ենք ապրելու բարբարոս կեցվածք, ընդամենը մեկդարյա պատմություն ունեցող, բայց քաղաքակրթական արժեքները ոչնչացնող և նեոգափոխող աղբբեռնաճիւղների կողքին: Արցախի մոտ 2000

հուշարձաններ գտնվում են թշնամու կողմից օկուպացված տարածքներում, ինչպես նաև 20000 թանգարանային նմուշներ: Մենք պետք է դիմակայենք թշնամու հակահայկական և հակաքրիստոնական պատերազմին», - ասել է Լ. Ղարախանյանը

Նույն օրը կայացած մամուլի ասուլիսում, խոսելով մայիսի 9-ին նախատեսված միջոցառումների կազմակերպման մասին, ԿԳՄՍ նախարարն ասել է.

- 100 տարի առաջ, երբ մենք ունեցել ենք բզկտված հայրենիք՝ տարածքային և մարդկային մեծ կորուստներով, համազգային նշանակության մտքերն ստեղծել են մեր մտավորականները: Մենք պետք է ժողովրդին տանենք ինքնաճանաչման: Ընկած տղաներն իսկապես ստիպում են, որ գնանք իմաստության, ինքնաճանաչման և դեպի այն հանգրվան, ուր մահվան աչքերին նայելով իրենք էին գնում: Մայիսի 9-ին տարիներ առաջ մենք հաղթել էինք, որովհետև մենք ազգ-բանակ էինք դարձել:

## ԱՐՃԱՆԸ ՄԵՆԱԿ ԶԷ



ԱՅ ԿԳՄՍ նախարար Լուսինե Ղարախանյանը մայիսի 2-ին մասնակցել է ելույթ է ունեցել Դիլիջանի միջազգային դպրոցում «Ավորա» մարդասիրական նախաձեռնության կողմից կազմակերպված «Գործընկերություն՝ հանուն Արցախի» համաժողովում: «Ներկայացրել են Արցախի կրթագիտական, մշակութային ու սպորտային կյանքի հետապետագման խնդիրները: Արդյունավետ քննարկումների արդյունքում ուրվագծել ենք կրթության ոլորտի ոչ միայն վերականգնման, այլև զարգացման տարբերակները: Հիմնական շեշտադրումը կլինի Արցախի կրթական մեկուսացման վերացումը, կրթության միջոցով Արցախը և Արցախի համայնքային կյանքը գրավիչ դարձնելը: Աշխատարանում քննարկվել են թշնամու կողմից օկուպացված տարածքների պատմամշակութային ժառանգության մոնիթորինգի, պահպանության ու հանրահռչակմանն ուղղված կոնկրետ ծրագրեր, սահմանվել առաջնահերթություններ ու գործողությունների պլան: Շնորհակալություն միջոցառման բոլոր կազմակերպիչներին: Արցախը մենակ չէ». այսպիսին է ԿԳՄՍ նախարարի զգացողությունը «Ավորա»-ից:

Տես՝ նաև էջ 2

## ՀԱՐԱՏԵՎԵԼՈՒ ԿԱՄՔՈՎ



ԱՅ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը մայիսի 11-ին Ստեփանակերտի Մեսրոպ Մաշտոցի անվան հ. 4 դպրոցում կազմակերպել է շարադրությունների մրցույթ՝ «Հարատևելու կամքը» խորագրով: Մրցույթին մասնակցել են Արցախի հանրակրթական դպրոցների 8-12-րդ դասարանների

աշակերտները՝ 64 հոգի: Յուրաքանչյուր դասարանի համար նախատեսված էր երեք թեմա, որոնք վիճակահանությամբ ընտրել են աշակերտները: Մասնակիցներից յուրաքանչյուրն իր մտորումներն է շարադրել «Կարտի կանչով», «Խոհեր ապագայի մասին», «Իմ Արցախ աշխարհ», «Իրիկնամուտի խոհեր», «Հայոց բա-

նակը», «Երագի թևերով», «Հավատում են», «Լավատեսություն», «Ինչ են դառնալու», «Մայր հողի կանչով», «Խոնարհված ծաղիկներ», «Մեր արևոտ լուսաբացը», «Խաղաղ երկինք», «Ուր են գնում», «Նամակ զինվորին» թեմաների շուրջ:

Այդ մասին ավելի հանգամանալից՝ «Լուսարար»-ի հաջորդ համարում:

ՄԻԱՆԱԿԱՆ ՈՒԺԵՐՈՎ

ԳՈՐԾՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ` ՀԱՆՈՒՆ ԱՐՑՄԱՆԻ

2020թ. պատերազմից հետո Արցախում վիճակը կայունացնելու, Արցախի ամրապնդելու և վերականգնելու համար անվտանգության, սոցիալական և տնտեսական խնդիրներից բացի հատուկ առաջնահերթություն են մարդկային ռեսուրսներն ու բարձրորակ մասնագետների ապահովումն Արցախում` տեղում մասնակցելու վերականգնման աշխատանքներին. Հայաստանի հանրային ռադիոյի հաղորդմամբ` այս եզրակացությանը եկան մայիսի 2-ին Գլխիչանի միջազգային դպրոցում տեղի ունեցած Aurora Dialogues «Գործընկերություն` հանուն Արցախի» խորագրով քննարկման մասնակիցները: «Ավրորա» մարդասիրական նախաձեռնությունը համախմբել էր «Ավրորան» Արցախին» ծրագրի գործընկերներին, տեղի և սփյուռքի կազմակերպություններին, հիմնադրամների, Արցախի պետական մարմինների և զանգվածային լրատվամիջոցների ներկայացուցիչներին: Ինչպես նշեց քննարկման մոդերատոր, Հայաստանի ամերիկյան համալսարանի Բիզնեսի և տնտեսագիտության քոլեջի դեկան Վաչե Գաբրիելյանը, այս հավաքն ավելի շատ կարիքների, կարողությունների քարտեզագրում էր` հասկանալու աշխատանքի ծավալը, ուղղություններն ու հնարավորությունները հետագա աշխատանքը կազմակերպելու համար:

«Սա կարեւորագույն միջոցառում է, որն արտահայտում է նաեւ «Ավրորա»-ի «Երախտագիտություն»-ի գործ» գաղափարը, երբ դժվարին պահին օգնություն ստացողներն օգնում են այլոց: Շատերը կարող են ունենալ գաղափարներ, չունենալ միջոցներ, ոճանք` միջոցներ, չունենալով գաղափարներ, ոճանք էլ տեղում կարող են ունենալ կարողություններ: Այստեղ կհամադրենք գաղափարներն ու կարողությունները: Սա զուտ միջոցառում չէ, այլ աշխատանքի մեկնարկ», - հայտարարեց Վաչե Գաբրիելյանը:

«Ավրորան» Արցախին» ծրագրի մեկնարկից ի վեր «Ավրորա» մարդասիրական նախաձեռնությունն արդեն մոտ 1,7 միլիոն ԱՄՆ դոլար (մոտ 880 մլն ՀՀ դրամ) է հատկացրել` աջակցելով տեղական և միջազգային գործընկերների կողմից իրագործվող 75 նախագծի Արցախում և Արցախի համար: «Ավրորա»-ն շարունակում է իր այս առաքելությունը և նտադիր է ընդլայնել իր գործունեությունը:

Ներկաներին ողջունելով` նախաձեռնության համահիմնադիր Ռուբեն Վարդանյանը խոսեց միասնական ուժերով Արցախը վերականգնելու և ավելի ուժեղ Արցախ ու Հայաստան կառուցելու մասին. «Ավրորա»-ի աջակցությունն Արցախին ոչ միայն նվիրաբերվող գումարներն են, այլև այն, որ մենք կամուրջ լինենք և պահենք այդ կամուրջը, որը մի կողմից մենք ենք, մեր հայկական ոգին, ինքնությունը, իսկ մյուս կողմից` աշխարհին միանալու ու միացնելու այդ կապը: Մենք պետք է ուժեղ երկիր կառուցենք: Ես վստահ եմ, որ կարող ենք»:

«Գործընկերություն հանուն Արցախի», սա ոչ միայն միջոցառման անունն է, այլև «Ավրորա»-ի գործունեության փիլիսոփայությունը: Երբ մենք ինչ-որ նախագիծ ենք սկսում, ամեն ինչ ամուսն ենք գործընկերների հետ: Երբ անցած աշնանն սկսվեց պատերազմը, «Ավրորա»-ի համահիմնադիրներն ամբիջապես արձագանքեցին և 1 մլն դոլար նվիրաբերեցին «Հայաստան» համահայկական հիմնադրամին: Պատերազմի ավարտից հետո «Ավրորա»-ն առաջիններից էր, որ հատկացրեց եւս 1 մլն դոլար պատերազմից տուժածների համար», - նկատեց «Ավրորա» մարդասիրական նախաձեռնության գործադիր տնօրեն Նիկոլա Ստանիշը:

Արցախի նախագահի աշխատակազմի դեկավար Արտակ Բեգլարյանը փաստեց, որ պատերազմի հետեւանքով կա 39 000 ներքին կամ բռնի տեղահանված անձ, որոնք այսօր անտուն են, գործ

ունենք 4 հազարից ավելի զոհվածների ընտանիքների, 10 հազար վիրավորների, անհետ կորածների, գերիների հետ, ինչն առաջ է բերում նաեւ հոգեկան առողջության լուրջ հարցեր: Այս խնդիրները և դրանց լուծումները հասկանալու համար որպես հարթակ նա կարեւորեց նախաձեռնած քննարկումը. «Ես` որպես արցախցի, որպես Արցախի կառավարության ներկայացուցիչ, շնորհակալ եմ, որ ձեր սիրտը բաբախում է հայրենիքի նաեւ այդ կտորի համար: Շնորհակալ եմ «Ավրորա»-ին և ներկաներին` Արցախին օգնելու իրենց ջանքերի համար»:

«Հայաստանում է գտնվում Արցախից տեղահանված 6300 ընտանիք` մոտ 25000 մարդ: Պետք է համախմբվենք և համախմբված կառուցենք տունդարձի ճանապարհը», - ավելացրեց ՀՀ-ում Արցախի կառավարության օպերատիվ շտաբի համակարգող Միքայել Կիրաբյանը:

«Շատ կարեւոր է այս հաթակն այն իմաստով, որ այն նաեւ հնարավորություն է տալիս մեզ բոլորիս քննարկելու կարիքները` անմիջական, միջնաժամկետ և երկարաժամկետ ժամանակահատվածում ու տեսնել, թե ինչպես կարող ենք համադրել մեր կարողությունները: Մենք ակտիվ քայլեր ենք ձեռնարկում, որպեսզի միջազգային կառույցները կարողանան ծրագրեր իրականացնել Արցախում», - իրենց կատարած քայլերի մասին խոսեց ՀՀ արտաքին գործերի նախարարի խորհրդակալ Կարեն Դադուրյանը:

«Գործընկերություն` հանուն Արցախի» միջոցառման ընթացքում կազմակերպվեցին ոլորտային չորս աշխատանքային խմբակներ, որտեղ մասնագետները քննարկեցին կարիքները ըստ ոլորտների և փորձեցին կազմել աշխատանքային քայլերի հաջորդականությունը: Աշխատանքներին առջամց միացան նաեւ առաջատար մասնագետներ աշխարհի տարբեր անկյուններից: Առողջապահության ոլորտի աշխատանքը վարում էր «Արաբկիր» բժշկական կենտրոն-Երեւանի և դեռահասների առողջության ինստիտուտի գիտական դեկավար, Կառավարման խորհրդի նախագահ Արա Բաբոյանը, կրթության և մշակույթին` «Ավրորան» Արցախին» ծրագրի դեկավար, Արցախի կրթության, գիտության և սպորտի նախկին նախարար Նարինե Աղաբալյանը, տնտեսական զարգացման թեմայով աշխատանքը վարում էր Արցախի նախագահի` զարգացման ծրագրերի գծով խորհրդակալ, Impact Hub Yerevan հիմնադրամի համահիմնադիր և խորհրդի նախագահ Վահե Քեուզգերյանը, իսկ սոցիալական հարցերին` Հայաստանի սոցիալական աշխատողների ասոցիացիայի նախագահ Միրա Անտոնյանը:

Չուզահեռ աշխատարաններում ներկայացվեցին Արցախում պատերազմի հետեւանքների գնահատման նպատակով իրականացված` Հայաստանի սոցիալական աշխատողների ասոցիացիայի հետազոտության նախնական արդյունքները:

«Մեր հետազոտությունը ցույց տվեց, որ այս պահին Հայաստանում գտնվող արցախցիների 30%-ը պատրաստ է հենց վաղը վերադառնալ Արցախ, 40%-ը պատրաստ է գնալ, եթե այնտեղ լինեն բնակության և այլ պայմաններ, միայն 30%-ն է, որ երկմտում է դեռ: Սա շատ լավ ցուցանիշ է», - նկատեց Միրա Անտոնյանը: Նա անդրադարձավ նաեւ սոցիալական հարցերի աշխատանքի քննարկումներին և կարեւորեց հատկապես տեղական կարողությունների զարգացումը, մասնագետների ներգրավումը Հայաստանից և Սփյուռքից, ինչպես նաեւ կադրերի պատրաստումը հենց Արցախում:

Առողջապահության աշխատանքի քննարկումներն ամփոփեց Արա Բաբոյանը` խնդիրներից առանձնացնելով հատկապես պատերազմի հետեւանքով մասնագիտական ներուժի կորուստն ու

ենթակառուցվածքներին հասցված վնասը, ինչպես նաեւ կարեւորեց համախմբված քննարկումները. «Ավրորա»-ն հնարավորություն տվեց, որ իրար ճանաչեն հիմնական կազմակերպությունները, որոնք աշխատել են Արցախի համար, որպեսզի նրանք շարունակեն աշխատել համագործակցելով: Դրա համար ստեղծվեց նախարարությանը կից մի համակարգող խորհուրդ, որը պետք է մի կողմից օգնի մշակել ռազմավարություն առողջապահության զարգացման համար, մյուս կողմից օգնի համակարգել այն ամբողջ օգնությունը, որը պետք է տրամադրվի Արցախին` կարճաժամկետ և երկարաժամկետ առումով»:

Տնտեսական զարգացման աշխատանքում մոդերատոր Վահե Քեուզգերյանը և մասնակիցները նախաձեռնեցին էին մի քանի ոլորտներ, որոնց շուրջ էլ ընթացան քննարկումները` արտադրություն, գյուղատնտեսություն, սոցիալական ծեռներեցություն, քաղաքաշինություն, ենթակառուցվածքների տարածքային կառավարում: Պարոն Քեուզգերյանն առանձնացրեց Արցախի տնտեսության վերականգնման և զարգացման հնարավորություններից մի քանիսը. «Թեթե արդյունաբերության մասով, օրինակ` կան կարի արտադրամասեր, եւ մեր առաջնահերթությունը դրանց աշխատանքը վերականգնելն է: Մեզ հուզող հարցերից է նաեւ գործի արտադրությունը, որ եղել է մեզ մոտ հազարավոր տարիներ, բայց հիմա գործարան ունենք միայն Ստեփանակերտում, որտեղ վաթսուն մարդ է աշխատում: Սա գրեթե կորած մշակույթ է, որը պարտադիր վերականգնելու ենք»:

Կրթության և մշակույթի թեմայով աշխատանքում մոդերատոր Նարինե Աղաբալյանն ու մասնակիցներն օրակարգ բերեցին աղբբջանական վերահսկողության տակ անցած հայկական մշակութային ժառանգությունը ոչնչացումից փրկելու խնդիրը, կրթության համակարգային փոփոխություններին, ֆորմալ և ոչ ֆորմալ կրթության ճիշտ համադրման, կրթությունը և գիտությունը տնտեսության կարիքներին համապատասխանեցնելու, մարդկային կապիտալի հզորացման անհրաժեշտությունը և այլն: Այս բոլոր քննարկումները մանրամասն արձանագրվեցին, որոնց շուրջ աշխատանքը կշարունակվի նաեւ հետագայում:

«Այս քննարկումներն ուղղված էին ոչ միայն պատերազմի հետեւանքները մեղմելուն կամ վերացնելուն, այլև ապագայի տեսլականի ձևավորմանը, ինչը շատ կարեւոր է: Եթե մենք խոսում ենք Արցախը վերականգնելու և ուժեղացնելու մասին, մենք անպայման պետք է նայենք ապագային և այդ տեսանկյունները պետք է տանք այնտեղ ապրող մարդկանց», - նշեց Նարինե Աղաբալյանը:

«Գործընկերություն` հանուն Արցախի» միջոցառման մասնակիցներին հեռավար միացում էր Բուստոնից ողջունեց «Ավրորա» մարդասիրական նախաձեռնության համահիմնադիր Նուբար Աֆեյանը: Թե՛ նա և թե՛ Ռուբեն Վարդանյանն իրենց խոսքում հիշեցին ու մեջբերեցին նաեւ «Ավրորա»-ի համահիմնադիր Վարդան Գրեգորյանին, որը վերջերս հեռացավ կյանքից:

«Վստահ ենք, որ այս միջոցառումը կնպաստի հետագայում մեր առաքելությունն առավել արդյունավետ իրականացնելու: Ինչպես նշել են տարբեր առիթներով, եթե այսօր միասին չստեղծենք մեր ապագան, տարիներ հետո ուշ կլինի: Այսօր դժվար է հավատալ, որ Վարդան Գրեգորյանը մեզ հետ չէ, եւ ես ուզում եմ իմ խոսքն ավարտել նրա բաներով. «Վերապրելու հետ առաջանում է պատասխանատվություն, իսկ պատասխանատվությունը գործողություն է, այլ ոչ թե սոսկ բառեր»: Այսօր բոլորս պատասխանատու ենք», - ասաց Նուբար Աֆեյանը:

ՌՈՒԲԵՆ ՎԱՐԴԱՆՅԱՆԸ ՀՅՈՒՐԵՆԿԱԿԵՑ ԱՐԴՎՈՒՄ



Մայիսի 5-ին Արցախի պետական համալսարան է այցելել «Ավրորա» մարդասիրական կազմակերպության համահիմնադիր, գործարար, բարերար Ռուբեն Վարդանյանը և հանդիպում ունեցել պրոֆեսորադասախոսական կազմի և ուսանողության հետ:

Հանդիպման ընթացքում Ռուբեն Վարդանյանը ներկայացրել է «Ավրորա» մարդասիրական կազմակերպության առաքելությունը, նպատակը, Արցախում իրականացված և իրականացվելիք ծրագրերը: Նա ներկայացրել է նաև The FUTURE ARMENIAN («Ապագա հայկականը») հանրային նախաձեռնությունը, որի նպատակն է ստեղծել Հայաստանի և հայության կայուն զարգացման շուրջ համընդհանուր փոխըմբռնում` ուսանողությանը կոչ անելով ներգրավվել նախաձեռնությանը: Ռ. Վարդանյանի խոսքով` «Ապագա հայկականը» նախաձեռնությունը չունի քաղաքական նպատակներ ու հավակնություններ, այն նպատակ ունի խթանել բաց հանրային դիսկուրս` ընտրելու ապագա, որը կոգեշնչի ու կներգրավի Հայաստանի և համայն հայության հավաքական ներուժը:

Նախաձեռնության 15 նպատակների մեջ են մտնում` տեսլականի սահմանում, երաշխավորված պետականություն, պատմական պատասխանատվություն, Ազատ Արցախ, Հայաստան-Սփյուռք միասնականություն, ուժեղ Սփյուռք, ուժեղ դաշինքներ, հարաճում, բնակչության աճ, կրթության զերազանցություն, գիտության, տեխնոլոգիաների և ստեղծագործականության զերակայություն, ողջամիտ կառավարում, արդար հասարակություն և նվազեցված անհավասարություններ, ժառանգության պահպանում, փաստերի վրա հիմնված որոշումների կայացում:

Ռ. Վարդանյանը նշեց, որ ծրագրերի իրականացման հիմքում մոր գաղափարներն են, մոր մտածելակերպ դաշտ բերելը:

Խոսելով պատերազմից հետո ստեղծված իրավիճակից` թվարկել է բաց թողնված սխալները և մատնանշել այդ սխալները շտկելու ուղիները` կրթություն, գիտելիք, աշխատանք, ուժ և ներքին ուժի բացահայտում:

«Այն ներքին մեծ ուժը, որ ունեն արցախցիները, պետք է վերագտնեն (դա է առաջ շարժվելու բանաձևը) ու առաջ շարժվեն: Արցախը պիտի մնա հայկական: Եթե կորցնենք Արցախը, կկորցնենք հայ ազգը», - նշել է նա` համոզմունք հայտնելով Արցախի լավ ապագայի մասին և իր պատրաստականությունը հայտնել Արցախին տարբեր ծրագրերով աջակցելու հարցում:

Ռուբեն Վարդանյանը պատասխանել է նաև ներկաների հարցերին:

ԱրՊՀ ղեկավար Արմեն Սարգսյանը, շնորհակալություն հայտնելով բանախոսին` Արցախի պետական համալսարան այցելելու և հայրենանվեր գործունեության համար, Ռուբեն Վարդանյանին և «Ավրորա» մարդասիրական կազմակերպության արցախյան ծրագրերի համակարգող, ԱՀ ԿԳՍ նախկին նախարար Նարինե Աղաբալյանին պարգևատրել է ԱրՊՀ 50-ամյակի հուշանշանով:

ԸՆԹԱՑԸ

ԱՅ ԿԳՄՍ ՆԱԽԱՐԱՐԻ ՀԱՆԴԻՊՈՒՄԸ ՈՒՐՈՏԻ ՏԵՂԱՀԱՆՎԱԾ ՆԵՐԿԱՅԱՑՈՒԹՅՆԵՐԻ ՀԵՏ



հստակ լուծումներ կտրվեն 33-ում ուսումնական գործընթացից դուրս մնացած, կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների կրթության կազմակերպմանն առնչվող խնդիրներին:

- Օպերատիվ շտաբում կրթության ոլորտի աշխատակիցների կատարած աշխատանքների շնորհիվ մենք կարողանում ենք մոտ գտնվել տեղահանված ուսուցչության, ուսանողության ու աշակերտության խնդիրներին և հնարավոր լուծումներ տալ: Կրթության համակարգի բոլոր խնդիրները պետք է բերվեն տեսանելի դաշտ, - ասաց Լ. Ղարախանյանը:

Մինչ կրթության, մշակույթի և սպորտի ոլորտների աշխատակիցներին հանդիպելը Լ. Ղարախանյանը գրույց ունեցավ 33-ում ԱՅ

օպերատիվ շտաբի պետ Միքայել Վիրաբյանի հետ: Քննարկվել են տեղահանված արցախցիների համար կրթական համակարգում առաջացած խնդիրները, լուծման համար նախատեսվող ծրագրերը: Շտաբի պետի հետ գրույցում Լ. Ղարախանյանը ներկայացրել է տեղահանված ուսուցիչների և ընդհանրապես, դպրոցների տեխնիկական, ուսումնաօժանդակ կազմին երևանում ու 33 մարզերում աշխատանքով ապահովելու ուղղությամբ նախատեսվող կրթական ծրագրերը և բոլոր այն աշխատանքները, որոնք կատարվում են ԱՅ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության հետ՝ տեղահանված ուսուցիչներին Արցախում վերաբնակեցնելու ու նրանց հետագա գործունեությունը կազմակերպելու համար: Հանդիպման վերջում ուսուցիչների կողմից հնչեցին հարցեր, առաջարկներ: ԱՅ ԿԳՄՍ նախարարը վստահեցրել է՝ բարձրացված բոլոր հարցերը կքննարկվեն, կստանան պատասխան:

Ջոհրաբ ԸՈՔՈՅԱԼ

Օրերս աշխատանքային այցով երևանում գտնվող ԱՅ ԿԳՄՍ նախարար Լուսինե Ղարախանյանը 33-ում Արցախի Հանրապետության օպերատիվ շտաբում հանդիպում ունեցավ ԱՅ շրջանների կրթության, մշակույթի և սպորտի բաժինների վարիչների, տնօրենների ու տեղահանված ուսուցչության հետ: Հանդիպման ընթացքում նախարարը ներկայացրեց 33 ԿԳՄՍ-ի և իր ղեկավարած նախա-

րարություններում մշակված ծրագրերը կրթամշակութային, սպորտային ոլորտների տեղահանված ներկայացուցիչներին աշխատանքով ապահովելու ուղղությամբ: Իր ֆեսթիվալային շնորհակալությունները արտահայտեց Լ. Ղարախանյանը:

Լ. Ղարախանյանը տեղեկություններ տվեց ԱՅ տարածքում ներկայումս գործող կրթօջախների վերաբերյալ: Հանդիպումը կարևորվեց նաև նրանով, որ առաջիկայում

ՈՐԲԱՆ ԴԻՄՈՐԴ Է ՀԱՅՏԱԳՐՎԵԼ

Մայիսի 10-ին ավարտվեց բուհերի ընդունելության և մասնագիտությունների ցանկի՝ դիմորդների հայտագրման գործընթացը, որը սկսվել էր ապրիլի 15-ից: Ինչպես տեղեկացնում է ԱՅ գնահատման և թեստավորման կենտրոնի տնօրեն Յուրի Քարամյանը, ունենք 619 դիմորդ (33 բուհերի առանձին մրցույթով՝ 85, ԱՅ ԳԹԿ մրցույթով՝ 534): Շուրջ 31 տոկոսը հայտագրվել է 33 բուհերում՝ Արցախի հատկացված նպատակային տեղերով և ընդհանուր հիմունքներով ընդունելության քննություններին մասնակցելու համար: Նրանցից 121-ը հայտագրվել է նպատակային տեղերի (60 ամվճար և 30 վճարովի), 68-ը՝ ոչ նպատակային տեղերի համար:

Այս տարի էլ մեծ թիվ են կազմում «Բուժական գործ» մասնագիտության դիմորդները՝ 8 ամվճար և 7 վճարովի տեղերի համար՝ 47 հոգի: Մրցույթ է լինելու «Շուկայագիտություն»՝ ընդհանուր 3 տեղի համար՝ 12, «Տեղեկատվական անվտանգություն» (8), «Ինֆորմատիկա և կիրառական մաթեմատիկա» (7), «Միջազգային հարաբերություններ» (5) մասնագիտություններում, կոմերցիոնալ տրիբյալում (10):

33 բուհերում Արցախի հատկացված տեղերով մասնագիտություններ կան, որոնցում դիմորդներ չեն հայտագրվել («Ազարախյան», «Էներգետիկա», «Մեքենաշինություն», «Ջերմագազամատակարարում», «Շենքերի նախագծում»):

Արցախի պետական համալսարան դիմել է 350 հոգի: Այստեղ մեծ քանակ են կազմում «Անգլերեն լեզու» (48), «Իրավագիտություն» (42), «Տեղեկատվական տեխնոլոգիաներ» (41), «Հայոց լեզու և գրականություն» (39), «Ֆինանսներ» (38) մասնագիտությունների դիմորդները:

Մյուս բուհերի համար ևս հայտագրվածներ կան. Շուշիի տեխնոլոգիական համալսարան՝ 25 հոգի, «Մեսրոպ Մաշտոց»՝ 32, «Գրիգոր Նարեկացի»՝ 18, «Գյուլոջյան» կիրառական արվեստի ինստիտուտ՝ 6:

ԳԹԿ տնօրենը տեղեկացրեց, որ պատրաստվում են քննական կենտրոնների ձևավորմանը: Նախատեսվել են 5 քննական կենտրոն Ստեփանակերտի հ.հ. 1, 2, 6, 7, 8 դպրոցներում:

ԱՐՉԱՄԻ ԹԻՄԸ ՀԱՂԹԵՑ ԴԱՏԱՆԻ ՔԻՄԻԿՈՍՏԵՐԻ ՄՐՉԱՆԱՐՈՒՄ

Մայիսի 9-ին ամփոփվեց Պատանի քիմիկոսների մրցաշարի եզրափակիչը: Հաղթող ճանաչվեց Արցախի «Մոնթեթերոզ» թիմը՝ հավաքելով 275 միավոր: Եզրափակիչ փուլում էին նաև ԵՊԲՀ ավագ դպրոցի «Հերացի», «Հելիոն», «Օգանեստ» թիմերը, որոնցից «Հերացին» զբաղեցրեց երկրորդ տեղը, իսկ «Հելիոնը»՝ երրորդը:

«Այբ» կրթական հիմնադրամը կազմակերպում է և՛ աշակերտների, և՛ ուսանողների հայկական քիմիական մրցաշարերը, որոնք նպատակ ունեն խթանելու գիտատեխնիկական առարկաների հանդեպ հետաքրքրությունը աշակերտների ու երիտասարդների շրջանում: Այսօր մեր երկրում հատկապես մեծ է բնագիտական ուղղության զարգացման պահանջը՝ որպես մի քանի կարևոր ոլորտների հիմքի, որ պետք է դրվի հենց դպրոցում:

Պատանի քիմիկոսների մրցաշարն օգնում է աշակերտներին սովորելու հետաքրքիր ձևով ներկայացնել խնդիրների լուծման իրենց տարբերակները՝ հմտանալով գիտական գեկույց ներկայացնելու և ընդդիմախոսելու մեջ: Մրցաշարը նպաստում է միջհամայնքային կապերի ամրապնդմանը, ինչպես նաև խորացնում է կրթություն-գիտություն-աշխատանքային կապը:

Բացի թիմային մրցանակներից շնորհվեցին նաև անհատական մրցանակներ «Լավագույն զեկուցող», «Լավագույն գրախոս», «Լավագույն ընդդիմախոս» և «Լավագույն ավագ» անվանակարգերում: Իսկ ԵՊՀ ֆիզիկական և կոլորիդների քի-



միայի ամբիոնի պրոֆեսոր Օլեգ Քամայանը հաղթող թիմին նվիրեց Մենդելեևի պարբերական աղյուսակը՝ Յուրի Հովհաննիսյանի մակագրությամբ: Վերջինիս անունով է կոչվել պարբերական աղյուսակի 118-րդ տարրը՝ օգանեստը:

Մրցաշարի կայացման մեջ մեծ ներդրում ունեն Պատանի քիմիկոսների մրցաշարի հովանավոր «Պրոֆիտոլոգ» և «Նաիրիան» ընկերությունները: Սա վկայում է, որ մասնավոր ընկերությունները կարող են մեծ ներդրում ունենալ գիտական մտքի զարգացման ու դրա գործնական արտահայտման մեջ:

Մայիսի 9-ին Արցախի թիմը դրեց ապագայի կառուցման գիտական կարևոր հիմքերից մեկը:

ԱՅԲՈՒԲԵՆԻ ՏՈՆ



Լեզուն է ամեն մի ժողովրդի ազգային գոյության ու էության ամենախոշոր փաստը, ինքնուրույնության ու հեռավոր անցյալի կախարդական բանալին, հոգեկան կարողությունների ամենաճոխ գանձարանը, հոգին ու հոգեբանությունը

Հովհ. Թումանյան

Մեր հայ լեզուն, մեր մայրենին մեր ինքնապահպանության, բոլոր ժամանակների մեր հզորության աղբյուրն է:

Այբուբենին նվիրված հանդեսը սովորական ցերեկույթ չէ, այլ այբուբենի հանդեպ հիացումի, ակնածանքի հանդիսություն, որը երեխաների սրտին ու գիտակցությանն է հասցնում մայրենիի դերը, մշակութայինը, ոգին:

Կյանքը մինչև պատերազմը և պատերազմից հետո շատ է փոխվել: Ծանր ժամանակներ ենք ապրում: Տեսանք, թե ինչպես մեր գոյության պահպանման համար մղված պատերազմում մի ամբողջ անձնագրի ու հայրենապաշտ սերունդ 44 օր շարունակ հերոսական պայքար մղեց թվով մի քանի անգամ գերազանցող, գերթամանակակից զինատեսակներով սպառազինված թշնամու դեմ, տեսանք, թե ինչպես այս լուսավոր դարում ամբողջ աշխարհի անտարբեր աչքի առաջ մեր հայրենակիցների արյունը անպատիժ հոսեց: Ցավոք, ունեցանք անդառնալի կորուստներ, խեղված ճակատագրեր:

Մենք պարտավորություն ունենք մեր բոլոր գոհերի առաջ: Պարտավոր ենք և՛ մեր անցյալը հիշել, և՛ ներկայումս ինչ հնարավոր է՝ անել, և՛ հող նախապատրաստել հետագա հաղթանակների համար:

Փոքրիկ արցախցիները՝ մեր ապագայի ծիլերը, այսօր պետք է լիարժեք ստանան անհրաժեշտ գիտելիքներ, մտավոր, հոգևոր, ֆիզիկական ունակությունների դրսևորման ու զարգացման համար բարենպաստ պայմաններ:

Մեր դպրոցի առաջին դասարանցիներն արդեն սովորել են այբուբենի բոլոր տառերը, կարողանում են կարդալ, գրել: Երեխաների կյանքի այս առաջին մեծ ձեռքբերումը, ավանդույթի համա-

ձայն, մեր դպրոցում միշտ տոնական միջոցառումով է նշվել: Այս տարի ևս բացառություն չարվեց: Հենվելով իր մասնագիտական հարուստ գիտելիքների ու փորձի վրա՝ ընկեր Ասրյանը փոքրիկ արցախցիների համար հետաքրքիր ու բովանդակալից միջոցառում կազմակերպեց: Փոքրիկները նախ իրար շարունակելով գրատախտակին գրեցին «Հրաժեշտ Այբբենարանին», ապա հանդես եկան գեղեցիկ ասմունքով, մայրիկներին, մայրենի լեզվին նվիրված բանաստեղծություններով:

Ընկեր Ասրյանը շնորհավորանքի իր խոսքում անդրադարձավ նաև մեր սրբությունների՝ հայրենի հողի, լեզվի ու մշակույթի պաշտպանությանը՝ աշակերտներին պարտավորեցնելով իրենց գիտելիքներով, վարք ու բարքով դառնալ հոգով ու մտքով առողջ, ուժեղ, արժանապատիվ: Որպես գիտելիքների աշխարհի մուտք գործելու խորհրդանիշ՝ փոքրիկներին հանձնվեցին բանալիներ:

Մեր հավերժության ճամփան այբուբենն է: Սիրենք և անաղարտ պահենք մեր Հայոց լեզուն:

Շնորհավորանքի և շնորհակալության խոսքով հանդես եկան նաև ծնողները:

Սուսաննա ԳՐԻԳՈՐՅԱՆ  
Հացու հիմնական դպրոցի  
վրտեսն

ՄԻԱՍՆԱԿԱՆ ԵՎ ՆԵՐԲՈՒՐՅԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ

Առարկա	Քննության անցկացման օր
Կենսաբանություն	08. 06. 2021թ.
Աշխարհագրություն	08. 06. 2021թ.
Անգլերեն	11. 06. 2021թ.
Հայոց լեզու և հայ գրականություն	15. 06. 2021թ.
Մաթեմատիկա	18. 06. 2021թ.
Հայոց պատմություն	22. 06. 2021թ.
Ֆիզիկա	22. 06. 2021թ.
Քիմիա	25. 06. 2021թ.
Ռուսաց լեզու	25. 06. 2021թ.

Առարկա	Քննության անցկացման օր
ՆԶՊ	01. 07. 2021թ.
ԸՖՊ	06. 07. 2021թ.
Մասնագիտական	02. 07. 2021թ.
ՆԿ	29. 06. 2021թ.
ԳԾ	05. 07. 2021թ.
Կոմպոզիցիա	30. 06. 2021թ.
ԳԾՆ և ԳՆ	07. 07. 2021թ.





ԱԶԳԱՅԻՆ

ԲԱՎԱԿԱՆ Է ՊԱՐՏՈՒԹՅԱՆ ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԲԱՐԴՈՒՅԹՈՎ ՎԱՐԱԿԵՔ ՊԱՅՔԱՐԻ ԵՎ ՀԱՂԹԱՆԱԿԻ ՈՒՆԱԿ ՄԵՐ ԺՈՂՈՎՐԴԻՆ



Այն, որ պատերազմում պարտվելը խորը հոգեբանական, ֆիզիկական հետք է թողնում հասարակության մեջ, պարզ ու տեսանելի է: Սակայն մյուս կողմից այդ նույն հասարակության մեջ նույնիսկ ենթագիտակցորեն, անհրաժեշտաբար պետք է առաջանա նոր հաղթանակի ցանկություն, մտփվածացիա՝ հատկապես, երբ խոսքը գնում է դարավոր և նմանը չունեցող թշնամու մասին...

Ի՞նչ է պատահել հայ ժողովրդի հետ, ի վերջո, լեթարգիական քնից նա արթնանալու է, թե՞ ոչ: Ամիսներ շարունակ արցախյան ճակատում կրած պարտությունից հետո փոխանակ տեղի ունենար դրա բարոյափոխության հետևանքները հնարավորինս շուտ թթափելու, դրանցից ազատվելու համազգային ռեաբիլիտացիոն-վերականգնողական գործընթաց, և իրականացվեին դրան միտված նպատակային միջոցառումներ, որոնց շնորհիվ ազգը կրկին կհայտնվեր պայքարի պետականապաշտ ծիրում, ականատեսն ենք անհմաստ, անտեղի քայլերի, որոնք ոչ մի աղերս չունեն ազգային պայքարի և ոգու վերականգնման ու վերահաստատման հետ:

Ամիսներ շարունակ խոսվում էր Սյունիքի մասին, փոխանակ հենց պատերազմի ավար-

տից անմիջապես հետո հատուկ «գորակոչով» սկսվել պարագծով ավելի երկարացված ու ավելի բարդ ռեյիեֆով պետական սահմանի կահավորման գործընթացը: Դրա փոխարեն ակտիվորեն շրջանառվում է նոր զինվորական հագուստի թեման:

Վերջապես ինչքա՞ն կարելի է խաղալ ժողովրդի հոգու ամենամուրբ լարերի հետ: Ոչ մեկի համար այլևս գաղտնիք չէ, որ ունենք վախկոտ, արհեստավարժության հետ ոչ մի աղերս չունեցող իշխանություն, որը նույնիսկ դառն պարտությունից ի վիճակի չէ դասեր քաղելու...

Ի՞նչ է նշանակում օրը ցերեկով Սև լճի մերձակայքում մոտ 5 կմ խորությամբ ներխուժել 33 սուվերեն տարածք: Դա նախ նշանակում է ամենաթողություն, որը և ավելի է մեծացնում պարտվողի, թուլի, անօգնականի, անզորի զգացողությունը հասարակության մեջ:

Այսպես շարունակվել ավելի է մոտեցնում մեր պետականության ու անկախության վերջի սկիզբը: Լավ, ինչքա՞ն տհաս պետք է լինել, որ ունենալով հարյուրավոր գերիներ և չունենալով նրանց հետ բերելու ոչ մի գործում մեխանիզմ, ձեռքից բաց թողնես քո պետության սահմանը հատած հարյուրավոր ազերի սահմանախախտներին իսկույն ձերբակալելու հնարավորությունը: Զե՞ որ աշխարհում գործող բոլոր օրենքների համաձայն դա քաբիտատիկ ճշմարտություն ու նորմ է, և առանց դույզն-իսկ կասկածի, շատ արագ այն պետք է իրականացվեր, ու կազմակերպվեր նրանց փոխանակումը մեր տղաների հետ:

Ինչքա՞ն կառավարելու ունակությունից զուրկ և ռազմական գործից հեռու պետք է լինել, որ քո պետական սահմանը խախտեն, իսկ դու փոխանակ առաջին ու կոնկրետ քայլերը կատարելու, միայն երկու օր անցնելուց հետո դիմես ԶԱՊԿ և հատուկ օգնություն խնդրես ռազմավարական դաշնակից ՌԴ-ից:

Այս ամենը բացարձակ անիշխանության, քառսի, արհեստավարժության պակասով միայն կարելի է բացատրել: Սակայն ավելի ահավոր է ժողովրդի մեջ ահագնացող վախի, անկարողության, պայքարից խուսա տալու զգացողությունների արմատավորումը, որից ազատվելը բավականին բարդ կլինի, ու

առանց երկմտելու կարելի է ասել, որ նման տարածաշրջանում, նման պայմաններում, որպես պետություն մեր դերն ու նշանակությունը ամբողջովին կկորցնենք:

Տասնամյակներ շարունակ 33 և Ա3 ուժային կառույցները հեղինակություն են վայելել ժողովրդի մեջ և իրավամբ համարվել են այստեղ մեր լինելության հիմնական երաշխավորը: Եղել են սխալներ, բանակաշինության գործընթացում գիտատեխնոլոգիական բաղադրիչն ինչ-որ չափով անտեսվել է, բայց մեր բանակը երբևէ պայքարի ոգին չի կորցրել: Իսկ հիմա, կարծես, մտածված ձևով ոչ միայն չի բարձրացվում բանակի սպառազինության մակարդակն ու ոգին, այլև, կարծես, ընդմիշտ մոռացել ենք նաև ռազմահայրենասիրական դաստիարակության մասին...

Յոթն օր պատերազմից անմիջապես հետո մեր կրթության համակարգում ամենաառաջնային ու պահանջված բարեփոխումը պետք է վերաբերեր կրթական հաստատություններում ռազմական պատրաստվածության, ռազմագիտության հիմունքների արդյունավետ ուսումնասիրմանը և այդ ուսումնական առարկայի դասավանդման վիճակի հետագա բարելավմանը: Մենք առանց վարանելու կրթությունը ընդհանրապես, ու մասնավորապես նրա բնագիտական, տեխնիկական, տեխնոլոգիական, ռազմական բաղադրիչները պետք է համարենք ազգային անվտանգության կարևոր հենասյուններից մեկը...

Դրա փոխարեն կրկին մեծն պոպուլիստը ի լուր ամենքի հայտարարում է բանակային ծառայության բարեփոխման խիստ ականջահաճո և հնարավոր նորույթը, որի համաձայն, հինգ տարին մեկ երկու-երեք ամսով զինվորական հավաքներ կլինեն:

Դժբախտաբար, սա է մեր իրականությունը, և այն ամեն զնով պետք է փոխել ու կրկին մտցնել պետականամետ ծիրի մեջ:

**Կառն ԱԹԱՅԱԼ**  
**Մանկավարժական**  
**գիտությունների դոկտոր, պրոֆեսոր**  
**Aysor.am**

ՀՐԱՆՏ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ Մ Ի Տ Զ

Սա Հայաստանի՝ Կովկասում մնալ-չմնալու հարցն է: Եթե մենք ուզում ենք լինել Կովկասի իրավահավասար ազգերից մեկը, մենք պարտավոր ենք չպարտվել, պարտվելու իրավունք չունենք և պիտի չպարտվենք:

Ինչ-որ մի ժամանակ մենք խաբվեցինք, թե թուրքերի փոխարեն բավարարված կլինի Արևմտյան Հայաստանը կլելով, բայց չէ... Էնքան խաբված մնացինք, մինչև որ էնտերի դեմոկրատները, մտավորականներն իրենց խոսքն ասացին, թե Ղարաբաղն Ադրբեյջանին է...

...Նրանք, արդյո՞ք, կարող են համոզել, որ Ղարաբաղն իմ ու քո հողը չէ, որ Ղարաբաղն իմ կեսը չէ: Ղարաբաղն իմ պրոբլեմն է, Ղարաբաղն իմ հողն է, Ղարաբաղից չի կարելի հրաժարվել, եթե նույնիսկ թուրքի ետևում ով ասես կանգնած լինի...

...Փողոցում ողբերգություն է ծավալվում, պատմական վեպ է ծավալվում, երանի նրանց, ովքեր առողջ աչքեր ունեն և կարողանում են կարդալ...

**5.05.1991թ.** Լույս 6-ի գիշերը խորհրդային զորքերը պատժիչ գործողություններ են իրականացրել Հայաստանի հյուսիսում, սպանվել են 18 հայեր, որի մասին մանրամասն գրել է Թաթուլ Հակոբյանը իր «Արցախյան օրագիր. կանաչ ու սև» գրքում:

1991թ. Լևոն Տեր-Պետրոսյանի այցը Մոսկվա և բանակցությունները Գորբաչովի ու Մուրալի-բովի հետ չեն կանխում հայերի արտաքսումն իրենց բնակավայրերից: Խորհրդային զորքերը պատժիչ գործողություններ են իրականացնում Հայաստանի հյուսիսում:

Մայիսի 5-ի Լույս 6-ի գիշերն արդեն մեկ շաբաթ շրջափակված Ոսկեպար գյուղում սպանվում են 18 հայեր, հիմնականում՝ ոստիկաններ, մի քանիսը գերվում, վիրավորներից 3-ը մահանում են Գյանջայի բանտում: 1991թ. մայիսին Մոսկվայի Մանեթնայա հրապարակում ՌՍՖՍՀ պատգամավոր Անատոլի Շաբադը, որը մի քանի օր առաջ գտնվում էր Ոսկեպարում և եղեռնագործության ակնմատեսն էր, ասել է, որ կատարվածը Կենտրոնի և Ադրբեյջանի կառավարության նախօրոք ծրագրած գործողություն էր: Խորհրդային զորքերն իրականացրել են ահաբեկչություն, սպանել ու զինաթափել հայ ոստիկաններին: Խորհրդային ուժայինները Ոսկեպարի կամավորական խմբավորումներին զինաթափելու պատրվակով շրջափակում են գյուղը: Ոստիկանության նախկին աշխատակից Քոչարյանը բերվել է Գյանջայի բանտ, պահվել 101 օր: Նոյեմբերյանի ոստիկանության անձնակազմը՝ 18 մարդ և 6-ը քաղաքա-

ցիական, մեկնում է հերթափոխի: Շրջափակված Ոսկեպարը հնարավոր էր շրջանցել միայն լեռներով: Խորհրդային զորքերը դարանակալեցին ու հերթափոխը վերցրին շրջափակման մեջ: Գրոհայինները հարձակման են անցնում: Միլիցիայի մեծ մասին սպանելուց հետո ողջ մնացածներին խորհրդային ուժերը տալիս են օժտին՝ հաստատ իմանալով, թե ինչ ճակատագիր կունենան նրանք: Օժտնականները նրանց վիրավորների հետ ուղարկում են Ղազախի, այնուհետև՝ Գյանջայի բանտ և 3 ամիս շարունակ անընդհատ ծեծի են ենթարկում:

ԽՍՀՄ Գերագույն խորհուրդը 1991թ. մայիսի 6-ին քննարկեց Հայաստանի պահանջը ԼՂԻՄ-ում տիրող իրադրության և ադրբեյջանահայկական հարաբերությունների կտրուկ սրման, ԽՍՀՄ ժողպատգամավորների համազուգուր հրավիրելու մասին: Բայց որոշվեց հիմնախնդրի քննարկումները շարունակել ԽՍՀՄ ԳԽ Ազգությունների խորհրդի հանձնաժողովում, մինչդեռ նույն օրը Գետաշենից ռազմական ուղղաթիռներով Ստեփանակերտ տեղափոխեցին 700 հայ փախստականների:

**7.05.1991թ.** Հասարակական կազմակերպությունների կողմից որոշվեց Ստեփանակերտում անցկացնել բողոքի հանրահավաք, սակայն զինվորական պարետության կողմից արգելվեց: Քաղաքով մեկ շրջող զրահամեքենաները բարձրախոսներով ժողովրդին իրազեկ դարձրին, թե անհնազանդության դեպքում զենք է կիրառվելու, և հանրահավաքը չկայացավ: Հաղթանակի օրն էր մոտենում, բայց

դրությունը քանի գնում, սրվում էր: Բանը հասավ նրան, որ մարզի ղեկավարությունը դիմեց համաշխարհային հանրությանը՝ նույն օրը դիմելով նաև ՄԱԿ-ին ու մի շարք երկրների՝ խնդրելով քաղաքական ապաստան տալ մեր բնակչությանը ու փրկել մեզ բնաջնջումից: Ահա թե ուր ենք հասել: Ադրբեյջանի ղեկավարությունը «Կոլցո» գործողությունը դիտում էր որպես Լեռնային Ղարաբաղի մնացած հայկական մասի լայնածավալ տեղահանության սկիզբ: Իսկ աշխարհը կողքից լուռ նայում էր:

**22.05.1991թ.** Ելույթ ունենալով Մոսկվայում՝ Ադրկոմկուսի Կ4 գաղափարախոսության բաժնի պետ Ա. Դաշդամիրովը հայտարարեց. «Մոտ ժամանակներս անհրաժեշտ կլինի Ղարաբաղից արտաքսել ևս 32 հազար մարդ»: Անդրեյ Սախարովի հիշատակի առաջին միջազգային կոնգրեսի պատվիրակության հետ հանդիպման ժամանակ Դաշդամիրովն ու Մուրալիբովը արդարացնում էին Լեռնային Ղարաբաղի հայ բնակչության տեղահանումը և չէին բացառում դրա շարունակականությունը: Այսպես, մարդու իրավունքների զանգվածային խախտումներով աչքի ընկնող «Կոլցո» գործողությունը կտրուկ բարձրացրեց լարվածության մակարդակը տարածաշրջանում, և ադրբեյջանա-ղարաբաղյան հակամարտությունը տեղափոխվեց ռազմական հարթություն՝ դառնալով Ղարաբաղի դեմ Ադրբեյջանի հետագա լայնածավալ ագրեսիայի նախերգանքը, որը, իբր, եզրափակվեց 2020թ. սեպտեմբերի 27-ին պատերազմ սկսելով, բայց, ցավոք, չի վերջա-

ցել, շարունակվում է: Շարունակվում է աշխարհի աչքի առաջ, իսկ մենք դիմադրում ենք և դիմադրելու ենք մինչև վերջ: Միևնույն է, Ղարաբաղն այնպիսի ոսկորի կտոր է, որ Ադրբեյջանի կոկորդիլ չի անցնի, այլ նրան կխեղդի: Իսկ որ այսօր համարձակվել են հոշոտել Ղազանցեցոց եկեղեցին, վերև Աստված կա, և հույս ունեն, որ եթե Աստված չպատժի, Ղարաբաղին անպայման կպատժի: Այնպես որ, 1991թ. մայիսն ուրիշ էր, որն ավելի զգոնացրեց Ղարաբաղցիներին:

**6.05.2021թ.** ՌԴ արտաքին գործերի նախարարն է ելել Երևան: Փոխանակ տանեն Շուշիում ցույց տան Ալիևի թունավոր ձեռքով քանդված Ղազանցեցոց եկեղեցու վիճակը, մատի փաթաթան են դարձրել Բաքվում պահվող գերիներին, որոնց Ալիևը բաց չի թողնում: Նա պահանջում է նոր տարածքներ գերիների դիմաց: Այնպես որ, մեզ ուժ է պետք, կազմակերպվածություն, կամք, միաբանություն, առանց Նիկոլի Հայաստան: Կարողանանք ոտքի կանգնել և բաց ճակատով առաջ շարժվել: Ժողովուրդը պիտի հասկանա և ճիշտ ընտրություն կատարի: Չասի՝ Արցախը մեզ համար բեռ է դարձել, այլ հենվի Արցախի վրա ու վստահի նրա խելացի անհատներին:

**Սառլեն ՃԱՆԱԶԱՐՅԱՆ**  
**Մժակույթի վասակավոր աշխատող,**  
**անհասական թուակառու**

ՇՈՒՅԱՆՑՆԱՆ

ԵՐԵՎՈ՝ ՈԳԵԿՈՉՄԱՆ ԵՎ ՈԳԵՇՆՉՄԱՆ

Ինչպես և Արցախյան մարտի պատերազմներում, այնպես էլ 44-օրյա պատերազմում Արցախի պետական համալսարանի ուսանողները ակտիվ մասնակցություն են ունեցել հայրենիքի պաշտպանությանը: ԱրՊՀ-ն տվել է 24 զոհ, ունի երկու անհայտ կորած: Բուհում ստեղծել են հուշատախտակ, աշխատանքներ են զնուն «Անկախության նվիրյալները» գրքի հրատարակման ուղղությամբ:

ԱրՊՀ պատմության և իրավագիտության ֆակուլտետի նախաձեռնությամբ կազմակերպվեց հուշ-երեկո՝ նվիրված պատերազմում այդ ֆակուլտետի զոհված անմահ հերոսներ Արեն Ասրյանի և Էդգար Դուլխանյանի հիշատակին:

Ներկա էին հերոսների ծնողները, որոնց իր բացման խոսքում մեծարանքի և խոնարհումի տուրք մատուցեց ֆակուլտետի դեկան Արմինե Խաչատրյանը (Առատայան):

-Ձեր տված դաստիարակությունը նրանց դարձրեց հայրենիքի նվիրյալներ: Նրանք անմահ են: Նրանք հայ ազգի արեւելու իրավունքը հաստատեցին հանուն անմահության ու հավերժության: Նրանք կարեն այնքան, ինչքան կարի հայ ազգը: Մենք պետք է հպարտ լինենք նրանցով: Նրանք մեր կենսատու երակն են, մեր ազգի հարատւության և հավերժության խորհրդանիշը: Արցախյան 3-րդ պատերազմում հայ ժողովուրդը կրեց զգալի կորուստներ՝ իր լավագույն որդիներին, պատմական տարածքների մեծ մասը: Սակայն վստահաբար կարող են ասել՝ ոչ մի պարտություն դեռ ավարտ չէ: Ընդհակառակը, պարտությունները կարող են լինել մոր զարգացումների սկիզբ, մոր հնարավորությունների մեկնարկ: Միայն թե պետք է ճիշտ վերաբերվենք մեր անցյալ ու ներկան: Պատմությունն այսուհետ պետք է դառնա պատմական դաս, լինի սխալների ու բացթողումների վերլուծում: Խելամիտ ու ճիշտ հաշվարկներով կառուցենք մեր կյանքը: Լինենք արժանի մեր անմահ հերոսներին: Համոզված են, որ միաբանությամբ, ստեղծագործ ուժով,

կամքով, բանակամությամբ, կարող ենք կերտել, արարել, միայն թե պիտի սիրենք այս հողը ավելի ուժգին, ավելի ամուր կառչենք այս հողից և միշտ քաջալերվենք անմահ տղաների՝ մեզ նայող ու գոտեպնդող հայացքով: Իսկ նրանք մեզ ասում են՝ ա՛զգ, ապրիր, շենացիր, ծաղկիր, հպարտ քայլիր, որովհետև դու մեզանով արդեն հաղթած ես:

Էդգար Դուլխանյանը ծնվել է 2000թ. նոյեմբերի 14-ին Մարտունու շրջանի Խնուշիճակ գյուղում: Ավարտել է գյուղի միջնակարգը, ընդունվել է ԱրՊՀ պատմության և իրավագիտության ֆակուլտետի իրավագիտության

Կարեն Ասրյանը ծնվել է 2000թ. հունվարի 21-ին Հաթրոք գյուղում: Գերագույն գնահատականներով ավարտել է հայրենի գյուղի դպրոցը: Նույն թվականին ընդունվել է ԱրՊՀ իրավագիտության բաժինը: 2018թ. նոյեմբերի 20-ից ծառայության էր անցել ԱՀ ոստիկանության Ստեփանակերտ քաղաքի վարչության պարեկապահակային ծառայությունում:

2020թ. մարտի 18-ին նշանակվել է Ստեփանակերտի ոստիկանության վարչության ՊՊԾ գումարտակի 2-րդ վաշտի 1-ին դասակի 3-րդ ջոկի հրամանատար: Ուներ ոստիկանության սերժանտի կոչում: Հայրենասեր, ըն-

համար հայեցակարգային բանաձև ունի, որով ազգովի առաջնորդվելը մեզ կտանի դեպի հուսալի ապագա:

«Անկարտելի է այն ժողովուրդը, որը դեկավարվում է ոգու ուժով: Վաղը հաղթելու է նա, ով մինչև վաղը իր հոգում տանելու է այդ հաղթանակը: Հերոսական գործերից ոչ մի կարգից չենք մտածում: Եվ ուրեմն մեռնել այնպես, որ մահդ էլ ծառայի հայրենիքին. ահա իմ դավանած հայրենասիրությունը»:

Իրոք, դիպուկ է նկատել հայոց ազգի նվիրյալը. «Եթե դու պատրաստ չես մեռնել հայրենիքի համար, դու հայրենիք չես ունենա: Իսկ մեռնել հայրենիքի համար՝ նշանակում է ապրել, անմահանալ»:

Ապրենք, մորից հառնենք, բարձրանանք, լինենք ուժեղ, լինենք այն վեհ առաքինությունների կրողը, ինչ դու էիր, իմ հերոս: Կշարունակենք կիսատ թողածը, քեզ պես անմացորդ սիրենք ու նվիրվենք հայրենիքին: Ապրենք ու արարենք այս երկրում, քո երկրում, մեր որդիների ու եղբայրների հողում: Պիտի քայլենք հպարտ, ոչ թե պարտված, քանզի դու՝ հերոս ազգի, պայքարել ես կյանքի գնով:

Հերոսներ ծնած հողը պիտի ապրի: Լինենք ուժեղ այնքան, որ թշնամին չհամարձակվի հարձակվել, լինենք համախմբված, մեր հասարակությունը մաքրենք աղտեղություններից, նյութապաշտությունից, մեծամտությունից, լինենք միասնական, սիրենք ու հարգենք մեկս մյուսին: Ու հայրենիքը շենացնենք կրկին, արարենք ու ապրենք հանուն նրանց՝ հերոսների: Մենք ավելի ամուր պիտի կառչենք այս հողից, ուր կյանքեր կան անմահ: Այս խոսքերով երիտասարդ սերունդն իր հավատարմությունն է արտահայտում Նժդեհի գաղափարներին, անմար հերոսների գործի շարունակությանը:

Հուշ-երեկոն մաս յուրատեսակ երդմնակալություն էր:

Ս. ԳԱՐԻԻՆՅԱՆ



բաժինը: Ուսումը կիսատ թողնելով՝ 2019թ. մեկնել է ծառայության: Ծառայում էր Հաղործում՝ որպես հակաստանկային ստորաբաժանման ավագ օպերատոր: Գերագույն ծառայության համար ավագ սերժանտի կոչում էր ստացել: Տան միակ արու զավակն էր, ունի երկու քույր: 2020թ. սեպտեմբերին խոցել է թշնամու տանկ, ընկերների վկայությամբ՝ մինչև վերջ կռվել է առանց վախի՝ հաղթողի ժպիտը դեմքին: Հոկտեմբերի 9-ին ընդհատվեց Էդգարի կյանքը՝ անկատար թողնելով նրա բազում երազանքներ: Ջոկվեց Կարախանբեյլիում:

կերասեր, բարի, հոգատար և ընտանիքին նվիրված զավակ էր: Մեծ նպատակներ ուներ. երազում էր դառնալ քննիչ և փայլել իր ընտրած մասնագիտության մեջ: Ջոկվել է 2020թ. հոկտեմբերի 16-ին:

Ամբողջ երեկոյի ընթացքում հաղորդավարները ներկաներին փոխանցեցին հայ ժողովրդի՝ մաքառումներով լի պատմությունը՝ համեմտելով այն Մեծ Նժդեհի գաղափարախոսության ընտիր հատվածներով: Մեծ զորավարն ու ռազմական արվեստի մեծագույն գիտակը մեր ժողովրդի յուրաքանչյուր քայլի

ԱՆՎԱՆԱԿՈՉՎԵՑ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԴԱՍԱՆԵՆՅԱԿԸ

Մայիսի 3-ին ճարտարի Ա.Ավանեսյանի անվան հ. 2 հիմնական դպրոցում հավաքվել էին Մարտունու շրջվարչակազմի աշխատակազմի պատասխանատուները, N զորամասի հրամանատարական կազմն ու համաքաղաքացիներ: Առիթը 44-օրյա պատերազմի քաջարի մարտիկ, «Մարտական խաչ» 1-ին աստիճանի շքանշանակիր, մայրո Գուրգեն Դաշյանի անունով պատմության դասասենյակի անվանակոչումն էր:

Բացման խոսքով հանդես եկավ դպրոցի տնօրենի պաշտոնակատար Զինաիդա Արզումանյանը՝ ասելով, որ հպարտությունն ու խոր վիշտը շաղխվել են իրար:

- Հպարտանում ենք, քանզի այսօր պատմության դասասենյակն անվանակոչվում է դպրոցի շրջանավարտներից մայրո Գուրգեն Դաշյանի անունով: Սակայն մեծ ցավ ենք ապրում, որ նա հիմա մեզ հետ չէ: Հայրենասիրությունը հայ ազգի ողնաշարն է, իսկ նահատակները մեր սեղանի աղն են, որ համեմուն են մեր կյանքը,-նշեց Զ. Արզումանյանը՝ ավելացնելով աստվածաշնչյան երկու պատգամ: «Աստվածաշնչում ասվում է՝ սիրիր քո տեր Աստծուն քո ամբողջ սրտով, հոգով և մտքով, ինչպես նաև՝ սիրիր քո ընկերոջը քո անձի պես: Ահա Գուրգենին ընկերները սիրում են իրենց անձի պես, ու նրանց բարոյական, հոգևոր և նյութական աջակցության շնորհիվ կյանքի կոչվեց դասասենյակի անվանակոչումը»,- ասաց նա:

Արիակամ մարտական պատմություն ունի ճարտարի Գուրգեն Դաշյանը: Ծնվել է 1978թ. հունիսի 27-ին: Ավարտել է Դուզե ճարտարի միջնակարգ դպրոցը: 1995-1998 թվա-

կաններին պարտադիր ժամկետային զինծառայության մեջ է եղել ՊԲ շարքերում, իսկ 1999 թվականից անցել է պայմանագրային ծառայության:



Գուրգենը՝ ընկերների ու հարազատների սիրելի Գուրգեն, մաս Ապրիլյան քառօրյային է ակտիվ մասնակցություն ունեցել: Հրամանատարության խոսքով՝ մայրո Դաշյանը պատերազմի առաջին օրից է ցուցաբերել անձնական արիություն ու խիզախություն: Նա մասնակցել է Ջրականի և Վարանդայի պաշտպանության մարտերին: Վարանդայի պաշտպանության ժամանակ մեծ ու պլանային աշխատանք է իրականացրել, կարողացել է ճշգրիտ ղեկավարել անձնակազմն ու զգալի կորուստներ պատճառել թշնամուն: Երբ զլխի շրջանում վիրավորում էր ստացել, դարձյալ շա-

րունակել է հետ մղել թշնամու հրոսակախմբին: Անգամ հրաժարվում էր, որ իրեն հոսպիտալ տեղափոխեն:

Ընկերներն ու նրան ճանաչողները մեծ հպարտությամբ են խոսում Գուրգենի ապրած կյանքի մասին: Ափսոսում ու ցավում են, որ երիտասարդը չհասցրեց ընտանիք կազմել, երեխաներ ունենալ: Իր ողջ կյանքը նվիրեց հայրենիքին ու ընկերներին՝ ցույց տալով, որ կյանքը ապրելու համար է, բայց՝ արժանապատվությամբ ապրելու:

44-օրյա պատերազմն ապացուցեց, որ իսկական մայրո լինում է Գուրգենի նման՝ թև



ու թիկունք զինվորին, ուժի և հավատի անպառ աղբյուր: Հայրենասերի իր կերպարով զինվորներին մենակ չթողեց, իր բաժին ար-

դար պայքարը մղեց և հերոսացավ նոյեմբերի 1-ին՝ Հակոբ Կամարիի մատույցներում, թշնամու դիպուկահարի կրակոցից: N զորամասի հրամանատար Հունան Հայրունյանը «Մարտական խաչ» 1-ին աստիճանի շքանշանը հանձնել է Գուրգենի մորը:

Ելույթ ունեցան ազատամարտիկ Ալիկ Դաշյանը, 2-րդ ՊԾ 2-րդ հրաձգային գումարտակի բարոյահոգեբանական գծով տեղակալ Արմեն Մկրտչյանը, վաստակաշատ ուսուցչուհի Գալինա Մուսայեյանը, դպրոցի սաներն ու Գուրգենի հայրը՝ Վլադիկ Դաշյանը, որը շնորհակալություն հայտնեց կազմակերպիչներին:

Գուրգենին դասավանդած ուսուցիչ Գալինա Մուսայեյանը հիշեց նաև 90-ականների հետպատերազմական կյանքը, երբ դպրոցական Գուրգենը կոկիկ, դպրոցական հագուստով ներկայանում էր դպրոց: Նա շատ սիրված էր և՛ ուսուցիչների, և՛ դասընկերների կողմից, քանի որ ուներ մարդկային բարձրագույն հատկանիշներ, որոնցով առաջնորդվում էր և առաջնորդվեց ողջ կյանքի ընթացքում:

Դասասենյակի բացման և կարմիր ժապավենը կտրելու պատիվը տրվեց Գուրգենի եղբորն ու դասընկերոջը:

Երկնալույսը հիմա ավելի ուժեղ ու թանկ է ճառագում, քանզի այդ լույսի մաս են դարձել հազարավոր հայորդիներ: Միանշանակ նրանցով է սկիզբ առնում հայրենասիրության գաղափարը: Այն գաղափարը, որ պետք է փայլայեն սերունդները:

Վ. ԱՐԶՈՒՄԱՆՅԱՆ

ԱՐՏԱԴՊՐՈՑԱԿԱՆ

ԴՈՒ ԻՄ ԵՐԳՆ ԵՍ

Այս աշխարհում մի աշխարհ կա, էն էլ դու ես, իմ Ղարաբաղ...

Լսվում է փոքրիկ հաղորդավարուհու՝ Կարինե Բախշյանի ականջ շոյող ծայրը, ու շարունակում է երկրորդը՝ Անի Կարապետյանը՝ նույնքան հաճելի ու գեղեցիկ տոնով:

Ուտաբորիկ դուք մտեք Արցախ, Այստեղ մասունք է ամեն թուփ ու ցախ, Չերոս տղերքի արյանք ներծծված, Սրբատեղի է հողը հայրենյալ:

Ու մեկ րոպե լռությամբ բոլորս ոտքի ենք կանգնում՝ հարգելով հերոս տղաների փառահեղ հիշատակը:

Ասկերանի մանկապատանեկան ստեղծագործական կենտրոնում ենք (տնօրեն՝ Մերի Գաբրիելյան), որն արվեստի ու մշակույթի յուրօրինակ դարբնոց է, որտեղ էլ ստեղծագործում, հմտանում են մեր սանիկները: Սա մի զարմանահարաշ աշխարհ է՝ գույների ու ոճերի բազմազանությամբ, կախարդական, հմայիչ ու ներդաշնակ մի աշխարհ, որտեղ կարելի է մոռանալ ամեն ինչ, վերանալ հոգեկան բոլոր տեսակի «բեռներին» ու փորձել վայելել պահի քնարական ելևէջները, գեղեցիկ ակնթարթները, հմայագեղ փոքրիկ մախրուհիների հաճելի ներկայությունը: Ստեղծագործական աշխատանքն այստեղ ծավալ ու սահման չի ճանաչում. մարդկային հոգու հույզերն ու ապրումները կենդանի տեսք են առնում ու շնչուն տարազան իրերի ու գույների խաղի միջոցով: Չենց այս փոքրիկներն են այսօր ուրվագծում Արցախի ապագան, նրանք են ստեղծելու իրենց երազանքների գունազեղ, պայծառ ու ազատ Չայրենիքը:



«Չայուհիները» հանդիսատեսին են ներկայանում վառվող մոմերով՝ հարգելով մեր ազգի նահատակ զավակների հիշատակը: Արցախի ու Չայաստանի, Սփյուռքի անուցից բարև՝ այս մի հաստիկ բառն են աշխարհին հղում, որ ամեն ինչ բարի լինի ու բարությանը վերջանա...

Արա Գևորգյանի «Արցախ» երաժշտության հնչյունների տակ իրենց խրոխտ պարով բեմահարթակն են զբաղեցնում «Դյուցազմ»-ի դյուցազնուհիները՝ իրենց ողջույնը հղելով աշխարհին. «Չետնորդներն ենք մենք դյուցազուն Դավթի, Սասնա ծռերը՝ հայրենիք կերտող: Ոչ մի փոթորիկ ու ոչ մի ոտխ չի կարող մեզ արմատից պոկել: Եղել ենք, կանք ու կլինենք առհավետ: Ինչպես դյուցազունները Սասնա աշխարհի, այնպես էլ մենք՝ Արցախի քաջերս, հավետ կանգուն ենք պահելու հողը հայրենի»:

Իրոք, հայրենիքը նրանց համար բնօրրան է, հույսի կանթեղ ու սիրո աղբյուր: Այն իրենց համար պատմություն է, էություն ու մանկություն: Ամեն ինչ ներծծված էր առ հայրենիք տածած անսահման սիրով: Ժյուրին անաչառորեն զնահատում էր երեխաների բոլոր կատարումները: Ողջույնի խոսքին հետևում է ասումը, և թիմերը ներկայացնում են իրենց ընտրած ստեղծագործությունները. «Արծվուհիներ»՝ «Նկարիչ, Արցախ նկարիչ», «Չայկազուններ»՝ «Իմ զինվոր եղբայր» (ինքնաստեղծագործություն է, որը ներկայացրեց հենց հեղինակը՝ Կարոլինա Սարգսյանը), «Արևածաղիկ»՝ «Ախր ես ինչպե՞ս վեր կենամ գնամ», «Չայուհիներ»՝ «Կռունկ», «Դյուցազմ»՝ «Սոււզայիթ»:

Այնուհետև հնչում են ազգային-հայրենասիրական երգերը: Տեսնել էր պետք, թե ինչ ոգևորությամբ էին երեխաները մատուցում այդ երգերը՝ «Ով որ քաջ է», «Առաքել, Մուշեղ», «Գետաշեն», «Մենք պիտի կռվենք», «Զարթիր, լաո»:

Ծրագրի հաջորդ համարում նորածնության ցուցադրություն էր: Կենտրոնի աղջիկ-

ներն այս տարիքից արդեն լավ են հասկանում, որ գեղեցիկ քայլվածքը, նրբագեղ շարժումը զարդարում են հայ աղջիկներին, և համարները ներկայացնելիս ամեն ինչ անում էին հանդիսատեսին գրավելու ու հմայելու համար: Ներկայացնում էին զինվորական, դպրոցական, ազգային տարազների հավաքածուներ, «Շանել» արտադրության ակնոցներ՝ զարուհի-ամառ եղանակներին բնորոշ: Ոգեշնչվելով հին հայկական մշակույթից՝ կազմակերպիչ Լիանա Գասպարյանը ու իր «Չայուհիներ» թիմը հինգ համարել էին նորագույն տեխնոլոգիաների հետ և ստեղծել դիզայներական յուրօրինակ լուծումներով համար:

Արցախյան բանահյուսության բնորոշ կողմը երգիծանքն է, որը դարձել է մեր ժողովրդի բարոյական ուժի արգասիքը: Ամենածանր պայմաններում անգամ մեր ժողովուրդը երբեք չի կորցրել հունորի զգացողությունը, նույնիսկ՝ ռազմի դաշտում, երբ հաջորդ վայրկյանին կարող էր կտրվել աննկուն զինվորի մատաղ կյանքի թելը: Գուցե հենց դա է մեր հարատևության խորհրդավոր ու զարմանահարաշ գաղտնիքը: Դարավոր ու անվերջանալի ցավի ու վշտի միջից մենք ժպտալ գիտենք, ապրելու և արարելու, կյանքը նորից շարունակելու հզոր ուժ ու կամք ունենք: Դրա համար էլ կանք:

Կենտրոնի սաներն անընդհատ նորանոր տրամադրություններ էին հաղորդում ներկայներին՝ ներկայացնելով միշտ արդիական, երբեք չհնացող թեմաներով իրենց հրաշալի բեմադրությունները՝ «Ամխելք մարդը», «Կիկոսի մահը», «Շունն ու կատուն», «Ամբան Յուզին», «Պաշտպանված հայրենիք»:



«Բերդի արծվուհիներ» թիմի համար հայրենիքը պաշտպանված է, քանզի նրա անդամներն այս երկիրը ցանկապատել են կուռ մարգարիտներով, ու այդ հայրենիքը ոչ սև է ու ոչ էլ սպիտակ, այլ իրենց փառքն է եռագույն, որի համար պատրաստ են զոհաբերության:

Կյանքն են դրել քո հարկի տակ Եղբայրներս լավագույն, Դու ոչ սև ես, ոչ էլ սպիտակ, Դու իմ սերն ես եռագույն:

Չետո բեմի վրա կենդանի կերպարներ են դառնում Շունն ու Կատուն. Շունը՝ արդարության համար հավերժ մաքառողի տեսքով, Կատուն՝ խաբեբայի ու անդադար խուսափողի («Չայկազուններ»): «Արևածաղիկ» թիմի անդամները կերտում էին Ամխելք մարդու կերպարը, որն իր բախտից դժգոհում է խելք չունենալու պատճառով. «Չայուհիները»՝ Ամբան Յուզին, որի բախտն ի վերուստ է տրված, ու վայելում է իր երջանկությունը, «Դյու-



ցազմ»-ի անդամները «հաճույքով» սզում են լույս աշխարհ չեկած Կիկոսի մահը ու «խելացի» ընտանիքի անդամների հետ կազմակերպում նրա քելեխը...

Ժամերը սահում էին, սակայն հանդիսատեսը կլանված դիտում էր փոքրիկ դերասանների անթերի խաղը ու ծանծրույթ չէր զգում: Չենց այսպիսի շնորհալի երեխաների շնորհիվ ենք մենք ապրելու ուժ ու հավատ ձեռք բերում, ապրելու իմաստ գտնում ու շարունակում մեր դառնաղի կյանքը՝ միմիայն նրանց մեջ տեսնելով մեր երկրի ապագան, նրանց աչքերում՝ սիրո ու խանդավառության, հույսի ու լույսի շողացող ցուլանքը: Իմիջիայլոց, ամբողջ միջոցառումը երաժշտությամբ ապահովում էր կենտրոնի տնօրեն, երեխաների խոսքով՝ «մեր անառիկ ամրոց սուրբ դարբնոցի խստապահանջ, միևնույն ժամանակ բարեսիրտ ու բարեխիղճ խորհրդատու» Մերի Գաբրիելյանը:

Թիմերը ծրագիրն ավարտում են կոմպոզիցիայով. ձեռքի աշխատանք՝ պատրաստի վիճակում: Անաչառ ժյուրին բոլորի աշխատանքներն էլ զնահատում է առավելագույն՝ 5 միավորով: Սաներն ու իրենց կազմակերպիչները ջանացել էին գեղեցիկ գործեր ստեղծել ու արժանանալ բարձր գնահատականի:

Չնայած այն հանգամանքին, որ բոլոր թիմերի ելույթներն էլ զովեստի արժանի էին, այնուամենայնիվ, որոշվեցին մրցանակային երեք տեղերը՝ «Չայուհիներ» (1-ին տեղ), «Դյուցազմ» (2-րդ տեղ) և «Արևածաղիկ» (3-րդ տեղ): Մյուս թիմերն էլ պարգևատրվեցին գովասանագրերով:

Միջոցառման ավարտին Ասկերանի միջնակարգ դպրոցի փոխտնօրեն Մելանյա Սարգսյանը, որը ևս ժյուրիի անդամ էր, շնորհակալություն հայտնեց կենտրոնի տնօրինությանը, կազմակերպիչներին ու սաներին՝ այդ հաճելի ու հաղթական պահերի համար և ընդգծեց, որ այդ հայուհիների ավերի մեջ է մեր ազգի ճակատագիրը, մեր երկրի ապագան:

Իրոք, սա այն երկիրն է, որը պիտի միշտ շեն մնա ու անընդհատ բարգավաճի այսպիսի հրաշալի պատանիների համար, և ամեն ոք, ով մտադիր լինի լքել այն ու ապահով վայրերում անհոգ և ուրախ կյանք փնտրել, թող միշտ հիշի մեծ բանաստեղծի իմաստուն խոսքը.

Ախր ես ինչպե՞ս վեր կենամ գնամ, Ախր ես ինչպե՞ս ուրիշ տեղ մնամ, Ախր ես ինչպե՞ս ապրեմ առանց ինձ...

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ

ԱՐՅԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

2021 թվականի մայիսի 4-ի

N 409 -Ն

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ԱՐՅԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԵՎ ՈՉ ՊԵՏԱԿԱՆ ԲԱՐՉԱՐԱՊՈՅՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲՈՒՇԵՐՈՒՄ ԱՐՅԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆԸ ՀԱՏԿԱՅՎԱԾ ՏԵՂԵՐԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ (ԸՍՏ ԲԱԿԱՆԱՎՐԻ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ) ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ԼԵՆՆԱՅԻՆ ԿԱՐԳԸ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2012 ԹՎԱԿԱՆԻ ՄՅՅԻՍԻ 14-Ի N 301-Ն ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒՓԸ ԿՈՐՅՐԱԾ ՀԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» օրենքի 14-րդ հոդվածի 5-րդ մասին, 21-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետին և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 41-րդ հոդվածին համապատասխան՝ Արցախի Հանրապետության կառավարությունը որոշում է.

1. Հաստատել Արցախի Հանրապետության պետական և ոչ պետական բարձրագույն ուսումնական հաստատությունների և Հայաստանի Հանրապետության պետական բուհերում Արցախի Հանրապետությանը հատկացված տեղերի ընդունելության (ըստ բակալավրի կրթական ծրագրի) կարգը՝ համաձայն հավելվածի:

2. Ուժը կորցրած ճանաչել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2012 թվականի մայիսի 14-ի «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պետական և ոչ պետական բարձրագույն ուսումնական հաստատությունների և Հայաստանի Հանրապետության պետական բուհերում Լեռնային Ղարաբաղի Հանրապետությանը հատկացված տեղերի ընդունելության (ըստ բակալավրի կրթական ծրագրի) կարգը հաստատելու և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2011թվականի մայիսի 31-ի N336-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N301-Ն որոշումը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

«Հաստատում են»  
ԱՐՅԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՆԱԽԱԳԱՅ Ա.ՋԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Հավելված  
Արցախի Հանրապետության  
կառավարության 2021 թվականի  
«4 մայիսի» 409 -Ն որոշման

Կ Ա Ր Գ

ԱՐՅԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԵՎ ՈՉ ՊԵՏԱԿԱՆ ԲԱՐՉԱՐԱՊՈՅՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲՈՒՇԵՐՈՒՄ ԱՐՅԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆԸ ՀԱՏԿԱՅՎԱԾ ՏԵՂԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐԿԱ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ (ԸՍՏ ԲԱԿԱՆԱՎՐԻ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ)

1. ԸՆԴՈՒՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգով սահմանվում է Արցախի Հանրապետության պետական և ոչ պետական բարձրագույն ուսումնական հաստատությունների և Հայաստանի Հանրապետության պետական բուհերում (այսուհետ՝ բուհեր) Արցախի Հանրապետությանը հատկացված տեղերի առկա ուսուցման ընդունելության գործընթացը, որը ներառում է քննական առարկաների և բուհերի մասնագիտությունների հայտագրումը, ընդունելության քննությունների կազմակերպումը, անցկացումը, ընդունելության քննությունների արդյունքների բողոքարկումը, ընդունելության քննությունների արդյունքների հիման վրա բուհերի ընդունելության մրցույթի անցկացումը:

2. Սույն կարգի պահանջները չեն տարածվում այն պետական բուհերի վրա, որոնք իրականացնում են զինվորական, ոստիկանական մասնագիտական կրթական ծրագրեր:

3. Բուհերի առկա ուսուցմամբ ընդունելությունը կատարվում է տվյալ ուսումնական տարվա համար Արցախի Հանրապետության կառավարության որոշմամբ հաստատված մասնագիտությունների և ընդունելության քննությունների ցանկի (այսուհետ՝ ցանկ) համաձայն:

4. Սույն կարգի համաձայն բուհերի ընդունելությունը կատարվում է՝

1) պետության կողմից ուսանողական նպաստների ձևով ուսման վարձի լրիվ փոխհատուցմամբ (այսուհետ՝ ամվճար)՝ ըստ մասնագիտությունների՝ Արցախի Հանրապետության կառավարության կողմից հաստատված տեղերի չափաքանակներին:

2) բուհի կողմից ուսման վարձի մասնակի զեղչի կիրառմամբ (այսուհետ՝ վճարովի) Արցախի Հանրապետության կառավարության որոշմամբ սահմանված՝ ըստ բուհերի ու մասնագիտությունների կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության (այսուհետ՝ նախարարություն) հաստատված տեղերի:

5. Բուհեր կարող են ընդունվել միջնակարգ կամ մասնագիտական (նախնական (արհեստագործական), միջին, բարձրագույն) կրթություն ունեցող անձինք (այսուհետ՝ շրջանավարտ)՝ առանց տարիքի սահմանափակման:

6. Օտարերկրյա քաղաքացիները (այսուհետ՝ օտարերկրացիներ) Արցախի Հանրա-

պետության բուհեր կարող են ընդունվել համաձայն սույն կարգի (ընդհանուր հիմունքներով) կամ օտարերկրյա քաղաքացիների ընդունելության կարգի:

7. Բուհեր ընդունվելու համար շրջանավարտը (այսուհետ՝ դիմորդ) հանձնում է ընդունելության քննություններ: Ընդունելության քննություններն անց են կացվում քննական կենտրոններում: Քննական կենտրոնում Արցախի Հանրապետության առողջապահության նախարարության կողմից սահմանված սանիտարահիգիենիկ կանոնների պահպանումը և բժշկի ներկայությունը պարտադիր են:

8. Ընդունելության քննությունները միասնական, կենտրոնացված, ներբուհական և Արարատյան բակալավրիատի քննություններն են: Միասնական և կենտրոնացված քննությունները կազմակերպում և անցկացնում է «Գնահատման և թեստավորման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը (այսուհետ՝ ԳԹԿ) ներբուհական քննությունները կազմակերպում և անցկացվում է համապատասխան բուհերում, իսկ Արարատյան բակալավրիատի քննությունները կազմակերպում և անցկացնում է «Արարատյան բակալավրիատ» ծրագրի ներդրման և իրականացման համար պատասխանատու կազմակերպությունը՝ «Այբ» կրթական հիմնադրամը: ԳԹԿ-ի հետ համատեղ: Տվյալ ուսումնական տարում դիմորդները ընդունելության քննությունները կարող են հանձնել միայն մեկ անգամ:

9. Բուհեր ընդունվելու համար դիմորդները բուհերի ընդունելության մրցույթին կարող են մասնակցել նաև միջնակարգ կրթության ատեստատի կամ միջին մասնագիտական կամ նախնական մասնագիտական ուսումնական հաստատության ավարտական փաստաթղթի՝ պետական ավարտական քննությունների գնահատականներով, իսկ պետական ավարտական քննական գնահատականների բացակայության դեպքում՝ տարեկան գնահատականով, եթե տվյալ մասնագիտության քննական առարկան բուհերի ընդունելության քննությունների ցանկում նշված է երկու աստղանիշով (\*\*): Բուհերի ընդունելության մրցույթում ընդունելության քննությունների գնահատականները առավելություն ունեն միջնակարգ կրթության ատեստատի կամ միջին մասնագիտության, կամ նախնական մասնագիտության ուսումնական հաստատության ավարտական փաստաթղթի՝ պե-

տական ավարտական քննությունների գնահատականների կամ տարեկան գնահատականների նկատմամբ:

10. Միասնական քննություններն անցկացվում են գրավոր, թեստերի միջոցով: Արցախի Հանրապետության ամբողջ տարածքում դիմորդները յուրաքանչյուր առարկայի միասնական քննություն հանձնում են ըստ ԳԹԿ-ի տնօրենի կողմից սահմանված օրերի: Դիմորդները միասնական քննությունները հանձնում են «Հայոց լեզու և հայ գրականություն» «Հայոց պատմություն» «Համաշխարհային պատմություն», «Մաթեմատիկա», «Քիմիա», «Կենսաբանություն», «Ֆիզիկա», «Աշխարհագրություն», «Օտար լեզու» (անգլերեն, գերմաներեն, ֆրանսերեն, ռուսերեն) առարկաներից:

11. Միասնական քննությունների և մասնագիտության հայտագրումը անցկացվում է երկու փուլով՝ առաջին և երկրորդ:

1) առաջին փուլի ընդունելության քննություններին և մասնագիտության հայտագրումը կատարվում է տվյալ տարվա ապրիլի 15-ից մինչև մայիսի 10-ն ընկած ժամանակահատվածում: Առաջին փուլի միասնական քննությունները անց են կացվում տվյալ տարվա հունիս ամսում:

2) երկրորդ փուլի միասնական քննություններին և մասնագիտության հայտագրումը կատարվում է տվյալ տարվա հունիսի 24-ից մինչև հունիսի 30-ն ընկած ժամանակահատվածում: Երկրորդ փուլի միասնական քննությունները անցկացվում են տվյալ տարվա հունիս ամսում:

12. Միասնական քննությունների երկրորդ փուլին կարող են մասնակցել՝

1) այն շրջանավարտները, որոնք առաջին փուլի միասնական քննությանը հարգելի պատճառով չեն մասնակցել կամ հիվանդության պատճառով ընդհատել են քննությունը:

2) այն շրջանավարտները, որոնք առաջին փուլի քննություններին մասնակցելու համար չեն հայտագրվել:

3) բողոքարկման հանձնաժողովի կողմից միասնական քննությունների երկրորդ փուլին մասնակցելու թույլտվություն ստացած շրջանավարտները:

13. Միասնական քննությունների տևողությունն է՝

1) «Հայոց լեզու և հայ գրականություն», «Հայոց պատմություն» «Համաշխարհային պատմություն», «Մաթեմատիկա», «Քիմիա», «Կենսաբանություն», «Ֆիզիկա», «Աշխար-

հագրություն» առարկաների համար՝ 180 րոպե:

2) «Օտար լեզու» առարկայի համար՝ 150 րոպե:

14. Կենտրոնացված քննություններն այն քննություններն են, որոնք հնարավոր չէ անցկացնել թեստերի միջոցով՝ ելնելով տվյալ քննական առարկաների առանձնահատկություններից: Կենտրոնացված քննությունները անցկացվում են մեկ փուլով՝ տվյալ տարվա հունիսի 26-ից մինչև հունիսի 8-ն ընկած ժամանակահատվածում:

15. Բուհերի ընդունելության միասնական և կենտրոնացված քննությունները կազմակերպվում են Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության կողմից հաստատված առարկայական ծրագրերով, հանրակրթական ուսումնական հաստատություններում պարտադիր օգտագործման երաշխավորված դասագրքերով, շտեմարաններով: Քննական առաջադրանքները և գիտելիքների գնահատման չափանիշները սահմանում է ԳԹԿ-ն:

16. Ներբուհական են՝ Արցախի պետական համալսարանի «Նախնական զինվորական պատրաստություն», Շուշիի տեխնոլոգիական համալսարանի «Ծարտարապետություն», Ստեփանակերտի «Գրիգոր Նարեկացի» համալսարանի «Ֆիզիկական պատրաստություն և սպորտային մարզումներ» ու «Նախնական զինվորական պատրաստություն», Ստեփանակերտի «Գյուլջյան» կիրառական արվեստի ինստիտուտի «Դիզայն» և «Հագուստի մոդելավորում» կրթական ծրագրերի մասնագիտական առարկաների քննությունները: «Նախնական զինվորական պատրաստություն» բանավոր քննության ժամանակ յուրաքանչյուր դիմորդի քննելու առավելագույն ժամանակը 30 րոպե է:

17. Ներբուհական քննություններն անցկացվում են սույն կարգի 15-րդ կետում նշված՝ բուհերի կողմից մշակված և Արցախի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության կողմից հաստատված մասնագիտական ծրագրերով: Քննական առաջադրանքները և գիտելիքների գնահատման չափանիշները սահմանում է ԳԹԿ-ն: Ներբուհական քննությունները անցկացվում են մեկ փուլով՝ տվյալ տարվա հունիսի 26-ից մինչև հունիսի 8-ն ընկած ժամանակահատվածում:



ԿԱՐԳ

18. Հանրակրթական ուսումնական հաստատությունների այն շրջանավարտները, որոնց ատեստատում կամ համապատասխան ավարտական փաստաթղթում «Հայոց լեզու» առարկան ատեստավորված չէ, ընդունելության քննությունները կարող են հանձնել ռուսերեն թարգմանությամբ միայն երկրորդ փուլում՝ բացառությամբ «Հայոց լեզու և հայ գրականություն», «Հայոց պատմություն» և օտար լեզուների քննությունների:

19. Ընդունելության քննությունների արդյունքների հիման վրա անվճար և վճարովի ուսուցմամբ մրցույթի արդյունքները հաստատելու, արտոնություն ունեցող դիմորդների ցուցակներն ըստ մասնագիտությունների հաստատելու, անվճար և վճարովի ուսուցման համակարգում թափուր և պահուստային տեղերը վերաբաշխելու նպատակով ստեղծվում է հանրապետական ընդունող հանձնաժողով:

2. ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ՔՆՆՈՒՄՆԵՐԻ ՀԱՅՏԱԳՐՈՒՄԸ

20. Միասնական, կենտրոնացված, ներքուհական քննությունների և մասնագիտության դիմում-հայտերը (այսուհետ՝ ընդունելության դիմում-հայտ) լրացնելը և մուտքագրելը՝

1) դիմորդը կենտրոնացված, ներքուհական և առաջին փուլի միասնական քննություններին մասնակցելու և ընտրած մասնագիտությունը նշելու համար ընդունելության դիմում-հայտը ԳԹԿ է ուղարկում էլեկտրոնային (առցանց) եղանակով տվյալ տարվա ապրիլի 15-ից մինչև մայիսի 10-ը ժամը 18:00: Ընդունելության դիմում-հայտի ձևը հաստատում է ԳԹԿ-ի տնօրենը:

2) ԳԹԿ-ն տվյալ տարվա ապրիլի 1-ից առնվազն հինգ անգամ զանգվածային լրատվամիջոցներով հրապարակում է հայտարարություն, որում պարտադիր նշվում է ընդունելության դիմում-հայտերի ընդունումը, սկսելու և ավարտելու ժամկետները:

3) դիմորդն ընդունելության դիմում-հայտում լրացնում է բուհերի բակալավրի ու անընդհատ և ինտեգրված կրթական ծրագրերով առկա ուսուցման մասնագիտությունների և ընդունելության քննությունների՝ ցանկով նախատեսված մեկ մասնագիտության (կրթական ծրագրի) անվանումը, տվյալ մասնագիտությամբ սովորելու համար սահմանված քննությունները՝

ա. միասնական քննություններ հանձնող դիմորդը կարող է մասնակցել մեկ կամ մինչև չորս բուհերի՝ մինչև երկու անվճար և մինչև չորս վճարովի ուսուցման համակարգերի նույն մասնագիտության մրցույթին:

բ. ներքուհական կամ կենտրոնացված քննություններ հանձնող դիմորդը կարող է մասնակցել մեկ բուհի նշված մասնագիտության ըստ ուսուցման անվճար և վճարովի ուսուցման համակարգերի մրցույթին:

4) ցանկի «Ընդունելության քննություններ» բաժնի սյունակում միասնական քննությունների առարկաները «կամ» բառով տարանջատված լինելու դեպքում դիմորդին թույլատրվում է ընտրել նշված ընդունելության քննություններից մեկը:

5) դիմորդը յուրաքանչյուր ընդունելության քննության համար փոխանցում է 1500 դրամ:

ա. միասնական քննությունների համար՝ Արցախի Հանրապետության ԳԹԿ հաշվեհամարին:

բ. կենտրոնացված քննությունների համար՝ Հայաստանի Հանրապետության ԳԹԿ-ի հաշվեհամարին:

գ. ներքուհական քննությունների համար՝ համապատասխան բուհի հաշվեհամարին:

6) սույն կարգի 72-րդ և 73-րդ կետերով սահմանված արտոնություններից օգտվող դիմորդները ազատվում են ընդունելության քննությունների վճարից. համապատասխան տեղեկանքի էլեկտրոնային տարբերակը

ուղարկվում է ընդունելության դիմում-հայտի հետ:

21. Հայաստանի Հանրապետության պետական բուհերում Արցախի Հանրապետությանը հատկացված տեղերի համար դիմորդները ընդունելության դիմում-հայտերը էլեկտրոնային եղանակով ուղարկում են Արցախի Հանրապետության ԳԹԿ՝ բացառությամբ Հայաստանի Հանրապետության պետական բուհերի այն մասնագիտությունների, որոնց համար նախատեսված են ներքուհական կամ կենտրոնացված քննություններ: Այդ մասնագիտություններին հայտագրվող դիմորդներն ընդունելության դիմում-հայտը և պետական մարմնի կողմից համապատասխան մասնագետ ունենալու պահանջի վերաբերյալ տրված տեղեկանքի էլեկտրոնային տարբերակը սույն թվականի ապրիլի 15-ից մինչև մայիսի 10-ը ժամը 18:00 ուղարկում են Հայաստանի Հանրապետության ԳԹԿ:

22. Եթե դիմում-հայտը պետք է ուղարկվի Հայաստանի Հանրապետության ԳԹԿ, ապա դիմորդը սկզբում դիմում է Արցախի Հանրապետության ԳԹԿ: ԳԹԿ-ն ստուգում է դիմորդի կողմից ընդունելության մրցույթին քննությունների համար փոխանցված վճարի անդորրագրի առկայությունը, զրանցում են անձնական տվյալները, հայտագրում են ընտրած մասնագիտության ընդունելության քննությունները և դիմորդին տրամադրում են ԳԹԿ անձնական համար: Այնուհետև դիմորդը դիմում-հայտը էլեկտրոնային եղանակով ուղարկում է Հայաստանի Հանրապետության ԳԹԿ:

23. Մինչև տվյալ տարվա հուլիսի 31-ը գործարկվող զինծառայողները կարող են դիմել՝

1) տվյալ տարվա ընդունելության մրցույթին՝ մինչև զորակոչվելը ստացած միասնական քննությունների վկայագրով, մասնակցելու համար:

2) տվյալ տարվա ընդունելության քննություններին մասնակցելու համար:

24. Տվյալ տարվա մինչև հուլիսի 31-ը գործարկվող զինծառայողները զորամասի հրամանատարի կողմից տրված տեղեկանք են ներկայացնում այն մասին, որ նրանց զորացրումը տեղի է ունենալու մինչև տվյալ տարվա հուլիսի 31-ը: Մինչև հուլիսի 31-ը զորացրվող զինծառայողի կողմից տրված տեղեկանքը զորացրվող զինծառայողի կողմից տրված լիազորագրում նշված անձը առցանց եղանակով ուղարկում է ԳԹԿ: Մինչև հուլիսի 31-ը զորացրվող և քննություններ հանձնող զինծառայողը լիազորագրում նշում է բուհերի ընդունելության քննությունները և ընտրած մասնագիտությունը, որոնք լիազորագրում նշված անձը առցանց եղանակով ընդունելության դիմում-հայտում հայտագրում է լիազորագրում նշված հերթականությամբ: Մինչև հուլիսի 31-ը զորացրվող զինծառայողներն օգտվում են սույն կարգի 74-րդ կետով սահմանված արտոնությունից:

25. Դիմորդը դիմում-հայտի հետ ներկայացնում է՝

1) սույն կարգի 72-75-րդ կետերով սահմանված արտոնություններից օգտվելու իրավունքը հավաստող փաստաթղթերի էլեկտրոնային տարբերակը:

2) միջազգային և հանրապետական մրցույթների դիպլոմների էլեկտրոնային տարբերակը:

3) ընդունելության յուրաքանչյուր քննությանը մասնակցելու համար փոխանցած 1500-ական դրամ վճարելու վերաբերյալ անդորրագրի էլեկտրոնային տարբերակը, եթե ազատված չէ քննությունների վճարից:

26. Դիմորդը կարող է ընդունելության դիմում-հայտում փոփոխություններ կատարել կամ հրաժարվել մինչև տվյալ տարվա մայիսի 10-ը՝ ժամը 17:00-ն:

27. Օտարերկրացիների, առաջին փուլում ընդունելության դիմում-հայտ չներկայացրած շրջանավարտների, նույն տարվա ամառային զորակոչից զորացրված կամ մինչև հուլիսի 31-ը զորացրվող դիմորդների ընդունելության դիմում-հայտերը ընդունվում են երկ-

րորդ փուլում՝ հունիսի 24-ից մինչև հունիսի 30-ը՝ մինչև ժամը 17:00-ն: Դիմորդները երկրորդ փուլի դիմում-հայտ լրացնելու համար դիմում են ԳԹԿ՝ անձնական համար ստանալու:

Ընդունման ժամկետի ավարտից հետո ընդունելության դիմում-հայտը փոփոխման ենթակա չէ, և լրացուցիչ փաստաթղթեր չեն ընդունվում:

28. Դիմորդին չի թույլատրվում ներկայացնել մեկից ավելի ընդունելության դիմում-հայտ: Բազայում նույն դիմորդի՝ մեկից ավելի ընդունելության դիմում-հայտերի առկայության դեպքում տվյալ դիմորդը զրկվում է ընդունելության քննություններին և մրցույթին մասնակցելու իրավունքից:

29. Մինչև տվյալ տարվա հուլիսի 12-ը դիմորդը ԳԹԿ է ուղարկում միջնակարգ կրթության ավարտական փաստաթղթի «Հայոց լեզու և հայ գրականություն», «Հայոց պատմություն», «Մաթեմատիկա» առարկաների պետական ավարտական գնահատականները, ինչպես նաև «Բուհերի ընդունելության մասնագիտությունների և ընդունելության քննությունների» ցանկի հայտագրված մասնագիտության ընդունելության ոչ մրցույթային քննության առարկայի պետական ավարտական գնահատականը, իսկ պետական ավարտական գնահատականի բացակայությամբ՝ տարեկան գնահատականը:

30. Միջնակարգ կրթության ատեստատում կամ համապատասխան ավարտական փաստաթղթում «Հայոց լեզու և հայ գրականություն» առարկայից գնահատական չունեցող դիմորդները «Հայոց լեզու և հայ գրականություն» առարկայի գնահատականի փոխարեն կարող են օգտագործել ավարտական փաստաթղթի օտար լեզվի (անգլերեն, գերմաներեն, ֆրանսերեն, ռուսերեն, իսպաներեն, իտալերեն) տարեկան գնահատականը: Ընդ որում՝

1) «031801.00.6 Միջազգային հարաբերություններ», «032101.00.6 Լրագրություն», «023101.00.6 Հայոց լեզու և գրականություն», «031301.00.6 Հոգեբանություն», «011201.00.6 Նախադպրոցական մանկավարժություն», «011301.00.6 Ընդհանուր մանկավարժություն», «011302.00.6 Հատուկ մանկավարժություն», «023201.00.6 Լեզվաբանություն («023201.01.6 Թարգմանական գործ (ըստ լեզուների)» կրթական ծրագիր)» մասնագիտությունների դեպքում «Հայոց լեզու և հայ գրականություն» առարկայի պետական ավարտական քննության գնահատականը կամ «Հայոց լեզու» առարկայի տարեկան գնահատականը պարտադիր է:

31. Դիմորդի կողմից դիմում-հայտում լրացված տվյալների, փաստաթղթերի հավաստիությունը և գնահատականների համապատասխանությունը հաստատելու նպատակով ԳԹԿ կարող է դիմել հայտատուի ուսումնական հաստատության:

32. Հայտագրման ավարտից հետո միասնական, կենտրոնացված և ներքուհական քննություններ հանձնող դիմորդներին տրվում են անցաթղթեր (քննական թերթիկներ): Անցաթղթերը մինչև մայիսի 30-ը ուղարկվում են դպրոցներ կամ դիմորդներին: Միասնական քննություններ հանձնող դիմորդներին անցաթղթերն ուղարկվում է ԳԹԿ-ն, իսկ կենտրոնացված և ներքուհական քննություններ հանձնողներին՝ համապատասխան բուհը: Անցաթուղթը դիմորդին տրվում է ստորագրությամբ:

33. Անցաթուղթը պարունակում է դիմորդի տվյալները (անունը, ազգանունը, հայրանունը, անձը հաստատող փաստաթղթի տվյալները (սերիան, համարը), անձնական համարը), ուսումնական հաստատության անվանումը, լուսանկար (3x4 չափսի), քննական կենտրոնի գտնվելու վայրը, առարկան, քննության օրը և ժամը:

34. Դիմորդը անցաթուղթը (քննական թերթիկը) կորցնելու մասին առցանց եղանակով տեղեկացնում է ԳԹԿ: ԳԹԿ-ն 24 ժամվա ընթացքում դիմորդին է տալիս նոր անցաթուղթ

(քննական թերթիկ): Եթե անցաթուղթը (քննական թերթիկ) կորել է տվյալ օրը կամ տվյալ առարկայի քննության նախորդ օրը, ապա անցաթուղթը (քննական թերթիկ) կորցրած դիմորդին թույլատրվում է քննությունը հանձնել անձը հաստատող փաստաթղթի ու ԳԹԿ-ի տվյալների բազայի հիման վրա:

35. Բուհի ընդունելության քննությունների և մասնագիտության հայտագրման գործընթացին օժանդակում է բուհի ընդունող հանձնաժողովը (այսուհետ՝ ընդունող հանձնաժողով):

36. Ընդունող հանձնաժողովի կազմում ընդգրկվում են ռեկտորը (նախագահ), պրոռեկտորը (տեղակալ): Ընդունող հանձնաժողովի պատասխանատու քարտուղարին, պատասխանատու քարտուղարի տեղակալին (տեղակալներին) և անդամներին նշանակում է ընդունող հանձնաժողովի նախագահը: Ընդունող հանձնաժողովն իր աշխատանքներն իրականացնում է տեխնիկական անձնակազմի միջոցով:

3. ՄԻԱՍՆԱԿԱՆ ՔՆՆՈՒՄՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ, ԱՆՑԿԱՑՈՒՄԸ ԵՎ ԲՈՂՈՔԱՐԿՈՒՄԸ

37. Միասնական քննությունների կազմակերպումը.

1) միասնական քննությունները կազմակերպվում և անցկացվում են միասնական քննական կենտրոններում, որոնց ցանկը մինչև տվյալ տարվա մայիսի 15-ը հաստատում է Արցախի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարը՝ (այսուհետ՝ նախարար) ԳԹԿ-ի տնօրենի ներկայացմամբ:

2) միասնական քննական կենտրոնների ղեկավարների (այսուհետ՝ կենտրոնի ղեկավար) ցանկը մինչև տվյալ տարվա մայիսի 20-ը հաստատում է նախարարը՝ ԳԹԿ-ի տնօրենի ներկայացմամբ:

3) քննական կենտրոնի ղեկավարը քննական գործընթացը կազմակերպում է տվյալ քննական կենտրոնում՝ սույն կարգի պահանջներին համապատասխան:

4) միասնական քննությունների օրերն ըստ առարկաների հաստատում է ԳԹԿ-ի տնօրենը: միասնական քննությունները կազմակերպվում են տվյալ տարվա հունիսի 1-ից մինչև հուլիսի 10-ն ընկած ժամանակահատվածում:

5) միասնական քննության անցկացման գործընթացի մասնակիցներն են կենտրոնի ղեկավարը, ԳԹԿ-ի ներկայացուցիչը (յուրաքանչյուր 40 դիմորդի համար ԳԹԿ-ի առնվազն մեկ ներկայացուցիչ), միասնական քննության ընթացքի կազմակերպիչը (այսուհետ՝ կազմակերպիչ) և պատասխանատու կազմակերպիչը, համակարգչային օպերատորը (այսուհետ՝ օպերատոր), միասնական քննական կենտրոնի հերթապահը (այսուհետ՝ հերթապահ), ովքեր իրենց աշխատանքը միասնական քննությունների ընթացքում իրականացնում են ԳԹԿ-ի տնօրենի կողմից հաստատված աշխատակարգերի համաձայն:

6) միասնական քննական կենտրոնում միասնական քննության ընթացքը քննասենյակում կազմակերպում են ԳԹԿ-ի ներկայացուցիչները և կազմակերպիչները, որոնց կազմը հաստատում է ԳԹԿ-ի տնօրենը: կենտրոնի ղեկավարը յուրաքանչյուր քննասենյակի համար տվյալ քննասենյակի կազմակերպիչներին մեկին նշանակում է պատասխանատու կազմակերպիչ:

7) համակարգչային աշխատանքներն իրականացնում են ուսուցում անցած օպերատորները, որոնց կազմը հաստատում է ԳԹԿ-ի տնօրենը: հերթապահների կազմը հաստատում է քննական կենտրոնի ղեկավարը:

8) կազմակերպիչներն ըստ քննական կենտրոնների բաշխվում են քննության նախորդ օրը՝ ԳԹԿ-ի ներկայացուցչի կազմակերպած վիճակահանության միջոցով:

ԿԱՐԳ

Նույն օրը ԳԹԿ-ի ներկայացուցիչը տվյալ քննական կենտրոնի ղեկավարին է հանձնում քննական կենտրոնի կազմակերպիչների ցուցակը.

9) քննական կենտրոնում քննասենյակները համարակալվում են հերթական համարներով. քննական կենտրոնի դիմորդները բաժանվում են հերթական թվերով համարակալված խմբերի. խմբում դիմորդների թիվը չի կարող գերազանցել 20-ը. յուրաքանչյուր խմբի համար քննասենյակում աշխատանքները համակարգում է մեկական կազմակերպիչ:

10) հերթապահներին տեղաբաշխում է քննական կենտրոնի ղեկավարը՝ կազմելով համապատասխան արձանագրություն.

11) քննական կենտրոնի քննասենյակների մուտքի մոտ նշվում են տվյալ քննասենյակի խմբերի հերթական համարները.

12) քննությունն սկսվելուց 1,5 ժամ առաջ քննական կենտրոնի ղեկավարը սահմանված ձևի արձանագրությունում գրանցում է կազմակերպիչներին, համակարգչային օպերատորներին և հերթապահներին.

13) քննությունն սկսվելուց առնվազն մեկ ժամ առաջ կենտրոնի ղեկավարը, ԳԹԿ-ի ներկայացուցիչ ներկայությամբ, այն առևտրային բանկերից, որոնք իրականացնում են քննական թեստերի փաթեթների պահեստավորում, ստանում է քննական թեստերի փաթեթները, յուրաքանչյուր քննասենյակի պատասխանատու կազմակերպիչին տալիս է տվյալ քննասենյակի խմբերի համար նախատեսված թեստերի պատասխանների ձևաթղթերի (այսուհետ՝ պատասխանների ձևաթուղթ) ծրարները, խմբերի դիմորդների ցուցակները, որից հետո սկսվում է դիմորդների մուտքը քննասենյակներ.

14) պատասխանների ձևաթղթերի ծրարը պարունակում է՝

ա. պատասխանների 20 ձևաթուղթ, որոնք տրվում են դիմորդներին.

բ. պատասխանների լրացուցիչ ձևաթղթեր, որոնք մնում են քննական կենտրոնի ղեկավարի մոտ և օգտագործվում են պատասխանների ձևաթղթերի խտանման դեպքում.

15) քննության օրը դիմորդը քննությունն սկսվելուց առնվազն մեկ ժամ առաջ ներկայանում է քննական կենտրոն՝ իր հետ ունենալով անցաթուղթը, անձը հաստատող այն փաստաթուղթը, որը նշված է դիմում-հայտում.

16) դիմորդների մուտքը կենտրոն սկսվում է քննական կենտրոնի ղեկավարի հրահանգով.

17) դիմորդն անձը հաստատող փաստաթուղթը և անցաթուղթը ներկայացնում է հերթապահին և նրա հրահանգով մոտենում օպերատորին, օպերատորը համադրում է անցաթղթի և դիմորդի մասին բազայի տվյալները, բազայում կատարում նշում դիմորդի՝ քննությանը ներկայանալու մասին, իսկ անցաթղթի վրա գրում խմբի համարը. հերթապահներն ու պատերհնի փակցված լրացուցիչ ուղեպաթեթները դիմորդներին օգնում են գտնել քննասենյակը և խումբը.

18) դիմորդի մուտքը քննասենյակ կազմակերպվում է առնվազն երկու կազմակերպիչի կողմից. դիմորդը քննասենյակում չի կարող ունենալ այլ առարկաներ՝ բացառությամբ անձը հաստատող փաստաթղթի և անցաթղթի.

19) դիմորդը մոտենում է իր խմբի կազմակերպիչին և ստանում պատասխանների ձևաթուղթը, ցուցակում ստորագրում է իր անվան դիմաց և նստում ըստ վիճակահանության արդյունքի՝ համապատասխան նստարանին.

20) քննասենյակում դիմորդներին տեղավորելուց հետո քննասենյակի պատասխանատու կազմակերպիչը, քննական կենտրոնի ղեկավարից ԳԹԿ-ի ներկայացուցիչի ներկայությամբ ստանալով խմբերի թվին համապատասխան թեստերի փաթեթները, դրանք բերում է քննասենյակ: Քննասենյակի

պատասխանատու կազմակերպիչը թեստերի փաթեթները ցուցադրում է դիմորդներին՝ նրանց ուշադրությունը հրավիրելով փաթեթների փակ և ամբողջական լինելու հանգամանքի վրա.

21) քննությունն սկսվելուց 20 րոպե առաջ ԳԹԿ-ի ներկայացուցիչը կամ պատասխանատու կազմակերպիչը դիմորդների համար ընթերցում է քննասենյակում քննության անցկացման կարգը, տեղեկացնում բողոքարկման տեսակների և կարգի մասին. դիմորդները պատասխանների ձևաթղթերում լրացնում են իրենց անունը, ազգանունը և անցաթղթերի անձնական համարները, այնուհետև կազմակերպիչները մոտենում են դիմորդներին, կտրում պատասխանների ձևաթղթերի անձնական տվյալները պարունակող մասերը, հաշվում և հանձնում քննասենյակի պատասխանատու կազմակերպիչին.

22) քննասենյակի պատասխանատու կազմակերպիչը պատասխանների ձևաթղթերի անձնական տվյալները պարունակող մասերն առնվազն 2 կազմակերպիչի մասնակցությամբ հաշվում, ստուգում, այնուհետև տեղավորում է այդ նպատակով ստացված ծրարում՝ ծրարի վրա գրելով քննասենյակի, խմբերի համարները և կտրված մասերի թիվը:

38. Միասնական քննության անցկացումը՝

1) թեստերի փաթեթները բացելու համար պատասխանատու կազմակերպիչը հրավիրում է առաջին նստարաններին նստած դիմորդներին (նրանցից որևէ մեկի բացակայության դեպքում՝ հաջորդ դիմորդին) փաթեթների բացման վերաբերյալ արձանագրությունների համապատասխան տողում խմբերի կազմակերպիչները կատարում են նշում, որի դիմաց ստորագրում է փաթեթը բացած դիմորդը.

2) խմբերի կազմակերպիչները բաժանում են թեստերը. դիմորդը, ստանալով իր թեստը, ստուգում է այն և թեստի շապիկի համապատասխան մասում գրում իր խմբի և նստարանի համարները. պատասխանատու կազմակերպիչը հայտարարում է քննության սկիզբը, տևողությունը և գրատախտակի վրա կատարում նշում քննության սկզբի և ավարտի վերաբերյալ. քննության սկիզբը հայտարարվելուց հետո արգելվում է ուշացած դիմորդի մուտքը քննասենյակ.

3) միասնական քննությունը Արցախի Հանրապետության բոլոր քննական կենտրոններում սկսվում է նույն ժամին՝ 9:30-ին.

4) քննասենյակի պատասխանատու կազմակերպիչն ավելորդ (չօգտագործված, խտանված) քննական թեստերի առկայությունն արձանագրում է, հաշվարկում և պահում իր մոտ.

5) միասնական քննության ընթացքում արգելվում են այլ դիմորդների հետ խոսելը, առանց կենտրոնի ղեկավարի թույլտվության տեղը փոխելը, դիմորդների կողմից թեստերը և պատասխանների ձևաթղթերը փոխանակելը, արտագրելը, բջջային հեռախոսներ կամ կապի այլ միջոցներ քննասենյակ բերելը.

6) միասնական քննության ընթացքում քննասենյակից դիմորդը կարող է դուրս գալ միայն անհրաժեշտության դեպքում՝ զուգարանից օգտվելու կամ վատառողջության պատճառով՝ քննասենյակի պատասխանատու կազմակերպիչի կամ ԳԹԿ-ի ներկայացուցիչի թույլտվությամբ և հերթապահի ուղեկցությամբ.

7) քննասենյակում թեստի բովանդակության վերաբերյալ դիմորդի հարցերը չեն քննարկվում.

8) միասնական քննության ընթացքում ի հայտ եկած տպագրական կամ այլ թերություններ ունեցող թեստերն ու պատասխանների ձևաթղթերը նորերով փոխարինում է քննասենյակի պատասխանատու կազմակերպիչը՝ կենտրոնի ղեկավարի, ԳԹԿ-ի ներկայացուցիչի ներկայությամբ՝ արձանագրելով այդ փաստը. թերություններ ունեցող պատասխանների ձևաթղթերի և թեստերի վրա գրվում՝ «խտանված է».

9) դիմորդների կողմից քննական առաջադրանքների կատարման ժամանակ քննասենյակներում, բացի պատասխանատու կազմակերպիչից և կազմակերպիչներից, կարող են ներկա գտնվել միայն քննական կենտրոնի ղեկավարն ու ԳԹԿ-ի ներկայացուցիչը.

10) միասնական քննության ավարտից 30 րոպե առաջ քննասենյակի պատասխանատու կազմակերպիչը դիմորդների ուշադրություն է հրավիրում ժամանակի վրա և հիշեցնում առաջադրանքների պատասխանները թեստերից պատասխանների ձևաթղթերի վրա անցկացնելու մասին.

11) կազմակերպիչները քննության ամբողջ ընթացքում պետք է մնան քննասենյակներում՝ իրենց հատկացված սեղանների մոտ. նրանց արգելվում է օգտվել բջջային հեռախոսներից և կապի այլ միջոցներից. ԳԹԿ-ի ներկայացուցիչը սույն պահանջների խախտման մասին տեղյակ է պահում կենտրոնի ղեկավարին, որն էլ կարող է կազմակերպիչին հեռացնել քննասենյակից. կազմակերպիչն քննասենյակից հեռացնելն արձանագրվում և ստորագրվում է ԳԹԿ-ի ներկայացուցիչի ու կենտրոնի ղեկավարի կողմից.

12) ԳԹԿ-ի ներկայացուցիչն իրավունք ունի քննության ընթացքում մեկ անգամ նախագուշացնել դիմորդին՝ արձանագրելով նախագուշացումը, կրկնվելու դեպքում հեռացնել քննությունից, եթե նա առանց թույլտվության քննության ընթացքում դուրս է եկել քննասենյակից, խոսել դիմորդների հետ, փոխել տեղը. եթե քննության ընթացքում դիմորդն արտագրել է, կամ նրա մոտ հայտնաբերվել է բջջային հեռախոս կամ կապի այլ միջոց, ապա դիմորդը հեռացվում է քննությունից.

13) հեռացվող դիմորդից վերցվում է թեստը, դիմորդի պատասխանների ձևաթղթի վրա գրվում է «Հեռացված է քննությունից», տվյալ խմբի և քննասենյակի արձանագրությունների մեջ գրանցվում է այդ փաստը, հեռացվողի անունը, ազգանունը, հեռացման պատճառը.

14) միասնական քննության ընթացքում հիվանդության պատճառով (բժշկի և կենտրոնի ղեկավարի կազմած արձանագրության հիման վրա) քննությունն ընդհատած դիմորդից վերցվում է թեստը, պատասխանների ձևաթղթի վրա գրվում է՝ «Քննությունն ընդհատել է հիվանդության պատճառով», տվյալ խմբի և քննասենյակի արձանագրություններում գրանցվում է այդ փաստը՝ նշելով քննությունն ընդհատած դիմորդի անունը, ազգանունը:

39. Միասնական քննության ավարտը՝

1) քննության համար նախատեսված ժամանակից շուտ ավարտած (ընդհատած) դիմորդը ԳԹԿ-ի ներկայացուցիչի թույլտվությամբ մոտենում է օպերատորին, պատճենահանում պատասխանների ձևաթուղթը, այնուհետև մոտենում իր խմբի կազմակերպիչին. դիմորդը թեստը և պատասխանների ձևաթուղթը կազմակերպիչին է հանձնում՝ ստորագրելով իր խմբի դիմորդների ցուցակի համապատասխան տեղում: Կազմակերպիչը համեմատում է թեստի և պատասխանների ձևաթղթում նշված թեստի համարները. դիմորդը պատասխանների ձևաթղթի պատճենահանված օրինակը պահում է իր մոտ.

2) քննության համար հատկացված ժամանակի ավարտին կազմակերպիչները, յուրաքանչյուր դիմորդի պատասխանների ձևաթուղթը դնելով թեստի մեջ, հավաքում են սեղաններից, այնուհետև ընթերցում են թեստի վրա գրված սեղանի համարը, համապատասխան դիմորդը մոտենում է կազմակերպիչին, վերցնում իր պատասխանների ձևաթուղթը, պատճենահանում, պատասխանների ձևաթուղթը հանձնում իր խմբի կազմակերպիչին, դիմորդների ցուցակում ստորագրում իր անվան դիմաց և դուրս գալիս քննասենյակից. այդ ընթացքում մյուս դիմորդները մնում են իրենց տեղերում՝ մինչև պատճենահանման իրենց հերթը հասնելը.

3) քննության ավարտից հետո խմբի կազմակերպիչը պատասխանների ձևաթղթերը

(օգտագործված, չօգտագործված, խտանված), քննության ընթացքում հիվանդացած դիմորդին տրված բժշկի տեղեկանքը, դիմորդին քննությունից հեռացնելու, ինչպես նաև խտանված ձևաթղթի մասին արձանագրությունները, խմբի դիմորդների ցուցակը հաշվում և հանձնում է պատասխանատու կազմակերպիչին.

4) քննության ժամանակի ավարտից հետո, ոչ ուշ քան 30 րոպեի ընթացքում, պատասխանատու կազմակերպիչը լրացնում է տվյալ քննասենյակում անցկացված քննության արձանագրությունը.

5) պատասխանատու կազմակերպիչը խմբերի պատասխանների ձևաթղթերի (օգտագործված, չօգտագործված, խտանված), խմբերի դիմորդների ցուցակների ծրարները, քննասենյակի արձանագրության, պատասխանների ձևաթղթերի կտրված մասերի ծրարները և թեստերը (օգտագործված, չօգտագործված) հաշվում և հանձնում է կենտրոնի ղեկավարին.

6) կենտրոնի ղեկավարը, ԳԹԿ-ի ներկայացուցիչի հետ համատեղ, ներկայացված պատասխանների ձևաթղթերը, խմբերի ցուցակները պարունակող և քննասենյակներից ստացված կտրված մասերով ծրարները վերահաշվելով, ձևակերպում է քննական կենտրոնում անցկացված քննության արձանագրությունը:

40. Քննական նյութերի՝ թեստերի, պատասխանների ձևաթղթերի ծրարների, արձանագրությունների տեղափոխումը՝

1) կենտրոնի ղեկավարը յուրաքանչյուր քննասենյակի պատասխանատու կազմակերպիչի ներկայությամբ ծրարները տեղավորում է համապատասխան արկղում՝ ԳԹԿ տեղափոխելու համար.

2) քննական կենտրոնի ղեկավարը քննական նյութերը ԳԹԿ է տեղափոխում քննության ավարտից անմիջապես հետո: Նույն օրվա ընթացքում ԳԹԿ-ի ներկայացուցիչը քննական նյութերը տեղափոխում է Հայաստանի Հանրապետության ԳԹԿ.

3) Հայաստանի Հանրապետության ԳԹԿ-ում Արցախի Հանրապետության ԳԹԿ-ի ներկայացուցիչի մասնակցությամբ ընդունվում են քննական նյութերը. պատասխանների ձևաթղթերը հաշվվում և սկանավորվում են: Պատասխանների ձևաթղթերի կտրված մասերի հաշվումից հետո կազմվում է բոլոր նյութերի հանձնման և ընդունման արձանագրություն:

41. Պատասխանների ձևաթղթերի ստուգումը՝

1) պատասխանների ձևաթղթերն ստուգվում են Հայաստանի Հանրապետության ԳԹԿ-ում՝ համակարգչային սարքավորումների ու ծրագրերի միջոցով.

2) թեստերը չեն ստուգվում. սկանավորվում, ճանաչվում և գնահատվում են միայն պատասխանների ձևաթղթերը.

3) պատասխանների ձևաթղթերի կտրված մասերի վերծանումից հետո ստուգման տվյալները գրանցվում են որպես դիմորդի քննական արդյունք:

42. Միասնական քննությունների արդյունքների հրապարակումը՝

1) միասնական քննությունների առաջին փուլի արդյունքները հրապարակվում են քննությունից հետո հինգերորդ օրը՝ բացառությամբ վերջին քննության, որի արդյունքները հրապարակվում են քննությունից հետո երրորդ օրը. երկրորդ փուլի քննությունների արդյունքները հրապարակվում են քննության հաջորդ օրը.

2) ԳԹԿ-ում քննությունների արդյունքների ցուցակներն առանձնացվում են ըստ քննական կենտրոնների, առարկաների և քննություններին մասնակցած դպրոցների.

3) քննական արդյունքների ցուցակները վավերացվում են ԳԹԿ-ի տնօրենի կողմից.

4) կենտրոնի ղեկավարն աշխատանքների ստուգման ավարտից հետո ԳԹԿ-ից ստանում է քննություն հանձնած դիմորդների քննական արդյունքների ցուցակը.

ԿԱՐԳ

5) կենտրոնի ղեկավարը քննական արդյունքների ցուցակը փակցնում է քննական կենտրոնի տեղակայման հաստատության մուտքի մոտ. ԳԹԿ-ն միասնական քննությանը մասնակցած դիմորդների քննության ավարտական մասի քննական արդյունքների ցուցակը ուղարկում է դպրոցներ.

6) դպրոցը միասնական քննության ավարտական մասի արդյունքը գրանցում է դիմորդի՝ միջնակարգ կրթության ատեստատում.

7) դիմորդը քննության արդյունքի մասին տեղեկություն կարող է ստանալ քննական կենտրոնից:

43. Միասնական քննություն հանձնած դիմորդներին տրվում են վկայագրեր, որոնցում նշվում է միասնական քննություններից դիմորդի ստացած միավորները: Վկայագրի ձևը հաստատում է ԳԹԿ-ի տնօրենը:

44. Տվյալ տարվա միասնական քննություններին մասնակցած դիմորդները կարող են «Հայոց լեզու և հայ գրականություն», «Հայոց պատմություն», «Համաշխարհային պատմություն», «Մաթեմատիկա», «Քիմիա», «Կենսաբանություն», «Ֆիզիկա», «Աշխարհագրություն», «Օտար լեզու» (անգլերեն, գերմաներեն, ֆրանսերեն, ռուսերեն) առարկաներից ստացած գնահատականները պահպանել միայն հաջորդ տարվա համար: Դիմորդը, պահպանելով գնահատականը, կարող է նաև վերահանձնել այն և մրցույթին մասնակցել ավելի բարձր գնահատականով: Անբավարար գնահատական ստանալու դեպքում դիմորդը գրկվում է մրցույթին մասնակցելու իրավունքից:

45. Ջորակոչային տարիքը լրացած, միասնական քննություններին և մրցույթին մասնակցած արական սեռի դիմորդները կարող են «Հայոց լեզու և հայ գրականություն», «Հայոց պատմություն», «Համաշխարհային պատմություն», «Մաթեմատիկա», «Քիմիա», «Կենսաբանություն», «Ֆիզիկա», «Աշխարհագրություն», «Օտար լեզու» (անգլերեն, գերմաներեն, ֆրանսերեն, ռուսերեն) առարկաներից ստացած գնահատականները պահպանել ժամկետային դիմվորական ծառայությունից զորացրվելուց հետո կազմակերպվող ընդունելության քննությունների առաջին մրցույթի համար:

46. Տվյալ ուսումնական տարվա շրջանավարտ-դիմորդները մինչև հուլիսի 10-ը վկայագրերն ստանում են իրենց դպրոցներից, իսկ մյուսները՝ գնահատման և թեստավորման կենտրոնից՝ ներկայացնելով ընդունելության դիմում-հայտերի լրացման համար հիմք ընդունված անձնագիրը կամ ծննդյան վկայականը:

47. Միասնական քննությունների արդյունքների վկայագիրը դիմորդը, բուհ ընդունվելու դեպքում, համապատասխան բուհ է ներկայացնում մրցույթի ավարտից հետո:

48. Ընդունելության քննության արդյունքների բողոքարկումը քննելու նպատակով ԳԹԿ-ում ստեղծվում է ընդունելության քննությունների արդյունքների բողոքարկման հանձնաժողով (այսուհետ՝ բողոքարկման հանձնաժողով):

49. Միասնական քննության բողոքարկումը կարող է լինել՝

- 1) քննության անցկացման կարգի խախտման մասին,
  - 2) քննության արդյունքի հետ անհամաձայնության մասին:
50. Միասնական քննության անցկացման կարգի խախտման մասին բողոքարկումը անց է կացվում հետևյալ կերպ.
- 1) դիմորդը միասնական քննության անցկացման կարգի խախտման վերաբերյալ կարող է բողոքել քննության օրը (քննության պահին կամ ավարտից հետո՝ մինչև քննասենյակից դուրս գալը)՝ բողոքը ներկայացնելով պատասխանատու կազմակերպչին կամ ԳԹԿ-ի ներկայացուցչին.
  - 2) դիմորդը բողոք-դիմումը շարադրում է

ծախքի վրա, պատասխանատու կազմակերպիչը բողոք-դիմումի պատճենի կամ երկրորդ օրինակի վրա կատարում է «Ընդունված է՝ բողոքարկման հանձնաժողով ներկայացնելու համար» նշումը և վերադարձնում դիմորդին.

3) պատասխանատու կազմակերպիչը գրում է բացատրություն՝ այն կցնելով բողոք-դիմումին, և հանձնում կենտրոնի ղեկավարին.

4) կենտրոնի ղեկավարը, ստանալով պատասխանատու կազմակերպչի բացատրությունն ու դիմորդի բողոք-դիմումը, առանձին ծրարով, համապատասխան արձանագրության հետ միասին ներկայացնում է ԳԹԿ.

5) բողոքարկման հանձնաժողովը չի քննարկում բողոք-դիմում՝

ա. դիմորդի կողմից իր մեղքով քննական հրահանգների չկատարման հետևանքով առաջացած թերությունների վերաբերյալ,

բ. դիմորդի կողմից պատասխանների ձևաթղթի լրացման ընթացքում թույլ տրված վրիպումների կամ սխալների վերաբերյալ,

6) բողոքարկման հանձնաժողովը, քննարկելով բողոք-դիմումը, այն համարում է հիմնավոր, եթե գտնում է, որ բողոք-դիմումում շարադրված հանգամանքները դիմորդի կողմից առաջադրանքների ոչ լիարժեք կատարման պատճառ են դարձել.

7) բողոքարկման հանձնաժողովը բողոք-դիմումի վերաբերյալ որոշում է ընդունում բաց քվեարկությամբ, ծայրերի պարզ մեծամասնությամբ. ծայրերի հավասարության դեպքում բողոքարկման հանձնաժողովի նախագահն ունի վճռորոշ ձայն.

8) բողոքը հիմնավոր համարելու դեպքում բողոքարկման հանձնաժողովը որոշում է ընդունում դիմորդին թույլատրել մասնակցելու երկրորդ փուլի միասնական քննությանը:

51. Միասնական քննությունների արդյունքների հետ անհամաձայնության բողոքարկումը անց է կացվում հետևյալ կերպ.

1) միասնական քննության արդյունքի հետ անհամաձայնության դեպքում դիմորդին արդյունքների հրապարակման հաջորդ օրը ժամը 9:00-18:00 կարող է բողոք դիմումը անձամբ հանձնել քննական կենտրոնի պատասխանատու օպերատորին: Պատասխանատու օպերատորն ստացված բողոք-դիմումները ԳԹԿ է ուղարկում բողոքարկման ժամկետի ավարտից հետո՝ 24 ժամվա ընթացքում.

2) բողոք-դիմումի քննարկման արդյունքում կարող է ընդունվել որոշում՝ քննության արդյունքի պահպանման, բարձրացման կամ իջեցման մասին. բողոքարկման հանձնաժողովի ընդունած որոշման հիման վրա առաջին փուլի միասնական քննությունների բողոքարկման արդյունքները հրապարակվում են տվյալ փուլի վերջին քննության բողոքարկման ավարտից հետո եռօրյա ժամկետում, իսկ միասնական քննությունների երկրորդ փուլի բողոքարկման արդյունքները հրապարակվում են տվյալ փուլի վերջին քննության ավարտից հետո՝ եռօրյա ժամկետում:

**4. ԿԵՆՏՐՈՆԱՑՎԱԾ, ՆԵՐՔՈՒՅԱԿԱՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ, ԱՆՑԿԱՑՈՒՄԸ ԵՎ ԲՈՂՈՔԱՐԿՈՒՄԸ**

52. Ներբուհական ընդունելության քննությունների (այսուհետ՝ ներբուհական քննություններ) օրերն ըստ առարկաների հաստատում է ԳԹԿ-ի տնօրենը: Ներբուհական ընդունելության քննությունների անցկացման համար ԳԹԿ-ի տնօրենի հրամանով մինչև տվյալ տարվա հունիսի 10-ը ստեղծվում են առարկայական քննական հանձնաժողովներ (այսուհետ՝ քննական հանձնաժողով):

53. Քննական հանձնաժողովները կազմված են նախագահից, նախագահի տեղակալից և անդամներից:

54. Քննական հանձնաժողովը կազմում է քննական տոմսերը, տարբերակները և քննա-

կան այլ նյութեր, ստորագրում և ծրարում է քննական տոմսերի բնագրերը, որոնք կնքվում են բուհի ընդունող հանձնաժողովի պատասխանատու քարտուղարի կողմից:

55. Ներբուհական քննության արձանագրությունը պարտադիր կերպով ստորագրում է քննական հանձնաժողովի նախագահը:

56. Ներբուհական բանավոր քննության գնահատականը դիմորդին հայտնվում է նրա պատասխանի ավարտից անմիջապես հետո: Դիմորդն իրավունք ունի բանավոր քննության գնահատականը բողոքարկելու՝ դիմելով քննական հանձնաժողովի նախագահին՝ մինչև քննասենյակից դուրս գալը:

57. «Գծագրություն», «Գծանկար», «Գունանկար», «Նկարչություն», «Կոմպոզիցիա», առարկաների քննությունների արդյունքների բողոքարկումը անց է կացվում հետևյալ կերպ.

1) դիմորդը կարող է բողոքարկել իր գնահատականը ներբուհական գրավոր քննությունների գնահատականների ցուցակները փակցնելու հաջորդ օրը՝ ժամը 9:00-18:00-ի ընթացքում.

2) բողոքարկման համար դիմորդը դիմում է ներկայացնում պատասխանատու քարտուղարին. դիմումների ընդունման ժամկետի ավարտից հետո պատասխանատու քարտուղարը դիմումները հանձնում է քննական հանձնաժողովի նախագահին.

3) դիմումում նշվում է ներբուհական գրավոր քննական աշխատանքի այն հատվածը, որի գնահատման հետ դիմորդը համաձայն չէ.

4) բողոքարկման ժամանակ հանձնաժողովը վերանայում է միայն դիմորդի կողմից նշված հատվածը (հատվածները), մյուս հատվածների վերանայումը և վերագնահատումը չի թույլատրվում.

5) քննական հանձնաժողովի նախագահը և հանձնաժողովի՝ բողոքարկված ներբուհական գրավոր քննության քննական աշխատանքը ստուգած անդամը քննարկում են ներբուհական գրավոր քննական աշխատանքի բողոքարկված հատվածը՝ դիմորդի և նրա կողմից հրավիրված մասնագետի հետ.

6) բողոքարկված ներբուհական գրավոր քննության քննական աշխատանքի գնահատականը կարող է բարձրացվել, իջեցվել կամ չփոփոխվել.

7) բողոքարկման արդյունքները լրացվում են գնահատման էջի համապատասխան մասում, պարտադիր գրախոսվում քննական հանձնաժողովի նախագահի կողմից և հանձնվում պատասխանատու քարտուղարին.

8) ներբուհական գրավոր քննության քննական աշխատանքի բողոքարկման արդյունքը ոչ ուշ, քան եռօրյա ժամկետում հրապարակվում է ներբուհական գրավոր քննության քննական կենտրոնում.

9) ներբուհական գրավոր քննության բողոքարկված քննական աշխատանքի վերագնահատման հետ անհամաձայնության դեպքում բողոքարկման արդյունքի հրապարակման հաջորդ օրը ժամը 9:00-18:00-ի ընթացքում դիմորդը կարող է դիմել ԳԹԿ-ի բողոքարկման հանձնաժողովին.

10) ԳԹԿ-ի բողոքարկման հանձնաժողովի կողմից հրավիրված փորձագետը, որը պետք է ունենա տվյալ առարկայից առնվազն հինգ տարվա մասնակալական գործունեության փորձ և համապատասխան մասնագիտության գիտական աստիճան, ներկայացնում է եզրակացություն, որի հիման վրա բողոքարկման հանձնաժողովը մեկօրյա ժամկետում ընդունում է վերջնական որոշում՝ գնահատականը բարձրացնելու, իջեցնելու կամ նույնը թողնելու մասին.

11) սույն կետի 10-րդ ենթակետով նախատեսված բողոքարկման ընթացքում վերանայվում է ներբուհական գրավոր աշխատանքի միայն բողոքարկված մասը.

12) գնահատականի փոփոխման դեպքում բողոքարկման հանձնաժողովի նախա-

գահի ստորագրությամբ կազմվում է համապատասխան արձանագրություն:

58. Հարգելի պատճառով ներբուհական և կենտրոնացված քննությանը չներկայացած դիմորդներն ընդունող հանձնաժողով են ներկայացնում դիմում և բացակայությունը հիմնավորող փաստաթղթեր: Ընդունող հանձնաժողովի պատասխանատու քարտուղարն ընդունում է դիմումները, ստուգում և փաստաթղթերը ներկայացնում բողոքարկման հանձնաժողով՝ լրացուցիչ քննության թույլատրելու համար:

59. Ներբուհական և կենտրոնացված քննության ընթացքում հիվանդության պատճառով քննությունն ընդհատած դիմորդի վերաբերյալ կազմվում է արձանագրություն հանձնաժողովի նախագահի, ընդունող հանձնաժողովի պատասխանատու քարտուղարի ու ԳԹԿ-ի ներկայացուցչի կողմից: Քննական հանձնաժողովի նախագահն արձանագրությունը ներկայացնում է ԳԹԿ-ի բողոքարկման հանձնաժողով՝ քննության ավարտից անմիջապես հետո: Բողոքարկման հանձնաժողովն արձանագրության հիման վրա որոշում է ընդունում քննությունն ընդհատած դիմորդին լրացուցիչ քննության թույլատրելու և օր նշանակելու մասին:

60. Տվյալ առարկայի քննությունների վերջին օրը բացակայած կամ քննությունն ընդհատած դիմորդները չեն կարող հանձնել այդ քննությունը:

**5. ԲՈՒՀԵՐԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ՄՐՑՈՒՅԹԻ ԱՆՑԿԱՑՈՒՄԸ**

61. Բուհերի՝ ըստ անվճար և վճարովի ուսուցման համակարգերի ընդունելության մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ հիմնական և թափուր տեղերի (լրացուցիչ): Միասնական և կենտրոնացված քննությունների արդյունքներով մրցույթն անցկացվում է ԳԹԿ-ում, իսկ ներբուհական քննությունների արդյունքներով՝ համապատասխան բուհում:

62. Դիմորդն անվճար և վճարովի ուսուցմամբ հայտագրած համապատասխան մասնագիտության մրցույթին մասնակցում է մրցութային քննություններից ստացած դրական միավորների գումարով՝ հարյուրերորդական մասի պահպանմամբ: Բուհ ընդունված դիմորդների ցուցակը կազմվում է մասնագիտության համար սահմանված ընդունելության մրցութային քննություններից ստացած միավորների գումարի նվազման կարգով: Անհրաժեշտ է նաև, որ ցանկի տվյալ մասնագիտության նշված մեկ աստղանիշով (\*) ընդունելության ոչ մրցութային քննությունից դիմորդը ունենա դրական միավոր: Ընդունելության ոչ մրցութային քննության արդյունքն է դիմորդի՝ տվյալ առարկայից պետական ավարտական քննության գնահատականը, իսկ պետական ավարտական քննական գնահատականի բացակայության դեպքում՝ տարեկան գնահատականը:

63. Ընդունելության քննությունները գնահատվում են 20 միավորային համակարգով: Բոլոր միավորները գնահատվում են հարյուրերորդական մասի պահպանմամբ՝ տվյալ առարկայի գնահատման չափանիշներով սահմանված քայլերին համապատասխան: Միասնական քննություններում դրական են համարվում 7,5 և բարձր միավորները: Ներբուհական քննությունների համար դրական են համարվում ութ և բարձր միավորները:

64. Մասնագիտության մրցույթն անցկացվում է ընդունելության դիմում-հայտի առաջին տողով ընտրված բուհի՝ անվճար և վճարովի ուսուցման հայտի գերակայությամբ:

65. Առաջին հայտագրված բուհի մրցութով չանցած դիմորդների համար մրցույթն անցկացվում է ընդունելության դիմում-հայտում հայտագրված բուհերի հերթականությանը համապատասխան, եթե նշված բուհի տվյալ մասնագիտության համար առկա են թափուր տեղեր:

ԿԱՐԳ

**11** 66. Ընդունելության դիմում- հայտում հայտագրված մասնագիտության որևէ բուհի (ըստ հայտագրման հերթականության) ընդունված դիմորդը չի մասնակցում հայտագրված հաջորդ բուհերի մրցույթին: Իսկ չընդունված դիմորդը ըստ հերթականության մասնակցում է հաջորդ բուհերի մրցույթին:

67. Անվճար տեղերի մրցույթին դիմորդը կարող է մասնակցել միայն ընդունելության քննությունների արդյունքներով՝ բացի Արցախի պետական համալսարանի և Շուշիի տեխնոլոգիական համալսարանի «\*» նշանով նշված մասնագիտություններից: Արցախի պետական համալսարանի և Շուշիի տեխնոլոգիական համալսարանի «\*» նշանով նշված մասնագիտությունների անվճար ուսուցման համակարգի մրցույթին կարող են մասնակցել նաև այն դիմորդները, ովքեր մասնագիտությունների և քննությունների ցանկում երկու աստղանիշով նշված առարկաների համար որպես մրցութային գնահատական ընդունելության դիմում-հայտում նախապես հայտագրել են միջնակարգ կրթության աստեստատի կամ միջին մասնագիտական կամ նախնական մասնագիտական ուսումնական հաստատության ավարտական փաստաթղթի՝ պետական ավարտական քննությունների գնահատականները, իսկ պետական ավարտական քննական գնահատականի բացակայության դեպքում՝ տարեկան գնահատականը առաջնահերթությունը տրվում է այն դիմորդներին, ովքեր մրցույթին մասնակցում են երկու առարկաներից միասնական քննությունների արդյունքներով:

68. Վճարովի տեղերի մրցույթին դիմորդը կարող է մասնակցել և ընդունելության քննությունների արդյունքներով, և բուհերի ընդունելության քննությունների ցանկում երկու աստղանիշով (\*\*\*) նշված առարկայի համար՝ որպես մրցութային գնահատական ընդունելության դիմում-հայտում հայտագրված միջնակարգ կրթության աստեստատի կամ միջին մասնագիտական, կամ նախնական մասնագիտական ուսումնական հաստատության ավարտական փաստաթղթի պետական ավարտական քննական գնահատականով, իսկ պետական ավարտական քննական գնահատականի բացակայության դեպքում՝ տարեկան գնահատականով: Վճարովի տեղերի մրցույթին առաջնահերթությունը տրվում է ընդունելության մրցութային առավել թվով քննություններ հանձնած դիմորդներին: Նույն քանակի ընդունելության քննություն հանձնած և երկու աստղանիշով (\*\*\*) առարկայի համար ավարտական փաստաթղթի գնահատականը ներկայացրած դիմորդների դեպքում առավելությունը տրվում է ընդունելության քննությունից ավելի բարձր միավոր ունեցող դիմորդին, իսկ ընդունելության քննությունից հավասար միավորների առկայության դեպքում առավելությունը տրվում է ավարտական փաստաթղթում երկու աստղանիշով (\*\*\*) առարկայից առավել բարձր միավոր ունեցողին:

69. Հայաստանի Հանրապետության պետական բուհերում Արցախի Հանրապետությանը հատկացված նպատակային անվճար տեղերի մրցույթին մասնակցում են Արցախի Հանրապետությունում գրանցում ունեցող և Արցախի Հանրապետության ուսումնական հաստատությունները ավարտած, նաև մինչև 2020 թվականի սեպտեմբերի 27-ը Արցախի Հանրապետության ուսումնական հաստատությունների 12-րդ դասարաններում սովորող դիմորդները, ովքեր նախօրոք, ըստ հաստատված կարգի, հայտագրված են եղել համապատասխան մասնագիտությանը և հավաքել են տվյալ բուհի համար սահմանված ընդունելության քննությունների առավելագույն դրական միավորների հանրագումարի 75%-ը: Հայաստանի Հանրապետության պետական բուհերում Արցախի Հանրապետությանը հատկացված նպատակային անվճար

տեղերի դիմորդների և նրանց ծնողների հետ Արցախի Հանրապետության կառավարությունը՝ ի դեմս համապատասխան պետական մարմինների, կնքում է պայմանագիր՝ բուհին ավարտելուց հետո Արցախի Հանրապետությունում մասնագիտությամբ պարտադիր աշխատելու վերաբերյալ:

70. Ընդունելության մրցութային առարկաների քննություններից գումարային հավասար միավորների դեպքում, ըստ հերթականության, առավելություն է տրվում՝

- 1) բոլոր տարիների մեդալակիր դիմորդներին.
- 2) ներբուհական քննություններ հանձնած արվեստի գծով միջազգային և հանրապետական մրցույթների հաղթողներին՝ դիմում-հայտում համապատասխան մասնագիտություն հայտագրելու դեպքում.
- 3) հանրակրթական ուսումնական հաստատություններում 10-12-րդ դասարաններում սովորելու ընթացքում դպրոցականների հանրապետական առարկայական օլիմպիադաների առաջին կարգի դիպլոմ ստացած դիմորդներին, եթե այն համապատասխանում է տվյալ մասնագիտության ընդունելության քննությանը.
- 4) պետական ավարտական քննություններից միջին թվաքանակն առավել բարձր գնահատական ունեցող դիմորդներին.
- 5) տվյալ մասնագիտությանը համապատասխան միջին մասնագիտական կրթություն ստացած դիմորդներին:

71. Բուհերի այն մասնագիտությունների գծով, որոնց քննությունների անվանացանկում առարկաները նշված են երկու աստղանիշով (\*\*), մրցույթին մասնակցելու համար պետական ավարտական քննությունների և տարեկան գնահատականները 20 միավորանոց համակարգին հավասարեցվում են հետևյալ կերպ.

- 1) 10 միավորային համակարգով տարեկան գնահատականները համապատասխանաբար հավասարեցվում են հետևյալ միավորներին.
  - ա. «4»-ը համարժեք է 9 միավորին.
  - բ. «5»-ը համարժեք է 11 միավորին.
  - գ. «6»-ը համարժեք է 13 միավորին.
  - դ. «7»-ը համարժեք է 15 միավորին.
  - ե. «8»-ը համարժեք է 17 միավորին.
  - զ. «9»-ը համարժեք է 19 միավորին.
  - է. «10»-ը համարժեք է 20 միավորին.

2) միջնակարգ կրթության աստեստատի կամ համապատասխան ավարտական փաստաթղթի 5 միավորային համակարգով գնահատված տարեկան, քննական գնահատականները համապատասխանաբար հավասարեցվում են հետևյալ միավորներին.

- ա. «3»-ը համարժեք է 13 միավորին.
- բ. «4»-ը համարժեք է 17 միավորին.
- գ. «5»-ը համարժեք է 20 միավորին:

72. Ընդունելության քննությունները դրական միավորներով հանձնելու դեպքում, Արցախի Հանրապետության պետական բյուջեի միջոցների հաշվին, մրցույթից դուրս ընդունվում են Հայաստանի Հանրապետության և Արցախի Հանրապետության պաշտպանության ժամանակ զոհված (մահացած) զինծառայողների ծնողները, ամուսինը (կինը), մինչև 27 տարեկան զավակները, ժամկետային զինվորական ծառայության պարտակառուցությունները կատարելիս հաշմանդամ դարձած քաղաքացիները՝ համաձայն Հայաստանի Հանրապետության և Արցախի Հանրապետության պաշտպանության նախարարությունների, Արցախի Հանրապետության ներքին գործերի նախարարության, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր ոստիկանության, Արցախի Հանրապետության և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր ազգային անվտանգության ծառայությունների կողմից տված տեղեկանքների:

73. Վճարովի համակարգի համար առն-

վազն անցումային միավորներ հավաքելու դեպքում անվճար ուսուցման համակարգ են ընդունվում՝

- 1) 1-ին և 2-րդ խմբի հաշմանդամություն ունեցող անձինք և մինչև 18 տարեկան հաշմանդամ երեխաները.
- 2) առանց ծնողական խնամքի մնացած մինչև 23 տարեկան երեխաները:

74. Մարտական հերթապահություն իրականացնող զորամասերում պարտադիր ժամկետային զինվորական ծառայություն անցած և զորացրված դիմորդները՝ զորացրվելուց հետո մեկ տարվա ընթացքում ընդունելության քննությունները դրական միավորներով հանձնելու դեպքում՝

1) ընդհանուր մրցույթից դուրս (առանձին մրցույթով) անվճար ուսուցմամբ ընդունվում են՝ ըստ մասնագիտությունների՝ Արցախի Հանրապետության կառավարության կողմից հաստատված տեղերի: Մրցութային հավասար միավորների դեպքում մրցույթը իրականացվում է սույն կարգի 70-րդ կետի պահանջների համաձայն.

2) տվյալ մասնագիտությունից Արցախի Հանրապետության կառավարության կողմից բանակից զորացրվածների համար անվճար տեղեր հատկացված չլինելու դեպքում անվճար ուսուցման մրցույթին մասնակցում են ընդհանուր հիմունքներով.

3) անվճար ուսուցման մրցույթից դուրս մնալու դեպքում բուհի նույն մասնագիտության վճարովի ուսուցման համակարգ ընդունվում է մրցույթից դուրս:

75. Առանց ընդունելության քննությունների Արցախի Հանրապետության կառավարության կողմից հատկացված պահուստային տեղերի հաշվին բուհ են ընդունվում միջնակարգ դպրոցի հանրակրթական առարկաների գծով, կրթության կառավարման պետական լիազոր մարմնի կողմից ծանաչված, միջազգային օլիմպիադաների անհատական մրցանակակիրները, ինչպես նաև տարբեր մարզձևերի գծով աշխարհի և Եվրոպայի առաջնությունների, օլիմպիական խաղերի մեդալակիրները՝ մրցանակը ստանալուց հետո երեք տարվա ընթացքում ընդունելության դիմում-հայտում համապատասխան մասնագիտություն հայտագրելու դեպքում:

76. Հանրապետական ընդունող հանձնաժողովը բուհերի ընդունելության մրցույթի հիմնական փուլի արդյունքները հաստատում է մինչև տվյալ տարվա հուլիսի 18-ը:

77. Ներբուհական քննությունների արդյունքներով ընդունելության մրցույթը անցկացվում է համապատասխան բուհում և հաստատվում է հանրապետական ընդունող հանձնաժողովում, որից հետո համապատասխան բուհի ղեկավարը հրամանագրում է ուսանողներին:

78. Հանրապետական ընդունող հանձնաժողովի կողմից ընդունելության քննությունների հիմնական փուլի մրցույթի արդյունքները հաստատվելուց հետո, բուհերում մասնագիտությունների թափուր տեղերի առկայության դեպքում, ընդունելության քննություններից դրական միավորներ ստացած, սակայն մրցույթից դուրս մնացած դիմորդները կարող են մասնակցել թափուր տեղերի մրցույթին: Թափուր տեղերի մրցույթին մասնակցելու համար դիմորդները մասնագիտությունների նշումով նոր դիմում-հայտը ԳԹԿ են ուղարկում էլեկտրոնային (առցանց) եղանակով հուլիսի 19-ից մինչև հուլիսի 26-ը՝ ժամը 18.00:

79. Դիմորդները ընդունելության դիմում-հայտում իրենց ընտրությամբ և ցանկացած հաջորդականությամբ հայտագրում են թափուր տեղեր ունեցող մասնագիտությունները՝ ըստ ուսուցման անվճար և վճարովի համակարգերի:

80. Համաձայն ընդունելության դիմում-հայտի՝ դիմորդը կարող է մասնակցել մեկ կամ մի քանի բուհերի մինչև երկու անվճար և մինչև վեց վճարովի մասնագիտությունների

թափուր տեղերի մրցույթին, եթե ընտրած մասնագիտության համար պահանջվող ընդունելության մրցութային քննություններից ունի դրական միավորներ:

81. Թափուր տեղերի մրցույթի անցկացման ժամանակ նախապատվությունը տրվում է տվյալ մասնագիտության ընդունելության մրցութային քննություններից առավել բարձր միավոր ունեցող դիմորդին:

82. Թափուր տեղերի ընդունելության դիմում-հայտում հայտագրված որևէ մասնագիտությամբ (ըստ հայտագրված հերթականության) ընդունված դիմորդը չի մասնակցում հայտագրված հաջորդ մասնագիտությունների մրցույթին, իսկ չընդունված դիմորդը ըստ հերթականության մասնակցում է հաջորդ մասնագիտությունների մրցույթին:

83. Հանրապետական ընդունող հանձնաժողովը բուհերում թափուր տեղերի մրցույթի արդյունքները հաստատում է հուլիսի 30-ին:

84. Դիմորդը բուհ ընդունվելուց հետո ներկայացնում է՝

- 1) ավարտական փաստաթուղթ՝ աստեստատ կամ դիպլոմ (բնօրինակը).
- 2) 1 լուսանկար (3 x 4 չափսի).
- 3) անձը հաստատող փաստաթղթի (անձնագիր, նույնականացման քարտ, ծննդյան վկայական) բնօրինակը.
- 4) զինվորական գրքույկ (բնօրինակը)՝ առկայության դեպքում.
- 5) սույն կարգի 71-74-րդ կետերով սահմանված արտոնություններից օգտվող դիմորդները ներկայացնում են տվյալ արտոնություններից օգտվելու իրավունքը հավաստող փաստաթղթեր.
- 6) միջազգային և հանրապետական մրցույթների դիպլոմները.
- 7) ներբուհական յուրաքանչյուր քննության մասնակցելու, ինչպես նաև փաստաթղթեր ընդունելու և ձևակերպելու համար 1500-ական դրամ վճարելու վերաբերյալ անդորրագիրը. սույն կարգի 71-րդ և 72-րդ կետերով սահմանված արտոնություններից օգտվող դիմորդները ազատվում են նշված վճարից:

**6. ԲՈՒՒՅԵՐԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԸՆԴՈՒՆՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԸ**

85. Բուհերի ընդունելության հանրապետական ընդունող հանձնաժողովը կազմված է 11 անդամից: Հանրապետական ընդունող հանձնաժողովի նախագահը նախարարն է: Հանրապետական ընդունող հանձնաժողովի կազմում ընդգրկվում են նախարարի տեղակալը, Արցախի Հանրապետության նախագահի աշխատակազմի ներկայացուցիչը, Արցախի Հանրապետության ազգային անվտանգության ծառայության ներկայացուցիչը, ԳԹԿ-ի տնօրենը, բուհերի ղեկավարները և պատասխանատու քարտուղարը: Հանրապետական ընդունող հանձնաժողովի կազմը հաստատում է նախարարը:

86. Հանրապետական ընդունող հանձնաժողովի որոշմամբ՝

- 1) հաստատվում են անվճար և վճարովի ուսուցման համակարգի մրցույթների արդյունքները.
- 2) հաստատվում են սույն կարգի 72-75-րդ կետերին համապատասխան արտոնություններից օգտվող դիմորդների ընդունելության արդյունքները.
- 3) վերաբաշխվում են մրցույթի արդյունքներով անվճար, վճարովի ուսուցման համակարգում թափուր մնացած տեղերը, ինչպես նաև անվճար, վճարովի համակարգի պահուստային տեղերը:

**ԱՐՑԱՒԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ՝ Ա. ԼԱԶԱՐՅԱՆ**



ՍՈՑԻԱԼԱՅԻՆ ԹՅՈՒՆ

ԱՐՅԱՆՅՈՒՆ ԿԱՄԱՎՈՐՆԵՐԸ ՄԱՍՆԱԿՅՆԷԼ ԵՆ ՌԴ-ՈՒՄ ԿԱԶՄԱԿԵՐՊՎԱԾ ՀԱՎԱՔԻՆ

Մայիսի 5-10-ը ՌԴ Կարաչաևո-Չերկասկի Գերատեսչության նախագահի «Դոբրոգրադ-2021» Ռուսաստանի կամավորների 22-րդ հավաքը, որին մասնակցել են Արցախից կամավորներ:

Այդ մասին մեզ հետ ունեցած զրույցում պատմեց ԱՅ ԿԳՄՍՆ երիտասարդական հարցերի բաժնի առաջատար մասնագետ, «Լուսարար»-ի աշխատակից, կամավորական Անուշ Մարտիրոսյանը:

Հրավերը ԱՅ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի հասցեով ստացվել էր Ռուսաստանի Դաշնությունից: Քանի որ 44-օրյա պատերազմի ընթացքում քիկուների կամավորական աշխատանքները համակարգել է այս գերատեսչությունը, նա էլ ընտրել է 7 ակտիվ երիտասարդների, այնքան, որքան պահանջվում էր հրավերով: Նախարարության ֆինանսավորմամբ Անուշ Մարտիրոսյանի ղեկավարությամբ ՌԴ են մեկնել Նարեկ Սարգսյանը՝ «Ջեռանկար» ՅԿ անդամ, Լիլիթ Ավանեսյանը՝ Ստեփանակերտի Սայաթ-Նովայի անվան երաժշտական քոլեջի դասատու, երգչուհի, Մարիետա Թումասյանը՝ սպորտպարոն մեթոդիստ, Օզնեսա Պողոսյանը՝ ոստիկանության աշխատակից, Նարինե Խաչիկյանը՝ կիթառահար Շուշից, Սարիբեկ Չայրապետյանը՝ փայտագործ, ապրում էր Ջրակամում, պատերազմի ժամանակ վիրավորների և զոհվածների է հանել մարտի դաշտից:

Խմբի ղեկավարը պատմեց, որ հավաքն անց է կացվել Զյուսիսային Կովկասի՝ բնակչման ապահովման գրասենյակի Արիստոսի կամավորների:

Հավաքի հանդիսավոր բացմանը խոսք էր տրվել Արցախի Գերատեսչության ներկայացուցչին: Ելույթ ունեցողը՝ Ա. Մարտիրոսյանը, ասաց, որ իրեն հենց այդպես էլ ներկայացրել էին: Իր ելույթում նա մասնավորապես ասել է, որ եկել են մի երկրից, որտեղ դեռ թաց են պատերազմի վերքերը, որը մեր ժողովրդի վզին են փաթաթել Ադրբեջանը և Թուրքիան՝ մինչև ատանմանը զինված գերմանականակից զինտեխնիկայով, ներգրավելով միջազգային ահաբեկիչների: 44 օր մեր քաջարի ժողովուրդը

պաշտպանվել է, բայց ուժերն անհավասար էին, և ավաղ, մենք կորցրինք մեր հայրենիքի մեծ մասը: Նա նշել է նաև Բաքվում պահվող հայ գերիների, տնանկ դարձած հազարավոր փախուտականների մասին: «Խնդիրները բազմաթիվ են, բայց կյանքը շարունակվում է, և Արցախն անպայման շատ շուտով ոտքի կկանգնի: Այսօր հաստատված է փխրուն խաղաղություն, որն



ապահովում են Արցախի պաշտպանության բանակը և ՌԴ խաղաղապահ ուժերը»: Խոսելով պատերազմի ժամանակ կամավորների կատարած աշխատանքի մասին՝ ասել է, որ այսօր էլ իրենց գործունեության դաշտը բավականին մեծ է, և յուրաքանչյուրը պատրաստ է իր ներդրումն ունենալ հետպատերազմյան դժվարությունների վերացման և կյանքը բնականոն հունի մեջ դնելու: Նշել է, որ այսօր կամավորական շարժման ամենակարևոր խնդիրը բնակչության մեջ հավատի վերականգնումն է Արցախի լուսավոր ապագայի նկատմամբ: Ինչքան էլ դժվար լինի, արցախցին ձգտում է վերածնվել մոխիրներից: Բայց առանց բարի կամքի տեր մարդկանց օգնության դժվար կլինի: Նա շնորհակալություն է հայտնել Ռուսաստանի Դաշնությանը, այնտեղ բնակվող հայերին՝ բարոյական և նյութական աջակցության համար, ինչը ոգեշնչում է Արցախին, որ դժվար պահերին մեկնակ է:

Ինչպես հավաստեց Ա. Մարտիրոսյանը,

հավաքի բոլոր օրերը գերհագեցած էին: Օրական երեք թրեյնինգների էին մասնակցում, որոնք վարում էին ՌԴ ճանաչված մասնագետներ: Նրա տպավորությամբ՝ Ռուսաստանի և Արցախի կամավորների խնդիրները տարբեր են: Այնտեղ նրանց աշխատանքներն ավելի շատ ուղղված են երիտասարդության շրջանում թմրամոլության դեմ պայքարին, անօթևան մնացած մարդկանց, որբանոցներում հայտնված հաշմանդամ երեխաներին, անօգնական ծերերին օգնության ձեռք մեկնելուն: Թրեյնինգները հազեցած էին ինչպես տեսական, այնպես էլ գործնական պարասմունքներով՝ հոգեբանական, առաջին բուժօգնության, ընտանիքներում կոնֆլիկտները հաղթահարելու և այլ ուղղությամբ:

Ծրագրում ազատ ժամանցի համար ևս ժամանակ էր հատկացված. այցելություններ տեսարժան վայրեր, համերգային պահեր: Մայիսի 9-ին նշել են Մեծ Զայրենականում տարած հաղթանակը: Մեր մասնակիցներն առիթը բաց չթողեցին ռուսական երգերի հետ մեկտեղ կատարել հայկական երգեր, այդ

թվում Արթուր Գրիգորյանի «Արցախ»-ը՝ իրենց կողմից արված համապատասխան տեսահոլովակի ցուցադրումով: Դա անչափ հուզել էր մասնակիցներին, ոմանց աչքերում նույնիսկ արցունքներ էին հայտնվել, ասաց Ա. Մարտիրոսյանը:

Նշենք, որ մասնակիցները, որոնք տարբեր ազգության ներկայացուցիչներ էին, այդ թվում՝ ադրբեջանցիներ, ՌԴ քաղաքացիներ էին: Դրսից հրավիրվածները միայն արցախցիներն էին: Անշուշտ, հնարավոր չէր, որ ադրբեջանցի մասնակիցները տեսարան չարթբեին: Նրանց հատկապես հուճից հանել էր, որ հավաքի կազմակերպիչներն արցախցիներին հենց այդպես էլ կոչում էին, որոնք էլ թույլ չտվեցին, որ այդ առնչությամբ ադրբեջանցիները գործի դնեն իրենց դժգոհությունը:

Ա. Մարտիրոսյանը մանրամասնեց, որ հավաքի գլխավոր ղեկավար Վալերի Միտրոֆա-Նենկոն 2019-ին այցելել էր Արցախ և կամավորների համար դասընթացներ անցկացրել: Եղել էր Արցախի տեսարժան վայրերում: Պլանավորել էր 2020թ. սեպտեմբերի վերջին և հոկտեմբերի սկզբին կրկին այցելել ու արցախցի կամավորների հավաք կազմակերպել, սակայն պատերազմը խանգարեց: Մեր խմբի անդամները սիրով հրավիրեցին նրան Արցախ առաջատար դասընթացավարների հետ միասին: Նրանք էլ հույս հայտնեցին, որ արցախցիները կմասնակցեն նաև հաջորդ կամավորների ծննդային հավաքին:

Ա. Մարտիրոսյանը նշեց, որ Վ. Միտրոֆա-Նենկոն համագործակցում է հայ համայնքի հետ: Մեր կամավորականները եղել են տեղի հայ համայնքի ուղարկության և հոգածության կենտրոնում: Կազմակերպել է նրանց դիմավորումն ու ճանապարհունը, հյուրասիրությունը: Հայ համայնքը նույնպես ունի կամավորներ:

Հավաքի փակման արարողությանը Արցախի կամավորների խումբը կազմակերպիչների կողմից պարգևատրվել է շնորհակալագրով և կամավորական շարժումը խորհրդանշող արձանիկով, ինչի կապակցությամբ ելույթով իր շնորհակալությունն է հայտնել Ա. Մարտիրոսյանը:

Ս. ԽԱԶՄՐՅԱՆ




1920 ԹՎԱԿԱՆԻ ՇՈՒՆԻ ԿՈՏՈՐԱԾԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄՆ ՌԴ ՈՂԲԵՐՈՎԱԿԱՆ ՕՐԵՐԻ ՄԱՍԻՆ ՀՈՒՆԵՐԸ

1920 թվականի մարտի 23-26-ն ընկած ժամանակահատվածում Արցախի Շուշի քաղաքում տեղի ունեցավ հայերի կոտորած: Սակայն մինչև բուն գործողությունները հետաքրքիր դեպքեր և իրադարձություններ տեղի ունեցան Արցախում: Նախքան կոտորածներն ամեն ինչ արվում էր, որպեսզի Շուշին մեկուսացման մեջ հայտնվի, և փակվեն քաղաքը սնուցող ճանապարհները: Նախ հայերի համար փակվեց Շուշի-Աղդամ ճանապարհը, և քաղաքի հայ բնակչությունը հայտնվեց տնտեսական շրջափակման մեջ: Այդ ամենին հաջորդեց արցախահայության բռնի զինաթափումը: Պետք է ընդգծել, որ զինաթափման տակտիկան թուրքերն օգտագործել էին նաև Շուշիի դեպքերից առաջ՝ 1915 թվականի կոտորածների ժամանակ:

Թուրքերը լավ գիտակցում էին, որ հայերը լավ մարտիկներ են, այդ իսկ պատճառով նրանք նախ զինաթափեցին հայերին, այնուհետև կարողացան իրականացնել իրենց սարսափելի ոճիրը: Նույն ձեռագիրը գործեց նաև Շուշիի կոտորածի դեպքում: Մի շարք վարկածների համաձայն, Շուշիի կոտորածների կազմակերպիչ Սուլթանովի հայերի զինաթափման մասին հուշել են թուրքերը, քանի որ նրանք մեկ անգամ արդեն իսկ այդ մեթոդով հասել էին իրենց համար ցանկալի հաջողության: 3 օրվա ընթացքում Արցախի հայությունը հանձնեց գեներալը: Ինքնապաշտպանության տարբերակը վերացնելուց առաջ Բաքվից Արցախ էր ուղարկվել մի քանի տասնյակ վազոն գեներալ և զինամթերք:

Արդեն իսկ մարտի 22-ին Սուլթանովի հրամանով Արցախում գտնվող թուրք-թաթարական զորքերը սկսեցին խուզարկություններ իրականացնել նաև Շուշիում: Խուզարկություններն իրականացվում էին բացառապես զինաթափման հարթուրաների վրա: Այդ գիշերը ուժեղ քամի էր: Քամին տարածեց հրդեհը, չոր թախթափուշերը հեշտությամբ վառվեցին, և



պես հայկական թաղամասերում: Խուզարկության անվան տակ նրանք բռնի զինաթափեցին նաև Շուշիի բնակչությանը, իսկ արդեն հաջորդ օրը՝ մարտի 23-ին, Սուլթանովի և մի շարք թուրք սպաների ղեկավարությամբ զորքերը մտան Շուշի, և սկսվեց հայերի կոտորածը: Այդ օրերի մասին բացառիկ ու հետաքրքիր հուշեր է ներկայացնում հայ ակադեմիկոս լեզվաբան Հրաչյա Աճառյանը: Նա իր «Կյանքիս հուշերից» գրքում մասնավորապես նշում է.

«...Ազգամիջյան կռիվների ժամանակ արդեթանցի ազգայնամուլները ամբողջ քաղաքը իրո ճարակ դարձավ... Այսպես դատարկվեց Շուշին ու մեռավ... Նրաբաղցիք, ինչպես հայտնի է, լավ կռվողներ են եղել միշտ, և այդ օրն էլ կարող էին դիմադրել, բայց, ինչպես ասացի, հարձակումը բոլորովին հանկարծակյան եղավ, և հայերն էլ ոչ մի պատրաստություն չունեին»:

«Հազարավոր այրված գյուղեր, քարուքանդ եղած քաղաքներ, երեխաների և կանանց հափշտակում: Անցյալ տարի, նախքան խորհրդային իշխանությունների հաստատվելը, հայկական Շուշի քաղաքը խայտառակ ձևով ոչնչացնելը, բռնաբարություն, կոտորած, երեխաներին ու կանանց հորերն ու անդունդները գցելը. այս է Անդրկովկասում նացիոնալիզմի տիրապետության անփառունակ շրջանը: Կանցի ժամանակ, կրքերը կմեղմանան, և մեր սերունդները անմեծքով կհիշեն նրանց, ովքեր եղել են այս նողկալիության հանցավորները»:

(Հատվածը վերցված է Ս.Օրջոնիկիժի «Ընտիր հողվածներ և ծառեր» գրքից: Երևան, 1950 թվական, էջ 75):

Շուշիում տեղի ունեցած վայրագություններն անարձագանք չմնացին, և մի շարք թերթեր ու պարբերականներ գրեցին հայերի կոտորածների մասին: Մասնավորապես մամուլի ամերիկացի մասին մենք հանդիպում ենք Վլադիմիր Սլյանի «Շուշի» գրքում.

«Բաքվի «Կոմունիստ» թերթը 1920-ի հունիսի 2-ի համարում գրում է. «Ղարաբաղում արյունալի կռիվներ են տեղի ունեցել: Շուշիում հազարավոր հայեր են կոտորվել, ինտելիգենցիան զգալի զոհեր է տվել, կոմունիստները կորցրել են Ծատուրյանին, Ֆիրջանյանին, Ջանույանին»:

(Հատվածը վերցված է Վլադիմիր Սլյանի «Շուշի» գրքից: Երևան, 1991 թվական, էջ 82):

Մեկ այլ մեջբերում արվում է վրացական թերթերից մեկի արձագանքի մասին.

«Շուշվա կործանման առթիվ

ԳՆԱՀԱՏԱՆԸ

ՊԱՐԳԵՎՆԵՐ ՊԱՐԻ ԶԱՏԱԳՈՎՆԵՐԻՆ



Ստեփանակերտի պարարվեստի պետական թուղթուր մայիսի 14-ին տեղի ունեցավ պարզևատրոման արարողություն: Ավելի վաղ՝ Պարի միջազգային օրվա կապակցությամբ, ԱՀ նախագահ Արայիկ Զարությունյանի հրամանագրով Ստեփանակերտի պարարվեստի թուղթի դասական

պարի բաժնի վարիչ Տատյանա Միրզոյանը պարզևատրվել է «Վաչագան Բարեպաշտ» մեդալով: Պարզերը հանձնեց ԿԳՄՍ նախարար Լուսինե Ղարախանյանը:

- Պարը եղել է շարունակում է մնալ մեր պայքարի ոգին, մեր հոգեկերտվածքի դրսևորումը, մեր կամքի հարատևումը,- Գնել է նախարարը: Մենք շնորհակալ ենք պարարվեստի բոլոր մասնագետներին, պարուսույցներին, որոնք պարի միջոցով մեր ազգային մշակույթը փոխանցում են աճող սերունդին, մեր ոգին դարձնում են պայքարող:

Ազգային պարի ավանդույթների տարածման, պարարվեստի բնագավառում ունեցած երկարամյա արդյունավետ աշխատանքային գործունեության համար և Պարի միջազգային օրվա կապակցությամբ ԿԳՄՍ նախարարության պատվոգրերով ու նվերներով պարզևատրվել են Ստեփանակերտի պարարվեստի պետական թուղթի պարուսույցները և Արգաիսի պարի պետական համույթի պարողները:

Մշակութային Արցախ

Շնորհավորանք

ՇՆՈՐՀԱՎՈՐ ՀՈՒՆՎԱՆՆԵՐ, ՍԻՐԵԼԻ ԳՈՐԾՆԵՐ



Խորին հարգանքով ու երախտագիտությամբ Ստեփանակերտի Աշոտ Դուլյանի անվան հ. 2 հիմնական դպրոցի ուսուցչական կազմը շնորհավորում է սիրված և հարգված մաթեմատիկայի ուսուցչուհի Լիլիա Պողոսյանին կեսդարյա հոբելյանի առիթով:

Միշտ համեստ, միշտ ճշտապահ, մեծ պատասխանատվությամբ, հեզ, յուրահատուկ նրբազգաց վերաբերմունքով շուրջ 25 տարի մեր աշակերտներին ուղեկցում եք մաթեմատիկայի զարմանահրաշ աշխարհը: Անգնահատելի է Ձեր նվիրումն ու սերը, որոնք մասնագիտական բարձր որակների հետ մեկտեղ ամբողջացնում են Ձեր կերպարը, հաղորդում նրան անմոռանալի փայլ, որն անցնելի է հետք է թողնում աշակերտների հետագա կյանքում:

Գալիլեո Գալիլեյն ասել է. «Տիեզերքը հնարավոր չէ կարդալ, քանի դեռ մենք չենք սովորել լեզուն, որով այն գրված է: Իսկ այն գրված է մաթեմատիկական լեզվով, առանց որի մարդը խճճվում է մութ լաբիրինթոսում»:

Մեր շատ հարգելի, սիրված ուսուցչուհի, հմուտ մասնագետ ու լավ ընկերուհի Լիլիա Պողոսյան, թող աշակերտները գնահատեն Ձեր նվիրումն ու արդարացնեն սպասումները, կարողանան Ձեր ուսուցանած գիտելիքների շնորհիվ հեշտությամբ կողմնորոշվել ցանկացած լաբիրինթոսում, և Ձեր կրթած սերունդը նոր հայտնագործություններով աչքի ընկնի՝ ի նպաստ Արցախի աշխարհի շենացման:

Ձեզ բեղմնավոր ու երկար տարիների շնորհակալ աշխատանք ենք մաղթում:

Ստեփանակերտի հ. 2 հիմնական դպրոցի ուսուցչական հանրույթ

ԵՐԲ ՈՒՍՈՒՑԻՉ ԵՍ ՈՉ ՄԻԱՅՆ ԴԱՍԱՐԱՆՈՒՄ



Նոր բան ասած չեմ լինի, եթե ասեմ, որ ուսուցիչները վիթխարի ներգործություն և անցնելի հետագիծ ունեն մեր կյանքում: Դեռ մեր մանկության օրերից նրանք աննկատ, անտեսանելի թելերով հյուսվում են մեր ճակատագրի հենքին, մեր կյանքի նավն առաջ տանող հիմնականախի: Երբեմն գիտակցված, երբեմն անգիտակցից մղումով նրանք ուղղորդում են մեզ մեր կյանքի ճանապարհին՝ վեր կամ վար ընթացող նրա հետագծին թողնելով լուսավոր առկայություններ: Ու ցանկացած պահի, երբ թվում է, թե կարող ես խեղդվել տիեզերական ամենակուլ խավարի գեհնում, երբ թվում է, թե ամեն ինչ վերջացած է, բավական է մի հետադարձ հայացք նետել, և... այդ առկայություններն իրենց կուրացուցիչ լույսով հաճելիորեն ծակծկում են աչքերիդ տարտանը, խոտուտ տալիս ցավից տնքացող հոգի... Ու տեղի է ունենում սովորական հրաշքը: Քեզնից անկախ, որպես ինքնաբերական անփոխարինելի, հնագույն ու փորձված սպեղանի, հազարերորդ անգամ շուրթերիդ արանքից աղոթքի պես դուրս են պրծնում այն գործարար կախարհաբառերը, այն հնայախոսքը, առանց որի ոչ միայն ապրել, այլ անգամ մեռնել չի լինի:

Զգայուն մարդու ու հայի ճակատագրով բաբախող սրտով ուսուցչուհի Ձինախիզա Արզումանյան: Ուսուցչի անխոնջ տարեգրությունը գնահատելը աշակերտների ու գործընկերների խնդիրն է:

Ծնվել է 1961 թվականի հունվարի 3-ին Ժդանովի շրջանի Թագաքենո գյուղում: 1968 թվականին ընդունվել է 1978-ին ավարտել է Թագաքենոյի միջնակարգ դպրոցը, ապա մեկ տարի աշխատել արտադրությունում: 1979 թվականին ընդունվել է Շուշիի մանկավարժական ուսումնարանը, որն ավարտել է 1982-ին: 1982թ. աշխատել է Թագաքենոյի միջնակարգ դպրոցում՝ որպես դասվար: Մանկավարժական աշխատանքին զուգահեռ շարունակել է ուսումը:

1983 թվականին ընդունվել է Ստեփանակերտի մանկավարժական ինստիտուտը, որն ավարտել է 1988-ին:

1988թ. Արցախյան շարժման հետևանքով տեղափոխվել են Մարտունու շրջանի ճարտար գյուղ, որտեղ մինչև 1992 թվականն աշխատել է Դուզե ճարտարի միջնակարգ դպրոցում:

1992-1998թթ. աշխատել է ՀՀ Նախրիի շրջանի (այժմ՝ Կոտայքի մարզ) Բանավանի ութամյա դպրոցում, չորս տարի եղել է նույն դպրոցի ուսումնական գծով փոխտնօրենը: 1998 թվականի սեպտեմբերին վերադարձել և կրկին աշխատանքի է անցել Դուզե ճարտարի դպրոցում:

1999թ. օգոստոս ամսին մասնակցել է Հայոց եկեղեցու պատմություն առարկայի վերապատրաստման դասընթացներին և այդ ժամանակից մինչ օրս դասավանդում է ՀԵՊ առարկան: Համատեղությամբ աշխատել է նաև ճարտարի Հ. Զարությունյանի անվան հ. 3 դպրոցում:

2019-2020 ուսումնական տարում նշանակվել է ճարտարի Արա Ավանեսյանի անվան հ. 2 հիմնական դպրոցի ուսումնական գծով փոխտնօրեն, իսկ 2020-2021 ուսումնական տարվա դեկտեմբերին՝ նույն դպրոցի տնօրենի պաշտոնակատար:

Դժվարին ու պատասխանատու է մանկավարժի աշխատանքը: Էլ ավելի դժվար է դպրոց դեկավարելը, հատկապես մեր օրերում, երբ բարոյական ու հոգևոր արժեքների վերաբժանում է տեղի ունենում, և սոցիալական հակասություններն իրենց խոր ազդեցությունն են թողնում նաև կրթության ու մշակույթի զարգացման գործընթացի վրա: Սակայն, առաջնորդվելով ուսուցչի կերպարի անաղարտ պահելու բարոյականությամբ, Ձինախիզա Արզումանյանը տասնամյակներ է, ինչ դպրոցը դարձրել է ոչ թե զուտ աշխատավայր, այլ իսկապես օջախ, որտեղ կրթվում է վաղվա սերունդը:

Զ. Արզումանյանի աշակերտները տարիներ շարունակ ՀԵՊ առարկայի օլիմպիադաներում զբաղեցրել են առաջնակարգ հորիզոնականներ՝ բարձր պահելով դպրոցի պատիվը: Նա մի քանի անգամ կազմակերպել է խմբային մկրտություններ՝ Քրիստոսի գավակ դարձնելով դպրոցի աշակերտներին:

Այսօրվա պես են հիշում ուսուցչուհու դասաժամերը, որոնք հավատով ու հույսով էին լցված: Չեք հավատա, բայց ինձ համար այդ 45 րոպեն մի անբողջ կյանք էր, որովհետև լուսն էի Աստծո խոսքը, ուսումնասիրում Աստվածաշունչը: Իսկ ամեն դասաժամ ան-

պայման աղոթքով էին սկսում. պարտադիր պայման էր: Իմ ու համադասարանցիներին հուշերում անցնելի են այն պահերը, երբ ՀԵՊ դասաժամին շարականներ էին երգում, աղոթում, հավատում, ու այդ հավատը մինչև հիմա ուղեկցում է մեզ: Կարծում եմ՝ ողջ կյանքի ընթացքում կուղեկցի, որովհետև սերտել ենք մի ուսուցչի դաս, որն ամբողջովին սեր ու նվիրում է իր կերպարով: Ով չի սիրում պարզապես խոսել, այլ ամեն խոսք հավասարակշիռ ու կարևոր է: Երբ նրա ամեն խոսք դառնում է հոգու բանաձև ու սահմանում, զգացմունքների չափազանց գունդ ներկայանալ՝ ծանոթ ու անծանոթ մարդուն, մանավանդ հայ մարդուն հարազատ ու հասկանալի երանգներով, այդ ժամ պարզ է դառնում ուսուցչի իր կերպարը:

Բառերը քիչ են, ու դյուրին չէ կարճ ներկայացնել նրա մանկավարժական գործունեությունը: Մանկավարժ, որը գիտի՝ ինչ է անում, երբ է անում և ինչի համար է անում:

Քանի՞ սերունդ է դաստիարակվել նրա հայրենաշունչ, հայրենապաշտ, Քրիստոսապաշտ խոսքով, քանի՞ հայ զինվոր է նրա սովորեցրած աղոթքը շուրթերին, իսկ խաչը կրծքին պայքարել թշնամու դեմ՝ հանուն ներկայի, հանուն ազգային դիմագծի ու հավատքի պահպանման, հանուն խաչի ու «Հայր մեր»-ի: Իր սովորեցրած աղոթքի:

Մեր սերունդը քրիստոնեական դաստիարակություն է ստացել, քանի որ Հայոց եկեղեցու պատմության մեր ուսուցչուհին մինչև հոգու խորքը իսկական հայ քրիստոնյա է: Անսահման սիրառատ, բարի ու մեծ սրտի տեր անձնավորություն, որն անկեղծորեն սիրում է այն ամենը, ինչ Աստված է ստեղծել: Իսկ ես այնքան եմ շնորհակալ Աստծուն, որ ինձ համար ստեղծել է նման հորաբույր, որը եղել է իմ ուսուցչուհին, խորհրդատուն, ընկերը... Հիմա էլ: Ուղղակի ես էլ չեմ մտի դպրոցական մտադրանքն ու լսի դասերը, բայց ինչ ունեմ՝ կպահեմ, որովհետև ինձ համար մեծ արժեք է:

Մարդիկ կան, որոնք ծնվել են բարությամբ աշխարհի ներդաշնակությունը պահելու: Մարդիկ կան, որ այս աշխարհի պահպանումը հրեշտակի առաքելությամբ են գալիս: Այդպիսին է հենց ուսուցչուհին այս:

Շնորհակալություն, ուսուցչուհի... Եվ իմացիր, որ այս շնորհակալության մեջ իմ տասներկու տարիների ու գալիք կյանքի երախտագիտությունն է:

Հավերժ քո աշակերտ՝ ԿՈՎԱ ԱՐԶՈՒՄԱՆՅԱՆ

ԽՈՍԸ ԵՐԱՍՏԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՇՆՈՐՀԱՎՈՐԱՆԵՐ



Մեր երկար տարիների սիրելի գործընկեր, մեր լավ ընկերուհի, երկի ոչ դու, ոչ էլ մենք չիմացանք, չզգացինք, թե օրերն ինչպես դարձան ամիսներ ու տարիներ, և թե ինչպես երիտասարդ, ավյուրով լեցուն, գեղեցկուհի մեր Գայանեն՝ երկար տարիների մանկավարժն ու գրադարանի վարիչը, այսօր բոլորեց իր 50- ամյա հոբելյանը:

Համարձակ, բայց և համեստ, թվում է՝ բնույթով սուր, բայց և մեծահոգի, ճշտապահ, պատասխանատվությամբ լեցուն աշխատող, երեք զավակների հոգատար մայր, մեր սիրելի՛ Գայանե, նաև քո ներկայությամբ է շերմանում դպրոցի՝ մշտական եռուզեղի մեջ գտնվող տաք անկյուններից մեկը՝ մեր գրադարանը:

Շնորհավորում ենք՝ մեծ սրտով, մեծ սիրով ու ամենից բարի մաղթանքներով...

Թող կյանքը երկար-երկար խաղաղ տարիներով շարունակվի, մշտապես բարձր տրամադրությամբ մտնես հարազատ կրթօջախի շենից, քեզնով, բոլորիս համար շատ հաճելի քո ներկայությամբ լցնես քո աշխատանքային միջավայրը քո և հարյուրավոր մեր սաների, մանկավարժների առաջ մշտապես բաց մեր հարազատ գրադարանը: Իրականացում և բարի հանգրվաններ ենք ցանկանում քո մայրական երազանքներին...

Լինես քաջամոռ, պինդ ու ամուր քո բնավորությամբ՝ երջանիկ, և ուրախ պահերիդ վաստակը թող առատ լինի թե՛ աշխատանքում, թե՛ բեզ հավատարիմ աշխատանքային միջավայրում և թե՛ ընտանեկան հարկի ներքո...

Սիրելի՛ Գայանե Կայան, քո այս լեցուն ու գեղեցիկ տարիքը թող ամեն լավի ու ամենից բարիի սկիզբը դառնա...

Ստեփանակերտի Ա. Դուլյանի անվան հ. 2 հիմնական դպրոցի մանկավարժական հանրույթ

ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՈՒՍՈՒՑՉԻՆ

ՖՈՒՆԿՅԱՆՆԵՐԻ ՀԱՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄԸ ՀԱՎԱՍԱՐՈՒՄՆԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ԺԱՄԱՆԱԿ

Մաթեմատիկայի ուսուցման գործընթացում կարևոր նշանակություն ունի այնպիսի իրավիճակների ստեղծումը, որոնք որոշ կողմերով անձանք են սովորողներին և պահանջում են ոչ ստանդարտ մոտեցումներ: Այդպիսի իրավիճակներ կարող են ստեղծվել նաև օգնություն են սովորողներին կատարել վերլուծություններ, կապեր գտնել տարբեր թեմաներից ստացած գիտելիքների միջև, ցուցաբերել ստեղծագործական մոտեցում: Այդ նպատակին են ծառայում այնպիսի հավասարումներ ու անհավասարումները, որոնց լուծման համար հարկավոր է օգտագործել ֆունկցիայի որոշման տիրույթի գաղափարը, գրաֆիկը (գրաֆիկական լուծում), ածանցյալը, մոնոտոնությունը, սահմանափակությունը և այլն:

Կան խնդիրները, որոնք չեն լուծվում ավանդական մեթոդներով և ձևափոխություններով: Դրանց անվանում են ոչ ստանդարտ խնդիրներ: Նշենք, որ չնայած ոչ ստանդարտ լինելուն, այդպիսի խնդիրները դարձնում են ծրագրերից դուրս չեն և կարող են լուծվել դարձյալական ծրագրերի շրջանակներում: Մաթեմատիկական օլիմպիադաներում հաճախ առաջարկում են խնդիրներ, որոնց լուծումները պահանջում են սկզբունքորեն նոր մոտեցումներ, այնպես որ, սպառել այդպիսի խնդիրների բոլոր տիպերը՝ պարզապես անհնար է: Սակայն հնարավոր է այդպիսի խնդիրների լուծման փորձ կուտակել, որն անշուշտ կօգնի սմանատիկ խնդիրներ համոզիչալիս անակնկալի չզալ, խուճապի չմատնվել: Ֆունկցիայի հատկություններն ակտիվորեն օգտագործվում են խնդիրների լուծման մեջ:

Աշխատանքի նպատակն է ուսումնասիրել հավասարությունների և անհավասարությունների լուծման որոշ մեթոդներ, հենված ֆունկցիոնալ մեթոդի վրա, բացահայտել ֆունկցիոնալ մեթոդի դերը այնպիսի խնդիրների լուծման դեպքում, որոնք այլ մեթոդներով լուծել հնարանոր չէ, ցույց տալ, որ մի շարք խնդիրներ կարելի է լուծել տարբեր եղանակներով, սակայն առավել ռացիոնալ ֆունկցիոնալ մեթոդն է, ցույց տալ այս մեթոդի կիրառումը մաթեմատիկայի դպրոցական դասընթացում:

Ստացված արդյունքները կարող են օգտագործվել մաթեմատիկայի դասերին, ֆակուլտատիվ պարապմունքների ժամանակ, բուհերի ընդունելության քննություններին պատրաստվելիս, աշակերտների հետ անհատական պարապմունքների ժամանակ և այլն:

1. Ֆունկցիաների որոշման տիրույթի օգտագործումը.

Հավասարման (անհավասարման) լուծումը սովորաբար սկսում են թույլատրելի արժեքների բազմության գտնումից, որն իրենից ներկայացնում է հավասարման (անհավասարման) մեջ մտնող ֆունկցիաների որոշման տիրույթների հատումը:

**Սահմանում:** Հավասարման (կամ ֆունկցիայի) թույլատրելի արժեքների բազմություն (կրճատ թԱԲ) անվանում են անհայտի այն արժեքների բազմությունը, որոնց համար հավասարման ձախ և աջ մասերը միաժամանակ իմաստ ունեն:

ԹԱԲ-ը օգտագործելով հավասարումների լուծման ընթացքը հետևյալն է:

Որոշել հավասարումների թԱԲ-ը:

1. Եթե որոշման տիրույթը վերջավոր է, ապա ստուգել, թե արդյո՞ք այդ թվերը բավարարում են հավասարմանը (անհավասարմանը),

2. Եթե որոշման տիրույթը դատարկ է, ապա եզրակացրեք, որ հավասարումը (անհավասարումը) լուծում չունի

3. Եթե որոշման տիրույթը միջակայք է, ապա անհրաժեշտ է հետազոտել հավասարմանը (անհավասարմանը), բավարարող ֆունկցիան:

Այս հետազոտությունները կարող են հանգեցնել անմիջապես պատասխանին կամ լրացուցիչ ձևափոխման՝ ստանալով տվյալ հավասարմանը համարժեք հավասարում: Ստացված հավասարման հետագա լուծումը հնարավոր է կամ համարժեքության տեսության կիրառմամբ, կամ ֆունկցիոնալ մոտեցմամբ:

Երբեմն հավասարման որոշման տիրույթի (ԹԱԲ) իմացությունը հնարավորություն է տալիս ապացուցել, որ տրված հավասարումը (անհավասարումը) լուծում չունի, երբեմն էլ՝ ԹԱԲ-ի թվերի անմիջական տեղադրմամբ գտնել հավասարման (անհավասարման) լուծումը:

**Դիտողություններ:**

1. Հավասարումների լուծման ժամանակ պարտադիր չէ գտնել ԹԱԲ-ը (իր որոշման բարդության պատճառով), երբեմն ավելի հեշտ է անցնել այդ հավասարումների քննությանը և ստուգել գտնված արմատները:

2. Հավասարումները լուծելիս կարելի է ԹԱԲ-ը չորոշել, այլ հավասարումները լուծել նրան համարժեք հավասարումների համակարգին անցման միջոցով, որտեղ հավասարումներից մեկը լուծում չունի, կամ հավասարումներից մեկի լուծման իմացությունը պարզեցնում է դրա լուծումը:

**Սահմանում:** Հավասարման (կամ ֆունկցիայի) թույլատրելի արժեքների բազմություն (կրճատ ԹԱԲ) անվանում են անհայտի այն արժեքների բազմությունը, որոնց համար հավասարման ձախ և աջ մասերը միաժամանակ իմաստ ունեն:

ԹԱԲ-ը օգտագործելով հավասարումների լուծման ընթացքը հետևյալն է:

Որոշել հավասարումների ԹԱԲ-ը:

1. Եթե որոշման տիրույթը վերջավոր է, ապա ստուգել, թե արդյո՞ք այդ թվերը բավարարում են հավասարմանը (անհավասարմանը),

2. Եթե որոշման տիրույթը դատարկ է, ապա եզրակացրեք, որ հավասարումը (անհավասարումը) լուծում չունի

3. Եթե որոշման տիրույթը միջակայք է, ապա անհրաժեշտ է հետազոտել հավասարմանը (անհավասարմանը), բավարարող ֆունկցիան:

Այս հետազոտությունները կարող են հանգեցնել անմիջապես պատասխանին, կամ լրացուցիչ ձևափոխման, ստանալով տվյալ հավասարմանը համարժեք հավասարում: Ստացված հավասարման հետագա լուծումը հնարավոր է կամ համարժեքության տեսության կիրառմամբ կամ ֆունկցիոնալ մոտեցմամբ:

Երբեմն հավասարման որոշման տիրույթի (ԹԱԲ) իմացությունը հնարավորություն է տալիս ապացուցել, որ տրված հավասարումը (անհավասարումը) լուծում չունի, երբեմն էլ՝ ԹԱԲ-ի թվերի անմիջական տեղադրմամբ գտնել հավասարման (անհավասարման) լուծումը:

**Դիտողություններ:**

1. Հավասարումների լուծման ժամանակ պարտադիր չէ գտնել ԹԱԲ-ը (իր որոշման բարդության պատճառով), երբեմն ավելի հեշտ է անցնել այդ

հավասարումների քննությանը և ստուգել գտնված արմատները,

2. Հավասարումները լուծելիս կարելի է ԹԱԲ-ը չորոշել, այլ հավասարումները լուծել նրան համարժեք հավասարումների համակարգին անցման միջոցով, որտեղ հավասարումներից մեկը լուծում չունի, կամ հավասարումներից մեկի լուծման իմացությունը պարզեցնում է դրա լուծումը:

**Սահմանում:**  $y=f(x)$  ֆունկցիայի որոշման տիրույթը կոչվում է  $x$  փոփոխականի այն արժեքները, որոնց դեպքում ֆունկցիան իմաստ ունի:

Դիցուք տրված է  $f(x)=g(x)$  հավասարումը, որտեղ  $f(x)$ -ը և  $g(x)$ -ը տարրական ֆունկցիաներ են, որոշված  $D_1$  և  $D_2$  բազմություններում: Այդ դեպքում հավասարման թույլատրելի արժեքները  $D$  բազմությունը մի բազմություն է, որը բաղկացած  $x$ -ի այն արժեքներից, որոնք միաժամանակ պատկանում են երկու բազմություններին, այսինքն  $D=D_1 \cap D_2$ : Հասկանալի է, որ եթե  $D$  բազմությունը դատարկ է՝  $D=\emptyset$ , ապա հավասարումը լուծում չունի:

Անդրադառնանք այն հավասարումների լուծմանը, որոնց լուծումը բացահայտում է ֆունկցիայի նշված հատկությունների կիրառումը:

**Օրինակ 1:** Լուծել հավասարումը.

$$\log_7 \frac{x-5}{3-x} + \log_3 |x-3| = \sqrt{\frac{x-4}{3-x}} + \sqrt{9x-x^2-20}$$

**Լուծում:** Գտնենք հավասարման թույլատրելի արժեքների բազմությունը: Այն հանդիսանում է հետևյալ համակարգի լուծումը.

$$\begin{cases} \frac{x-5}{3-x} > 0 \\ |x-3| \neq 0 \\ \frac{x-4}{3-x} \geq 0 \\ 9x-x^2-20 \geq 0 \end{cases} \Leftrightarrow \begin{cases} x \in (3;5) \\ x \in (-\infty;3) \cup (3;\infty) \\ x \in (3;4] \\ x \in [4;5] \end{cases} \Leftrightarrow x=4$$

Հավասարման ԹԱԲ-ը բաղկացած է մեկ թվից՝  $D=\{4\}$ : Ստուգենք  $x=4$  արժեքը լուծում է, թե՛ ոչ: Ստուգում.

$$\log_7 1 + \log_3 1 = \sqrt{\frac{4-4}{3-4}} + \sqrt{36-16-20} \Leftrightarrow 0=0$$

**Պատ.**  $x=4$ :

**Օրինակ 2:** Լուծել հավասարումը.

$$\sqrt{3x-x^2} + \sqrt{x^2-5x^2} = x$$

**Լուծում:** Գտնենք հավասարման աջ և ձախ մասերում ֆունկցիաների որոշման տիրույթների հատումը:

$$D_1(\sqrt{3x-x^2}) = [0;3], D_2(\sqrt{x^2-5x^2}) = (-\infty;0] \cup [5;\infty)$$

$$D = D_1 \cap D_2(\sqrt{3x-x^2}) \cap D_2(\sqrt{x^2-5x^2}) = \{0\}$$

Հավասարման ձախ մասը ոչ բացասական է, հետևաբար աջ մասը նույնպես պետք է լինի ոչ բացասական: Դրա համար անհրաժեշտ է դիտարկել  $D$  բազմության հատումը  $x \geq 0$  անհավասարման լուծումների  $A=[0;\infty)$  բազմության հետ: Ուստի, բավական է հավասարումը դիտարկել  $D \cap A = \{0\}$  բազմությունում: Համոզվում ենք, որ  $x=0$  լուծում է:

**Պատ.**  $x=0$ :

**Օրինակ 3:** Լուծել հավասարումը

$$\sqrt{(3^x-2)^2} + \sqrt{(3^x-9)(3^x-1)} = 3^x - 2$$

**Լուծում:** Տրված հավասարումը համարժեք է

$$|3^x - 2| + \sqrt{(3^x - 9)(3^x - 1)} = 3^x - 2$$

հավասարմանը: Քանի որ, հավասարման ձախ մասը ոչ բացասական է, ապա աջ մասը ևս պետք է լինի ոչ բացասական՝

$$3^x - 2 \geq 0 \Leftrightarrow x \geq \log_3 2$$

$$3^x - 2 \geq 0 \Rightarrow |3^x - 2| = 3^x - 2$$

Հավասարումը կընդունի հետևյալ տեսքը.

$$3^x - 2 + \sqrt{(3^x - 9)(3^x - 1)} = 3^x - 2$$

$$\sqrt{(3^x - 9)(3^x - 1)} = 0 \Rightarrow \begin{cases} 3^x - 9 = 0 \\ 3^x - 1 = 0 \end{cases} \Leftrightarrow \begin{cases} x = 2 \\ x = 0 \end{cases}$$

Քանի որ  $\log_3 2 > 0$  ապա  $x=0$  հավասարման արմատ չէ: Այսպիսով, հավասարման լուծում է հանդիսանում  $x=2$ :


**Պատ.**  $x=2$ :

(Շարունակելի)

ՄՏԵՐԾԱԳՈՐԾՈՂ ՄԱՆԿԱՎԱՐԺՆԵՐ

Վահան ՀԱԿՈՐՅԱՆ

ՆՈՐ ԲԱՆԱՄՏԵՂԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ



Ինչ-որ բան է ասում Մայրամուտը ծորին, Սարը կապույտ մութի Բույր է քաղել, Օրը սևացել է, Թե՞ թախծում է խորին: Ծվարում են անդունդ, ծառ ու բաղեղ: Դու նստել ես ինձ մոտ, Ձեռքս գիրկդ առել, Էությունդ խառնած իմ մտքերին, Կներես ինձ, սակայն Բնավ այդ ոչ թե ես, Իմ լքված լինելն է քեզ մտերիմ...

\*\*\* Իմ լռություն, Մի օր եթե Դու դեմ-դիմաց Կանգնես տրտում, Եվ ընկնես երազի պես, Մտերմանա էություն, Պատահաբար սփոփեմ քեզ, Չնեղանաս, Որ գրկեմ քեզ...

Չհեռանաս, որ Անցյալս չի փնտրում քեզ Ու չի ձգտում անմեղանալ Իմ տխրության տարածքի պես, Ուր միամիտ մանկան նման Գտել եմ քեզ, Դարձել մոլոր: Չգարմանաս, իմ լռություն:

\*\*\* Գարուն է վառ, Յոդն է հասուն, Յովն է փչում Կանաց-կամաց:

Քարն է անգամ Ազատ շնչում, Բլուրները՝ Կանաց-կանաց...

Տերևները Ընկան հողին, Յայտնի չէ, թե Երբ կգարթեն:

Նրանց համար Գարուն չկա, Նրանց համար Ուշ է արդեն...

\*\*\* Գնա ու գնա. Երկի արդեն Ետ չես դառնալու, Երբ արդեն իրավ Կորցրել եմ քեզ... Այս կյանքում, ավա՜ր Միշտ անմեղ է նա, Ով ինքն իր մեջ է Գտնում իր թերին... Յանդերը լուռ են, Արևը՝ ցասկոտ, Ինչ-որ բան կյարծես

Քո մեջ անդուր է, Բայց լավ է, որ կա Քո հոգին թախծոտ...

\*\*\* Օրը նայում է Ինքն իր տարածքին, Ձորը կապույտ է, Ինչպես պարզ լեղակ: Ես լուռ տրվել եմ Իմ չարչարանքին, Ուր հաստատվում եմ Երգվելուս տեղակ...

\*\*\* Այս մարդը իր սուրբ Յոդից է գրկվել Ու ոչինչ չունի Յպարտանալու: Ամեն ինչ թողել՝ Իր ցավն է գրկել Անգամ տեղ չունի Այսօր գնալու:

\*\*\* Իմ հոգում այսօր Օրենքն է մորթվել, Ցավս հանել եմ Ստի կալանքից, Չկա խինդ, խոկում, Ամեն ինչ խորթ է, Ես ոտից գլուխ Դժգոհ եմ կյանքից: Ամենությունն է Մեղսոտ բամբասում, Միտքս վիճում է Ձգացմունքիս հետ, Երբ լռությունը Դառնում է ցասում Տառապանքիդ հետ...

ԿՅԱՆՔՍ՝ ՈՒՍՈՒՋՈՒԹՅՈՒՆ

Կյանքում չդարձա Ես քաղաքագետ, Ոչ ճարտարապետ, Ոչ ճարտար-վարպետ՝ Լավ, արհեստավարժ: Յոգու մղումով Դարձա մանկավարժ: Ուսուցչուհի մայրս Դարձավ մարզիչս, Միաժամանակ Գործեց գրիչս: Ավյունս դարձավ Յորդառատ մի գետ, Կյանքս կապեցի Մերունդների հետ: Միրեցի գործս, Կուտակեց փորձս... Դպրոցը դարձավ Աշխատավայրս Եվ դաշտավայրս, Եվ Ավարայրս... Բացվող օրվա հետ Շտապեցի դպրոց, Օջախ սուրբ-սրբոց, Ժամանակի հետ Դարձա բազմափորձ: Երբ ամեն անգամ Դասարան մտա, Եվ սրտեր տանող Ծավիղներ գտա, Ես իմ սամերի՝ Գարնանահասակ Եվ իմ մեջ զգացի Մի նոր ջերմ հոսանք: Կարծես կապտաթույր Բարձունքներ հասանք, Աշխարհ՝ գունազեղ,

Մեր ճամփան անշեղ, Եղանք ամեն տեղ, Յասանք և Դսեղ, Ուր հանդիպեցինք Յամբոյին աղքատ, Նաև հուսահատ Փոքրիկ Գիքորին: Լավ ծանոթացանք Ողջ Լոռու ծորին, Անբախտ Անուշին, Նաև՝ Մարոյին: Եվ Աբովյանի Սիրած Քանաքեռ, Իսահակյանի Քառագագաթ լեռ՝ Արագած ալմաստ: Բացահայտեցի Յարյուրավոր փաստ, Յասա Մասիս լեռ, Որ գերված է դեռ, Այցի գնացինք Նաև Գանձասար, Ամարասի վանք: Չխնայելով ջանք՝ Մայրենի լեզուն Լայնբով ու խորբով Սկսեցինք սերտել Եվ մտքի ամրոց, Ամուր Բերդ կերտել: Ուղևորվեցինք Ստեփանակերտ էլ, Յիմափուրջ Շուշի, Այսօր ամեն ինչ Փոխվել է հուշի... Ու երբ մտովի Արդ թևում եմ ետ՝ Դարձած խոհուն, լուրջ,

Մեր երկրի համար Պիտանի անձեր, Կուտակած հոգու Անսպառ գանձեր Դեպի մայրենին Իրենց սիրով տաք: Ավա՜ր, ոճանք Դարձան նահատակ, Բայց ապրողների Սրտերում միշտ կաք: Սաներ, իմ սաներ, Դուք իմ ծեր սրտի Բուժիչ սպեղանի: Ամեն օր, թեքված Գրասեղանիս, Ավագ տարիքում Շարունակում եմ Գործս մշակի: Յոգևոր դաշտում, Ձեզ վերհիշելով, Սիրում ու պաշտում: Շատերը ընկան Մեր Գոյամարտում... Ոճանք տքնում եմ Բեղուն արտերում, Ոլորտներում այլ: Ուզում եմ ես տալ Ձեզ ևս մի դաս, Ամուր պահեք Մեր Արցախաբերդը, Յաղթական լինի Թող միշտ ծեր երբը...

Թովիկ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ք. Ճարպար

Մարզական

ԱՎՈՒՄԲԱՅԻՆ ՄՐՑԱՆԱՐ ԱՎԱՆՂԱԿԱՆ ԿԱՐԱՏԵ ԴՈ ՄԱՐՏԱՐԿԵՍՏՈՎ

Ստեփանակերտում շարունակվում են մարզական միջոցառումները: Պատերազմի ու հետպատերազմյան շրջանի դժվարությունների հետ կապված դադարից հետո մարզական ակտիվ կյանքն իր հունի մեջ է ընկնում ու գնալով ավելի մեծ թափ է ստանում: Արցախցու ոգուն հարիր չէ պարտությունն ընդունել որպես դատավճիռ: Ապրտում ենք այն սկզբունքն է գործում, որ պարտությունը դեռ վերջ չէ, այլ հնարավորություն է՝ մտածել, պայքարել եւ ուղղել սխալները:

Արցախի ազգային ավանդական Կարատե դո Ֆեդերացիայի սաները լավ մարզավիճակ ունեն եւ, շարունակելով հետեւել մարտարվեստի սկզբունքներին, պահպանում են առողջ ապրելակերպ, մարմնի եւ հոգու ներդաշնակություն:

Մարտարվեստի իրական հետնորդներին վայել կարգապահությունն ու ոգու հզորությունը ցատկուն արտահայտվեցին մայիսի 2-ին Ստեփանակերտի հ. 6 դպրոցի մարզադահլիճում կայացած՝ Արցախի ազգային ավանդական Կարատե դո Ֆեդերացիայի ակումբային առաջնության ժամանակ ցուցադրվող անհատական կատա եւ անհատական կումիտե մարզական եւ մարտական կոմպլեքսներ կատարելիս:

Մրցաշարին մասնակցում էր 53 մարզիկ ֆեդերացիայի բոլոր մասնաճյուղերից:

Ընդգրկված էին մարզիկներ՝ սկսած 7-15 տարեկան տարիքային խմբերից: Մրցավարական կազմը համալրում էին ֆեդերացիայի մարզիչներ Նարեկ Առաքելյանը, Անդրեյ Պետրոսյանը, Տիգրան Գեւորգյանը, Տիգրան Յակոբյանը: Ֆեդերացիայի նախագահ եւ մարզիչ Արամ Գեւորգյանը ներկայացրեց, որ



մրցաշարը նպատակ ունի վերհանել լավագույն տեխնիկա ցուցադրող մարզիկներին՝ մայիսի 15-ին կայանալիք ՅՅ առաջնությանը մասնակցելու համար: Բացի դրանից, մրցադորդ դուրս եկած մարզիկները հնարավորություն են ունենում դրսևերել իրենց մարտական եւ մարզական հնարավորությունները, կիրառել այն հմտությունները, որոնք ստա-

նում են մարզիկ կողմից պարապմունք առ պարապմունք: Մրցավարները հետեւում են նրանց, երեսան համում յուրաքանչյուր մարզիկի հնարավորությունները, գնահատում եւ պարապմունքների ընթացքում շտկում հայտնաբերված թերությունները:

Ավանդական կարատեում հաղթանակի հասնելու գերագույն կետը մրցագործում մրցակցին հաղթելը չէ, այլ ինքն իրեն հաղթելը՝ մարտարվեստի սկզբունքները պահպանելով: Ֆեդերացիայի նախագահի գնահատմամբ՝ մրցաշարին մասնակցող բոլոր մարզիկները, այդ թվում՝ նրանց ծնողները, պատերազմից հետո գտնվում են հոգեպես կայուն վիճակում: Մարզիկների թիվը վերջին ամիսներին սկսել է աճել: Իրական մարտարվեստը մարզիկներին սովորեցնում է իրենց մեջ զարգացնել ուժեղ կամային գծեր. լինել կարգապահ, հավասարակշռված եւ պահպանել այդ հատկությունները մույնիսկ դժվարին սթրեսային իրավիճակներում: Ա. Գեւորգյանի հավաստմամբ՝ մարզիկը, որը պարապել է ավանդական կարատե գոնե 10 տարի, ունի այդ հատկությունները: Ինչքան շատ ես պարապում՝ ընկղմվելով մարտարվեստի բարդ եւ խորհրդավոր աշխարհ, այնքան ավելի եմ մեծանում ըստ անհրաժեշտության դա օգտագործելու հնարավորության շրջանակները: Ավանդական կարատե պարապող մար-

զիկները բանիմաց մարզիչների գլխավորությամբ բացահայտում են իրենց ներուժը, ճանաչում են իրենք իրենց եւ սովորում են օգտագործել իրենց ներքին ուժը ոչ միայն մրցաշարերում, այլև կյանքում հանդիպող ամենադժվար իրադրություններում:

Մասնակից մարզիկները ցուցադրեցին մարտարվեստին տիրապետելու բարձր մակարդակ եւ կարողություններ: 25 մարզիկ զբաղեցրեց առաջին տեղ եւ ստացավ ՅՅ-ում կայանալիք առաջին առաջնությանը մասնակցելու հնարավորություն: Մրցանակային առաջին, երկրորդ եւ երրորդ տեղեր գրաված մարզիկները պարգևատրվեցին մեդալներով ու պատվոգրերով: Ապրիլին կայացած ՅՅ մրցաշարում օլիմպիական կարատե մարզաձևով մրցանակային տեղ զբաղեցրած ֆեդերացիայի 7 մարզիկներ «Վալերա Գարդեն» ընկերության կողմից արժանացան ֆինանսական խրախուսման:

Մարտարվեստները արցախցիների համար եղել եւ մնում են ոչ միայն սիրած մարզաձև, այլև դաստիարակության նախընտրելի համակարգ, ինքնաճանաչման եւ ինքնաբացահայտման բացառիկ ուղի: Մեր պարագայում մտավոր եւ ֆիզիկական կոփված, համարժեք մտածողություն ունեցող սերունդ ձեւավորելն ավելի քան անհրաժեշտ է: Յաճախակի կազմակերպվող մրցաշարերն անրապնդում են այն վստահությունը, որ ունենք այդ ներուժը, իսկ ժամանակի ընթացքում նաեւ կսովորենք դա ճիշտ օգտագործել:

Սոնյա ԱՎԱԳՅԱՆ

ԼՈՒՍԱՐԱՐ ԽՄԲԱԳԻՐ՝ Ս. ԽԱՉԱՏՐՅԱՆ Հիմնադիր՝ «Լուսարար» ՓԲԸ Ստեփանակերտ, Յ. Թումանյան փ. 95, 94-38-99, E-mail: gorcert@mail.ru: www.lusarar.info Մեջբերումների եւ փաստական տվյալների ստուգությունն ապահովում են հեղինակները: Թերթը ընթերցողների հետ գրագրություն վարելու պարտավորություն չի ստանձնում: Տպագրվում է Ստեփանակերտի «Դիզակ պլյուս» ՍՊԸ-ում: Ծավալը՝ տպագրական 4 մամուլ: Ստորագրված է տպագրության 17.05.2021թ.:

«Լուսարար» թերթը տարածվում է միայն բաժանորդագրությամբ: